

Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ)** նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)** presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: [info@artsakhib.am](mailto:info@artsakhib.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>


ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ԱՂՈՒԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
Տ. ԵՍԱԹԻ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼԵԱՆՑ

Aghvan Catholicos  
Sir Yesayi Hasan Jalaliants

\*133



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՌՕՏ  
ԱՂՈՒԱՆԻՑ ԵՐԿՐԻ  
An Outline of Aghvan history

Սյրեփանակերտ-2007  
Stepanakert

ԱՂՈՒԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
Տ. ԵՍԱՅԻ ՀԱՄԱՆ-ՋԱԼԱԼԵԱՆՑ  
**Aghvan Catholicos**  
**Sir Yesayi Hasan Jalalians**

**ՊԱՏՄՈՒԹԻՒՆ  
ՀԱՄԱՌՕՏ ԱՂՈՒԱՆԻՑ  
ԵՐԿՐԻ**

An Outline of Aghvan history

ԿՕ. 837

ԱՐՑԱՒԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԳԱՐԱՆ

Սրբեփանակերպ  
«Դիզակ պլյուս»  
2007

**Գիրքը նրադարակման է երաշխավորվել  
Արցախի Թեքեյան մշակութային միության  
նախագահության կողմից**

*Կազմեց՝ Արտո Մարտիրոսյան  
Խմբագիր՝ Մխիթար Գևորգյան*

Աղումնից Կաթողիկոս Տ. Հասան-Ջալալյանց  
Ա-495 Պարմուքիս համառօք Աղումնից երկրի- Սրբկանակերպ:  
«Դիզակ պլուս», 2007. - 224 էջ:

Աշխատությունն ամփոփում է 18-րդ դարի սկզբ-  
ներին հայ և վրաց ժողովուրդների ազատագրական  
պայքարը՝ պարսիկ, թուրք և այլ զավթիչների դեմ, ինչ-  
պես նաև կապերը Ռուսաստանի հետ, Ռուսաստանի  
վարած քաղաքականությունը Անդրկովկասի նկատ-  
մամբ:

Գիրքը օգտակար կլինի պատմության մասնա-  
գետների և, առհասարակ, Արցախի պատմական ան-  
ցյալով հետաքրքրվող ընթերցողների լայն շրջանների  
համար:

**ԳՄԴ 63.3 (2Հ)**

**Գրքի պատրաստումը, նախաբանն ու ծանո-  
թագրությունները՝ Արար Մամվելի Մարտիրոսյանի:**

© Ա. Մարտիրոսյան, 2007թ.

ISBN 978-99941-827-2-5

**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՍԱՅԻ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆՑԻ  
ՃԱՄԱՆԱԿԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԿԸ**

18-րդ դարի առաջին երեսնամյակի հայ ազատագրական շարժ-  
ման ականավոր գործիչներից էր Աղվանից կաթողիկոս Եսայի Հա-  
սան-Ջալալյանցը, ով սերել է 13-րդ դարի նշանավոր պետական,  
ռազմական ու քաղաքական գործիչ, սկզբնաղբյուրներում՝ «Արցա-  
խական աշխարհի ինքնակալ թագավոր» անվանված Հասան Ջա-  
լալ Դուա Վախտանգյանի ազատաբաղձ ու հայրենասեր իշխանա-  
կան տոհմից<sup>1</sup>: Հավատարիմ մնալով անվանի նախնիների լավա-  
զույն ավանդույթներին, նա իր գիտակցական ողջ կյանքն անմնա-  
ցորդ նվիրաբերել է հարազատ ժողովրդի ազատագրության սուրբ  
գործին:

Հարկ է նշել, որ Եսայի Հասան-Ջալալյանցի մասին շատ սուղ  
կենսագրական տվյալներ են հասել մեզ: Հայտնի է նույնիսկ, թե  
երբ է նա ծնվել: Անվանի պատմաբան Վ. Պարսամյանը հավանա-  
կան է համարել 1665-1666 թվականները, ինչը սակայն, ըստ երե-  
տույթին, որեւէ աղբյուրով չի հաստատվել<sup>2</sup>: Պրոֆեսոր Ա. Գ. Առաքե-  
լյանը, ներկայացնելով Եսայի Հասան-Ջալալյանցի կենսագրությու-  
նը, նշել է, որ «Հասանջալալյանների կենտրոնը Վանք կոչված ա-  
վանն է եղել», ինչն ակամա հուշում է Եսայու ծննդավայրը փնտրել  
հենց այդ բնակավայրում<sup>3</sup>: Իսկ Արցախի պատմությանը քաջատե-  
ղյակ պատմաբան Բ. Ուլուբաբյանը, չնշելով որեւէ սկզբնաղբյուր,  
մեկ այլ վարկած է առաջադրել. «[Գանձասարի Երեմիա օրինավոր  
կաթողիկոսի] փոխարենն աթոռակալ նստեց Եսայի Հասան-Ջալա-  
լյանցը, որ կոչվում էր նաև Քոլատակցի»: Հստակեցնելով իր միտ-  
քը, պատմաբանը փակագծեղում շարունակում է. (Սա Հասան-Ջա-  
լալյանների այն ճյուղից էր, որը բնակվում էր Գանձասարին մոտիկ  
Քոլատակ գյուղում (մերձ ի Հակոբա վանք)»<sup>4</sup>: Գանձասարի վանա-

կան համալիրից հարավ (վանքին կից) տարածված գերեզմանոցի տապանաքարերից մեկի վրա արձանագրված է. «ԱՅՍ Է ՅԱՆՉԻՍՏ ՎԷԼԻՉԱՆԻ ՈՐՂԻ ԱՅՏԻՆԻՆ, ՈՐ Է ԵՂՔԱՅՐ ԵՍԱՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ: ԹԻՒՆ: ՈՃԴ:(1721) ԷՐ»: Հրապարակելով այս արձանագրությունը, Բ. Ուլուբաբյանը նշել է, որ կաթողիկոսի հոր անունն «այլուստ հայտնի չէ»<sup>6</sup>: Մինչդեռ Րաֆֆին յուր ժամանակին գրել էր. «[Տասն եւ յոթերորդ դարում] Հասան-Ջալալյան իշխաններից նշանավոր էին երեք եղբայրներ՝ Երեմյա կաթողիկոսը, Վելիջան-բեկ 3-րդը և Մուլքի-բեկը: Երեմյա կաթողիկոսը վախճանվեցավ 1700 թվին: Վելիջան-բեկը վախճանվեցավ 1686 թվին և նրա որդի Եսային Երեմյայի փոխարեն կաթողիկոս դարձավ»<sup>6</sup>: Իսկ մինչ այդ, 1699-1701 թթ. Եսային եղել է Գանձասարի Երեմիա կաթողիկոսի տեղապահը<sup>7</sup>: Դրանից բացի, կարելի է մտածել, որ Այտինին վանքին կից գերեզմանատանն են ամփոփել ոչ միայն կաթողիկոս եղբոր շնորհիվ, այլև, թերևս, այն պատճառով, որ Հասան-Ջալալյանների գերդաստանը բնակվում էր անմիջապես Գանձասարի մոտակա գյուղերից մեկում: Հասան-Ջալալյաններին պատկանող Խաչենի գավառի հանրահայտ հոգևոր կենտրոնում Գանձասարի եկեղեցուն էլ, ըստ երևույթին, նա կրթություն է ստացել: Կռահել կարելի է, որ դա կաթողիկոս հորեղբոր կամքն է եղել և նրա հովանու ներքո էլ Եսային ստացել է ժամանակի համար լավագույն կրթությունը: Այդ հնարավորությունը նրան տվել է Գանձասարի հարուստ մատենադարանը<sup>8</sup>, որտեղ էլ նա հաղորդակից է եղել մեր մատենագիրների երկերին ու նրանցից քաղել հայրենասիրության դասերը: Հետագայում իր արժեքավոր երկի առաջաբանում նա ակնարկել է այդ մասին, դրվատանքով արտահայտվելով բոլոր նրանց մասին, որոնց գրքերից «սովորել» է<sup>9</sup>: Ուրեմն, ելնելով այս հանգամանքից և դատելով նրա գրական ժառանգությունից ու պահպանված վկայություններից, կարելի է պնդել, որ նա իր ժամանակի ամենաուսյալ ու լայն ժամաչման արժանացած

անհատներից էր: Խոսելով Եսայի կաթողիկոսի մասին, Լեոն գրել է. «մի վկայություն է, որ Ղարաբաղի լեռներում էլ, չնայած նրանց դժվարամատչելիության, կարելի էր հայկական աղբյուրներով ստանալ կանոնավոր և բարեկարգ մի դաստիարակություն: Ինչպես երևում է, Գանձասարն ուներ ոչ միայն լավ մատենադարան, այլև կարող ուսուցիչներ»<sup>10</sup>:

Հայտնի է, որ Եսային Աղվանից կաթողիկոս է հռչակվել 1702 թվականին: Սիմեոն Երևանցին նրա մասին գրել է. «Եսայի ոմն անդէն ինքընծայ լինի եւ ցստի կաթուղիկոս յԱղուանիս ի ՌՃԾԱ(1702) թուռջն, թարց գիտութեան եւ հրամանի Նահապետ կաթուղիկոսին մերոյ»<sup>11</sup>: Սիմեոն Երևանցին, թեև գրել է, թե Եսային սկզբում չբարեհաճեց ձեռնադրվել Ս. Էջմիածնում և միայն Նահապետ կաթողիկոսի պահանջով ներկայացավ «ի սուրբ Էջմիածին, յոտս Նահապետին և զինքն ենթադրէ իշխանութեան նորա», բայց երկու հայրապետների ջերմ հանդիպումը, Եսայուն սիրահոժար կաթողիկոս ձեռնադրելը և բոլոր թեմերին ու հոգևոր կենտրոններին նրան խոնարհարար ենթարկվելու և վերջին ժամանակներում Գանձասարի ունեցած պարտքերն ու վնասները հատուցելու մասին կոնդակ տալը փաստում են նրանց լավ փոխհարաբերությունները<sup>12</sup>: Ակնհայտորեն, Եսային, որն ինչպես ստորև կտեսնենք, հեռատես ու նրբակատ քաղաքականություն է որդեգրել, իր առաջնահերթ ձեռնարկումներից է համարել Ս. Էջմիածնի հետ ջերմ հարաբերություններ հաստատելը:

Եսայի կաթողիկոսի ուշագրավ ձեռնարկումներից էր Ռուսաստանի հայերին հասցեագրված օրհնության խոսքը (1702թ. դեկտեմբերի 7-ին)<sup>13</sup>: Այսինքն, Հայ Աղվանքի կաթողիկոսը, ի սկզբանե, հանդես է բերել դիվանագետի փայլուն ինտուիցիա և ձգտել է ոչ միայն իր ազդեցությունը տարածել, այլև փոխհարաբերություններ հաստատել հեռու և մոտիկ հարևանների հետ: Դրա ապացույցներից մեկը կարող է լինել Եսայի Հասան-Ջալալյանցի ուղևորությունը Սպա-

հան և Պարսից Սուլթան Յուսեյն Շահից հրովարտակ ստանալը, որի համաձայն՝ Գանձասարի կաթողիկոսության ենթակայության տակ էին ճանաչվում Ղարաբաղի, Գանձակի, Ջարգիբիլի և Շամախիի թեմերը<sup>14</sup>: «Ջամբոխ» վրա հղում կատարելով, այդ մասին Աշ. Դովհաննիսյանը գրել է. «1699 թվականին Էջմիածնի հրամանով Երեմիան աթոռակից կաթողիկոս է օծում իր եղբորորդի Եսայուն: Երեմիան մեռնում է 1700 թվականին: Նրա տեղը գրավելու համար 300 թունան ծախսելով՝ 1701 թվականին Եսային կաթողիկոսության ռաղամ (հրովարտակ) է ստանում շահից»<sup>15</sup>: Պատելով մեզ հասած վավերագրերից, կարելի է փաստել, որ Եսայի կաթողիկոսի հոգևոր իշխանությունը հոգեհարազատ էր նաև նշված տարածաշրջանների հայությանը, կամ էլ համապատասխան քարոզչական արդյունավետ աշխատանք է տարվել բնակչության շրջանում, ինչը հարուցված է եղել Էջմիածնի հետ ազդեցության համար ծագած վեճերից ու տարածայնություններից: Շիրվանի հայ համայնքի դիմում կաթողիկոս է ճանաչվում Եսայի Դասան-Ջալալյանցը, իսկ Սուրբ Էջմիածնի գերակայությունը մերժվել է<sup>16</sup>: Մի այլ վավերագրում Շիրվանի ու Շաքիի հայերը ոչ միայն հաստատել են Գանձասարի կաթողիկոսությանը իրենց հավատարմությունը, այլև բողոքել. «որք կամին զմեզ ցանկապատ առնել եւ անջատել եւ բաժանել ի նախնի և բուն Աթոռոյն մերոյ, այնպիսի մեք չեմք կամեցողք...» և ապա հայտարարել. «...մեր աթոռն Աղուանից Աթոռն է, որ է սուրբ Գանձասար և մեր կաթողիկոսն Նորին Նստող կաթողիկոսն, որ է այժմս Եսայի կաթողիկոսն»<sup>17</sup>:

Ըստ Պավել Չոբանյանի՝ Եսայի Դասան-Ջալալյանցը Գանձասարի կաթողիկոս էր 1701 թվականից, իսկ 1702թ., Սիմեոն Դ Խոտորաշենցի հակաթոռ կաթողիկոսի մահից հետո, միավորել է Աղվանից պառակտված կաթողիկոսական աթոռը<sup>18</sup>: Այս միտքը հաստատել է նաև Մ. Բարխուտարեանցը. «Սիմեոնի (խոտորաշենցի) մահուամբ (1701թ.) առվայր մի ուրախանում է հասարակութիւնն, որ վերջացաւ

ներքին խռովութիւններն և երկպառակութիւններն, վասն որոյ իւր բոլոր ուշադրութիւնը դարձնում է արտաքին, լափլիզող սուրերի վերայ: Միանում են բոլոր մելիքներն և եիւզբաշիններն, որոշում են կազմել սղնախներ, այն է իւրաքանչիւր մելիք իւր վստահելի ամրոցում ամրանայ իւր ժողովրդով և զօրքով եւ մահու չափ պատերազմելով պահպանել իւր ազատութիւնը, ժողովուրդը և կրօնը... Իսկ գլխաւոր ժողովատեղին էր Գանձասարայ վանքն»<sup>19</sup>: Սակայն այս միավորումն, ըստ երևույթին, ժամանակավոր է եղել, որովհետև Եսայու գահակալության 5-րդ տարում(1707թ.) Ներսես անվամբ մեկը՝ բանադրված Սիմեոն կաթողիկոսի տոհմից, «կաշառօք եւ խաբէութեամբ օծանի կաթողիկոս խոչ և սատան Եսայեայ»<sup>20</sup>: Այդպիսով, Երեմիայի և Սիմեոնի պայքարը փոխանցվել է նրանց ժառանգներին՝ Եսայուն և Ներսեսին, մեծամեծ պարտքերի տակ ձգելով նրանց: Ցավոք նման երևույթներ տեղ են գտել նաև Էջմիածնի կաթողիկոսության մեջ<sup>21</sup>:

Իրադրությունն ավելի է ծանրացել խաների ճնշումներից ու հարստահարումներից, որոնք բազմապատկվել են Էջմիածնի ու Գանձասարի կաթողիկոսությունների և անդրկուրյան թեմերի վարչականորեն տարբեր ենթակայությունների պատճառով: Ուստի, ինչպես իրավացիորեն նկատել է Եղ. Դանիելյանը, Եսայի Դասան-Ջալալյանցը գործել է մեծ նրբանկատությամբ: Դարկ էր նախ հաստատում ստանալ ուղղակի Պարսից արքունիքից, շրջանցելով շրջակա խանությունները, ապա և Սուրբ Էջմիածնից նվիրապետական ենթակայությունը կարգավորել, քանզի, ինչպես Սիմեոն Երևանցին է տեղեկացրել, Նահապետ Եղեսացի կաթողիկոսը մեղադրական թուղթ էր գրել Եսայի Դասան-Ջալալյանցի վերաբերյալ<sup>22</sup>:

Ուսաստանի հայությանը հասցեագրված օրհնության խոսքի շարունակություն կարելի է համարել Արցախի մելիքների անունից կազմված ու Մոսկվայի դեսպանական «պրիկազին» ներկայացված դիմումները («1703թ. մայիսի 7. Ղարաբաղի մելիքների ուղերձը

Պետտոր Ալեքսեևիչին...», «1703թ. մայիսի 7. Ղարաբաղի մելիքների նամակը Թ.Ա. Գոլովինին...»), որոնք դաշնակիցներ գտնելու էսայի կաթողիկոսի և հայ մելիքների նպատակասլաց ու եռանդուն գործունեության վկայությունն են<sup>25</sup>:

Ազատագրական պայքարի համար դաշնակիցների փնտրտուքը նոր մակարդակի է հասել Իսրայել Օրու գործունեության շնորհիվ: Կարելի է համաձայնվել Բ. Ուլուբաբյանի այն տեսակետի հետ, որ դառնալով Չայոց Արևելից կողմանց հոգևոր առաջնորդը, Եսայի Չասան-Ջալալյանը նպատակ է ունեցել իր ազդեցությունն ու իշխանությունը ծառայեցնել մելիքների ուժերը համախմբելու, պարսկական և ապա օսմանյան բռնատիրությունից ազատագրվելու գործին, երբ նույն ժամանակ երևան եկավ Իսրայել Օրին Ռուսաստանի օգնությամբ Արևելյան Չայաստանն ազատագրելու հատուկ ծրագրով: «Երջանիկ այս զուգահեռությունը ոգևորեց Եսայի կաթողիկոսին, և նա անմիջապես... դարձավ այդ ծրագրի կատարողը, Արցախի մելիքական ուժերի և Գանձասարի կաթողիկոսության բոլոր բեմերի հոգևոր ու աշխարհիկ առաջնորդների ղեկավարը»<sup>26</sup>:

Օրիի ազատագրական պայքարի մոսկովյան ծրագիրը Եսայի կաթողիկոսի կողմից խանդավառությամբ ընդունվելը որոշ ուսումնասիրողներ պայմանավորել են Մոսկվայի, Աստրախանի և Ռուսաստանի ողջ հարավի վրա իր հովվապետական ազդեցությունը տարածելու Գանձասարի կաթողիկոսության նպատակով<sup>25</sup>: Սակայն դա ոչ թե շահադիտական նկատառումներով է արվել, ինչպես փորձել է ներկայացնել խորհրդային պատմագրությունը, այլ Բ. Ուլուբաբյանի ճշգրտմամբ՝ հենց հայ ժողովրդի ազատագրունը հաջողացնելու, այդ սուրբ գործին Ռուսաստանի հայությանը ներգրավելու համար<sup>26</sup>:

Եթե հաշվի առնենք նաև Պարսից արքունիքի կողմից 1699-1702թթ. անցկացված աշխարհագրին ու երեք տարվա հարկերի հավաքմանը հետևած դժվարին կացությունը, ինչի մասին Եսային

գրել է նաև իր երկուն, ապա հասկանալի կդառնա, որ դրանից ելք գտնելու համար Գանձասարի կաթողիկոսն անպայման պետք է օգտվեր Օրու առաջարկած բեմագրով Ռուսաստանից զինական օժանդակություն ստանալու հնարավորությունը:

Օրիի առաջին այցելության պահին Եսային դեռևս կաթողիկոս չէր, իսկ Գանձասարի և Էջմիածնի միաբանները ծայրահեղ զգուշավոր վերաբերմունքի էին արժանացրել նրան: 1702 թվականին դառնալով դրության տերը, Եսային այլ քաղաքականություն է որդեգրել, Գանձասարը դարձնելով ազատագրական շարժման քաղաքական կենտրոնը, որտեղից ուղղորդվել են մելիքների ու նրանց զինակիցների գործողությունները: Ինչպես վերևում է նշվել, նոր քաղաքական գծի առաջին ազդանշանը Ռուսաստանի հայությանը՝ որպես իր հավատացյալներին, դիմելն էր (7.12.1702թ.):

Գնդապետ Իսրայել Օրու ղեկավարած ռուսական դեսպանությունը 1708-1709թթ. Պարսկաստանում տպավորություն է գործել հայության վրա և հնարավորություն ընձեռել թարմ ու արժանահավատ տեղեկություններ հավաքել իրերի կացության վերաբերյալ: Օրին Ռուսաստան է վերադարձել Եսայի կաթողիկոսի հետ, որպեսզի վերջինս ավելի սպառիչ պարզաբանումներ տար ռուսական արքունիքին և համոզեր կոնկրետ քայլեր ձեռնարկելու: Չի բացառվում, որ Եսայի կաթողիկոսն իր հերթին ցանկացել է անձամբ շոշափել ռուսական արքունիքի տրամադրությունները և համոզվել ռուսական կողմի նտադրությունների անկեղծության մեջ: Եսայի կաթողիկոսի ուղեւորությունն իրողություն է: Դա հաստատվում է Կապադախի գավառում 1887թ. գետնի տակից գտնված ճաշոց գրքի (1686թ. հրատ., ի Ս. Էջմիածին) վերջին թերթի վրա փետրագրիչով արված գրությունը, որը գրի է առել Ս. Բարխուդարյանը. «Յիսուսի Քրիստոսի ծառայ Եսայի Կաթողիկոս Աղուանից սրբոյ Աթոռոյն Գանձասարայ ի ՌԵԿ (1711). թուխ Չայոց յունվարի ԻԵ(25). քանզի կամէի նաւել յերկիրն Ըռուսաց եւ ըստ խնդրոյ Ըռոմանոս քելխային գայս սուղ

ինչ յիշատակարանս գծագրեցի ծեռամբ իմով, ի փառս Աստուծոյ, որ է օրհնեալ յաւիտեանս, ամեն»: Այնուհետև Մ. Բարխուդարյանը շարունակել է. «Այս ինքնագիր տողերից վերև կարմիր թանաքով կնքուած է հայրապետական կնիքով: Կնքոյ անցինք մնացեալ բառերից կարդացուեցան միայն «Աղուանից կաթողիկոս Եսայի Զալաւեանց...»<sup>27</sup>:

Օրին և Եսայի կաթողիկոսը Աստրախան են հասել 1711թ. օգոստոսին, որտեղ էլ անսպասելի մահացել է Օրին: Ռուսական պաշտոնական գրութիւնների համաձայն, Օրիի հուղարկավորութիւնը տեղի է ունեցել Աստրախանի հայկական եկեղեցու բակում, լուսավորչադավան եկեղեցու ծեսով<sup>28</sup>: Աշ. Զովհաննիսյանը ենթադրել է, որ Եսայի կաթողիկոսը և նրա հետ ժամանած Աղվանից եկեղեցականները թաղման կարգ կատարելով, հարգանքի տուրք են մատուցել անժամանակ մեռած հայ քաղաքական այս գործչին...<sup>29</sup>

Անվանի պատմաբանը հետամուտ է եղել նաև Օրու առեղծվածային մահվան պատճառների բացահայտմանը: «Տարիների անհարկի լուրջութից հետո, 1736 թվականին, Մինաս վարդապետը իր մի զեկուցագրի մեջ նշում է, որ նշանավոր իր ընկերը գեղակուր էր արվել»: Այնուհետև Աշ. Զովհաննիսյանը շարունակել է. «Օրիի մահվան ժամանակ Աստրախանում գտնված Եսայի կաթողիկոսի՝ 1721 թվականին Պետրոս Մեծին ուղղված մի գրությունից պարզ է գրեթե, որ վարդապետի վկայությունը համապատասխանում էր իրողությանը»: Ահա թե ինչ է գրել Եսայի կաթողիկոսը. «Մեր մեծագոյն եւ մելիք գատա եւ ծեր մեծության էլչի (ղեկական, լրաբեր, պատգամաբեր) կարգեալ Իսրայել Օռին, յորժամ եկն այս կողմն ամենայն խորհրդեան մերոյ հասու եղեւ եւ այս կողմն ամենայն խորհրդեան մերոյ հասու եղեւ եւ այս կողման ամենայն դիմաց ել ու մուտն իմացավ, թէ ծովեզերաց եւ թէ ցամաքայնոց, թէ գորաց եւ թէ հեծելոց եւ թէ կողմանց, որ մի միոջէ չի գրուիլ, ոչ ժամանեաց ի դուռն արքունի, որ ազգ առմէր մի ըստ միոջէ, այլ ճանապարհին չար նախանձա-

վոր մարդիկ այլ կերպով մահացուցին զնա: Այլ ընկեր նորին Տիգրանակցի (sic) Մինաս եպիսկոպոսն, զոր բազում ժամանակ է ի դրան արքայի, նա յամենայնի տեղեակ է այս բանից անցելոյ...»<sup>30</sup>: Պատմաբանը կարծիք է հայտնել, որ Մինաս վարդապետը կարող էր «տեղյակ» դարձած լինել Օրիի մահվան մասին ոչ միայն Կրուշինսկուց (18-րդ դարի սկզբներին Ապահանում գտնված լեռ ծիզվիտ (1675-1756), որն իր հուշագրութիւններում բավական տեղ է հատկացրել Օրուն, և ենթադրաբար ուղեկցել է նրան ու ականատես եղել նրա մահվանը), որի հետ հանդիպել էր Մոսկվայում, այլ Եսայի կաթողիկոսից, որին այցելել է 1716 թվականին Փանծասարում<sup>31</sup>:

Լեռն Եսայի Դասան-Զալալյանցին համարել է Իսրայել Օրու աջ բազուկը, երկրում ազատության վառ հույսի պահապանը: Փանծասարի կաթողիկոսին տված անվանի պատմաբանի գնահատականը, կարծում ենք, լավագույնս է բնութագրում նրա տեղն ու դերը հայ ազատագրական պայքարում. «Այդ մարդն էր, որ եկեղեցու իովվի պաշտոնի հետ միացրեց զինվորական գործունեությունը: Նա էր, որ Ղարաբաղի և Սյունիքի լեռներում հանդես բերեց զինված հայությունը: Շատ բան չէր կարող անել Օրին, եթե նրա հետ միաժամանակ Փանծասարում չլինէր Եսայի կաթողիկոսը: Պատմության ընթացքը շատ պարզ ցույց է տալիս, որ ազատության գաղափարը Օրիի հետ վաղաժամ գերեզման կմտներ, եթե Եսային իր վրա վերցրած չլինէր սկսած գործի շարունակությունը»<sup>32</sup>:

Եվ իսկապես, Օրու գործը շարունակեց հայ մելիքների և հարյուրապետների «քաղաքական գլխավոր խորհրդատուն ու ղեկավարը Եսայի կաթողիկոսը»<sup>33</sup>, ով 1718թ. և հետագայում Պետրոս թագավորին գրած իր նամակներում հորդորել է նրան՝ ռազմական օգնություն ցուցաբերել ազատագրական դրոշ պարզած հայությանը:

18-րդ դարի առաջին քսանամյակին Իրանը հայտնվել էր ծանր վիճակում: Գրանից օգտվելու հավակնություններով Ռուսաստանը և Թուրքիան զգալիորեն ակտիվացրին իրենց քաղաքականությունը



Անդրկովկասում: Թուրքիան ինքնիրեն հայտարարելով Անդրկովկասի ու Ատրպատականի «օրինավոր ժառանգորդը», սպառնում էր զինակալել այդ տարածքները: Ռուսաստանն իր հերթին թուլացած Իրանի ծանր վիճակից օգտվելով, հետամտում էր առևտրատնտեսական շահերին: Ըստ երեսույթին, նախապատրաստվելով ներխուժել Անդրկովկաս, օսմանյան թուրքիան հրահրել է Ղաղստանի լեռնականներին կողոպտչական արշավանքներ ձեռնարկել Անդրկովկաս, ինչը հյուժում էր տեղի դիմադրողական ուժերին և պայմաններ ստեղծում թուրք զավթիչների հաջողության համար:

1721թ. օգոստոսի 15-ին Շամախիում ռուս վաճառականների սպանությունը լեզգիների կողմից, առիթ է հանդիսացել Պետրոս Սեծի համար ձեռնարկելու Պարսկական կամ Կասպիական արշավանքը: 1722թ. ռուսական զորքերը մտել են Պերսեմոլ Կասպիական ամբողջ ծովեզրերը գրավելու մտադրությամբ: Ռուսաց թագավորը շահարկել է հայ և վրաց գործիչների ազատագրական ձգտումները, դրանք ծառայեցնելով Կասպիականի ավազանում ամրանալու իր ծրագրերին:

1722թ. գարնանը և ամռանը Գանձակում ու Թիֆլիսում եսայի կաթողիկոսը հանդիպումներ է ունեցել Վախթանգ 6-րդի հետ, բանակցելով ռազմական համագործակցության շուրջ: Հայտնի է, որ Անդրկովկասի սահմանները պաշտպանելու և այդ ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելու համար Վախթանգն ուներ նաև Իրանի լիազորությունները, քանզի Թավրիզում ապաստան գտած գահընկեց շահ Թահմազ 2-րդը նրան էր նշանակել Անդրկովկասում գտնվող իրանական բանակի ընդհանուր զորահրամանատար և նրան էլ հանձնարարել Ղաղստանի լեռնականների հարձակումներին դիմագրավելու գործը: Այս մասին հայտնելով Պետրոսին, Վախթանգը միաժամանակ հայտնել է, որ մտադիր է Գանձակում կենտրոնացած իր զինված ուժերը միավորել իրանական զորքերի հետ, ռազմական գործողություններ սկսել լեզգիների դեմ՝ սպասելով ցա-

րի կարգադրությամբ<sup>34</sup>:

Գանձակի մոտ՝ Զոլակ վայրում 1722 թվականի սեպտեմբերի 22-ին հանդիպել են Վախթանգի 30 հազարանոց և Եսայի Հասան-Ջալայանցի 10 հազարանոց բանակները: Գանձասարի կաթողիկոսը հետագայում իր երկում այդ հանդիպումը պատկերել է վառ գույներով, կարեւորելով այն ազատագրական պայքարի հաջողության գործում: Սակայն, Պետրոսը զանազան պատրվակներով ընդհատել է արշավանքը և վերադարձել Աստրախան: Այդ լուրը Գանձակի մոտակայքում խմբված հայ-վրացական զորքերին է հասել միայն նույններին, որից հետո հուսախաբ զորքերը վերադարձել են իրենց տեղերը: Պետրոսի այդ հերթական արկածախնդրությունը ծանր հետևանքներ է ունեցել ընդհանրապես Անդրկովկասի, և հատկապես՝ հայ ազատագրական պայքարի, հայ զինվորականության համար, որը կրկին լեռներում դատապարտվել է մեկուսացման: Վախթանգի Ռուսաստան անցնելուց հետո փլվել է հայ-վրացական զինակցությունը եւ համատեղ թագավորություն ստեղծելու գաղափարը: Փաստորեն ավելի արագացան իրադարձությունները եւ մանավանդ՝ թուրք զավթիչների արշավանքը Անդրկովկաս:

Հարկ է նշել, որ 1720-21 թվականներին Արցախում իշխանությունն անցել է տեղի հայ մելիքների ու հոգևոր առաջնորդների ձեռքը, որոնք հենվելով լեզգիների հարձակումների դեմ համախմբված հայ զինվորականության վրա, իրականացրել են տեղական ինքնակառավարման բոլոր գործառույթները: Պատահական չէ, որ ազատագրական շարժման ղեկավարները այս երևույթի մեջ նշմարել են Հայոց իշխանության «նոր նորոգում»<sup>35</sup>:

1723 թվականին թուրքերը ներխուժել են Անդրկովկաս: Հունիսին նրանք գրավել են Թիֆլիսը, այնուհետև հարձակվել են Գանձակի վրա, որի պատերի տակ խայտառակ պարտություն են կրել: Հաղթանակի կոմանդ մասնակցել են նաև հայկական սղմախներից ժամանած օգնական ուժերը: Անշուշտ, հայ ազատագրական շարժման

ղեկավարները և, իհարկե, Եսայի կաթողիկոսը հստակ գիտակցել են, որ Քանծակից հետո թշնամին հարձակվելու է նաև Արցախի վրա, ուստի ձգտել են կանխարգելել այդ վտանգը:

Վավերագրերից հայտնի է, որ Ռուսական արքունիքը շարունակել է դիվանագիտական հարաբերությունները տղնախնների հետ, ձգտելով նրանց ուժն օգտագործել հակաթուրքական պայքարում և ապահովել Կասպիցի առափնյա նորանվաճ տարածքների անվտանգությունը: Հայտնի է, որ ռասաց պատվիրակ Իվան Կարապետը 1724թ. հունվարի 1-ին եղել է Քանծասարում և Եսայի հայրապետին ներկայացրել Պետրոս Մեծի հուսադրող ուղերձը: Պարզվում է, որ Եսայի կաթողիկոսն ու հայ մելիքները ուրախությամբ են ընդունել Իվան կարապետի լուրը, ութ օր տոնախմբություն արել և «ղարաբաղեան նահանգից մինչև 30000 հեծյալ եւ 10000 հետեւակ հայկական զորք հավաքել՝ Եսայի հայրապետի, Ավան և Սիրգա հարյուրապետների դրոշի ներքո»<sup>38</sup>:

Պետրոս թագավորի հետ մի աշխույժ մամակագրություն է սկսվել, որը վարել է Եսայի կաթողիկոսը: Այս փաստը հիմք ընդունելով, նորօրյա ուսումնասիրողները գտնում են, որ Ս. Էջմիածինը ազատագրական պայքարում արտաքին հարաբերությունների ղեկավարման գործն իրականացնում էր Քանծասարի միջոցով, որի համար պատմականորեն առկա են եղել մի շարք նախապայմաններ: Մայր աթոռ Ս. Էջմիածնի՝ հայ ժողովրդին պաշտպանելու և Ռուսաստանի հետ բանակցելու գործում Արցախին տրված մեծ նշանակության մասին են վկայում 1724թ. մարտի 13-ին Աստվածատուր կաթողիկոսի տեղապահ Հովասափ վարդապետի՝ Արցախի գինվորականության առաջնորդներին հասցեագրված նամակի և նույն թվականի նոյեմբերի 5-ի Ռուսաստանի արտգործնախարարության կոլեգիայի արձանագրության տեղեկությունները<sup>39</sup>: Ա. Այվազյանը այն կարծիքին է, որ նկատելի զգուշավորությունը գալիս էր հետագա հնարավոր բարդություններից Ս. Էջմիածնի կամ կաթողիկոսի ա-

պահովագրման մտահոգությունից<sup>40</sup>:

Հայտնի է, որ ըստ Չելեբի քյոխվայի, Անտոն և Պետրոս քահանաների հաղորդումների հիման վրա 1724թ. նոյեմբերի 5-ին Ռուսական կայսրության արտգործնախարարության կոլեգիայում կազմված փաստաթղթի՝ նրանցից առաջին երկուսը մինչև նույն թվականի փետրվարի 25-ը եղել են Քանծասարում, այնուհետև Եսայի կաթողիկոսն ու Իվան Կարապետը նրանց տվել են մամակներ: Քանծասարից նրանք ուղևորվել են Բաքու, որտեղից Իշխան Բարյատինսկին նրանց մամակներն ուղարկել է ռուսական արքունիք: Այդ արձանագրության մեջ փաստված է Ս. Էջմիածնի և Քանծասարի միջև եղած սերտ համագործակցությունը. «Արարատեան հայրապետը յաճախ նամակներ ուղարկելով Ղարաբաղ՝ Եսայի հայրապետին, յուսադրում է նրան իր համաձայնութեան մասին նրա հետ»<sup>41</sup>:

Ռուսական ռազմական աջակցությունը ստանալու ուղղությամբ Եսայի կաթողիկոսի ջանքերին զուգընթաց, Պետերբուրգ ժամանած Անտոն քահանան ու Չելեբի քյոխան արքունիքում վերահաստատել են, որ Քանծասարում ուրախ են ցարի հուսադրող ուղերձի համար: Ջավեշտականն այն էր, որ մամակաբերները Քանծասար էին այցելել 1724թ. մայիսի 16-ին, այսինքն Կ. Պոլսի ռուս-թուրքական 1724թ. հունիսի 12-ի պայմանագրի ստորագրումից առաջ, սակայն բազմիցս փորձարկված ուրախ տրամադրությունները հայտնում էին, անտեղյակ այդ ուխտադրուժ պայմանագրով հարուցված քաղաքական իրավիճակի փոփոխությանը, երբ Ռուսաստանն ու թուրքիան ազդեցության ոլորտների էին բաժանել Անդրկովկասը, ընդ որում Արևելյան Հայաստանն, այդ թվում Արցախը երկդիմի ցարի թեթև կամքով հանձնվել էին օսմանցիների «ողորմածությանը»:

Այդ բանազանցների կողմից ևս մի կուպիտ սխալ է թույլ տրվել, որոնց բերանով ահա թե ինչ է հաղորդվել. «Եթե Նորին Կայսերական Մեծությունը իրենց՝ հայերին օգնական զորքեր չբարեհաճի ուղարկել, ապա նրանք խնդրում են Կայսերական Մեծությանը իրենց ըն-

դունել իր հովանու տակ եւ հրաման տալ իրենց համար տեղեր հատկացնել Կասպից ծովի մոտ»<sup>40</sup>:

Այս ցավալի հաղորդմանը կարելի էր և չանդրադառնել, եթե անվանի պատմաբան Լեոն հավատ չընծայեր դրան, գրելով. «Պետրոս Մեծի ժամանակն էլ հայերին առաջարկում էին գաղթել Կասպից ծովի ափերը. այն ժամանակվա նշանավոր գործիչներից մեկը՝ Գանձասարի Եսայի կաթողիկոսը, համարյա համաձայն էր այդ առաջարկությանը եւ միայն ապահովության միջոցներ էր խնդրում, որ ժողովուրդը գաղթի. բայց մելիքները չցանկացան թողնել իրենց հայրենիքը եւ այդ պատճառով էլ չկայացավ գաղթականությունը»<sup>41</sup>: Նորանվաճ տարածքները բարեհույս հանրությամբ բնակեցնելու ռազմավարությունը Ռուսաստանի 18-րդ դարի արտաքին քաղաքականության քաղկացուցիչն էր, ինչը վիճարկման ենթակա չէ: Բայց ինչ վերաբերում է Եսայի կաթողիկոսի դիրքորոշմանը, այս հարցում պետք է համաձայնվել էդ. Դանիելյանի կարծիքի հետ. «Եսայի կաթողիկոսը միշտ հաստատուն կերպով դեմ է եղել հայերին գաղթեցնելու քաղաքականությանը: Նույնիսկ ամենից դժոխակ պայմաններում նրան չի լքել Հայրենիքը զենքով պաշտպանելու խորը հանգստությունը»<sup>42</sup>: Որ գաղթի մասին միտքը հայերին չի պատկանել, այլ կեղծարարության հետեւանք է եղել, պարզորոշ երևում է Կ. Եզյանի հրապարակած հաջորդ իսկ նամակներից: Ըստ երևույթին, ցարական արքունիքի հետ շփվող ինչ որ մեկի խելքին փչել է հաճոյանալ և նման ստորաքարշ միջոցով միավորներ «վաստակել»<sup>43</sup>:

Եսայի կաթողիկոսի վճռականության ու անհողողոլ կամքի մասին կարող է վկայել նաև այն հանգամանքը, որ թշնամուն հպատակվելու Ս. Էջմիածնի կաթողիկոս Աստվածատուր Համադանցու հորդոր-կարգադրությունը և Երից-Մանկաց վանքում նստող կաթողիկոս Ներսեսի խուճապահար նամակն անգոր են գտնվել փոխելու ուղիսին դիմագրավելու Եսայի Հասան-Ջալալյանցի վճիռը: Դեռ ա-

վելին, ինչպես Բ. Ռւլուբաբյանն է ենթադրել, նա ավելի է ամրապնդել սղնախները, համոզել է Ներսեսին շարունակել պայքարը<sup>44</sup>: Չուգահեռաբար, Գանձասարի կոթողիկոսը շարունակել է նամակագրությունը Ռուսաց արքունիքի հետ, հուսալով նրա զինական աջակցությունը:

1724թ. հոկտեմբերի 18-ին, 1725թ. մարտի 10-ին և հուլիսի 25-ին գրված նամակներում, որոնք կամ հեղինակել կամ էլ ստորագրել է Գանձասարի կաթողիկոսը, փորձ է արվել հիմնավորել ռուսների աջակցության անհրաժեշտությունը, սակայն ցարական արքունիքի երկրինի քաղաքականությունն անհաղորդ մնաց դրան:

Մինչ թուրք զավթիչները որոշակի հաջողությունների են հասել Անդրկովկասում, իսկ հայ ժողովուրդը ծանր օրեր է ապրել, ռուսական արքունիքում, ռազմական օգնություն տրամադրելու մասին խորհելու փոխարեն, շարունակել են մտնտալ հայերին մերձկասպյան շրջաններ տեղափոխելու ծրագրեր: Դիվանագիտական կեղտոտ խաղերի իմաստը կայանում էր նրանում, որ մի կողմից 1724թ. հուլիսի 12-ի պայմանագրով պարտավորություն ստանձնելով Մերձկասպյան շրջանից չչարժվել Անդրկովկասի խորքերը և, փաստորեն, թուրքերի ձեռքերն ազատելով Անդրկովկասում անարգել գործելու համար, մյուս կողմից՝ թուրքերին հյուժելու նպատակով Ռուսաստանը շարունակել է հայերին սին խոստումներ տալ և հուսանդրել՝ շարունակելու պայքարը թուրքական նվաճման դեմ:

Հայկական ինքնապաշտպանական ուժերը, ապավինելով իրենց կամքի, բազկի ու զենքի զորությանը, անհավասար գոտեմարտի ելան ատելի ոտխի դեմ: Գանձասարի Եսայի կաթողիկոսը և մելիքները դժգոհելով օգնությունը ուշացնելու առթիվ, միաժամանակ հայտնել են, որ 1725թ. գարնանամուտին ջախջախել են թուրք զավթիչներին, որոնք երեք փաշաների զխավորությամբ ներխուժել էին Վարանդա գավառը:

1726 թվականի մարտի 26-ի նամակում Եսայի կաթողիկոս Հա-

սան-Ջալալյանցը դիմելով Ռուսական կայսրության ներկայացուցիչներին՝ Դերբենտի պարետին և Բաքվում հաստատված իշխան Գուլիցինին, տեղեկացրել է, որ ռուսների տիրապետության տակ անցած մերձկասպյան տարածքները ենթակա էին թուրքական հարձակման վտանգին, սակայն նրանց բոլոր հարվածներն իրենց վրա ընդունող հայերը խիզախաբար դիմադրելով թշնամուն, խոչընդոտել են նրա առաջխաղացումը: Դա հայերին հայտնել էր գերեվարված թուրք փաշան. «...դուք չէիք այս միջուսն մեք հիմա Դարպանդու եւ Պաքու վերայ էինք գնացել...»<sup>45</sup>:

Սակայն Եսայի կաթողիկոսի այս և հետագա նամակները, որոնք ահագանգել են թուրքական վտանգի մասին, ըստ էության, չազդեցին ռուսական քաղաքականության վրա և այդպես էլ որևիցե օգնություն մարտնչող հայ զինվորությանը չհասցվեց:

Պատմագրության մեջ Եսայի Չասան-Ջալալյանցի կյանքի ու գործունեության վերջին տարիներին հակասական գնահատականներ են տրվել: Տակավին այն ժամանակվա վավերագրերում կարելի է հանդիպել իրարամերժ տեսակետների: Այսպես, վավերագրերից մեկում հետևյալ հաղորդումը կա. «Խորապես ողբերգական եղավ Եսայի կաթողիկոսի վախճանը: Նրանք, ովքեր շարունակում էին դիմադրել թշնամուն, նրան մեղադրում էին դավաճանության մեջ: Եւ ընդհակառակը, նրանք՝ ովքեր, ապարդյուն սպասելով ռուսների օգնությանը, կորուստներ էին ունեցել դիմադրական շարժումից, նրան պախարակում էին և ասում, որ նա չարաչար խաբել է իրենց: Ռուս կառավարությանն ուղղված մի զեկուցագրում Մինաս վարդապետը հաղորդում էր, թե սղնախների հայերը վրդովված են կաթողիկոսի դեմ և վերջինս խոր վշտի մեջ սուզված և չարաչար վիրավորանքներ կրելով վերջացրեց իր կյանքը»<sup>46</sup>: Այդ հակասական գնահատականների պատճառը Էդ. Դանիելյանը համարում է Եսայի կաթողիկոսի շրջադարձը արտաքին քաղաքականության «ավանդական» դարձած ուղուց, այսինքն՝ ռուսական կողմնորոշումից<sup>47</sup>:

Խնդրո առարկա ժամանակաշրջանի հայ-ռուսական հարաբերությունների վերաբերյալ վավերագրերի վերլուծության հիման վրա Ա. Այվազյանը եզրակացրել է, որ 1726 թ. նոյեմբերին Եսայի կաթողիկոսը Ղարաբաղի մելիքների և գյուղապետերի հետ միասին այդ պահի համար անիրատեսական պիտի համարելին ռուսական կողմնորոշումը և պառակտում պիտի առաջանար նրանց ու Ավան հարյուրապետի և նրա զինակիցների մեջ<sup>48</sup>:

Ռաֆֆին, ներկայացնելով Դավիթ Բեկի մահը, ցավով շարունակել է. «Միելույն տարվա(1728) մեջ մեռան Ղարաբաղի երեք նշանավոր գործիչները՝ Մելիք - Բեգլարյան Աբով II, Մելիք - Իսրայելյան, Մելիք - Եսային եւ Գանձասարի Եսայի կաթողիկոսը»<sup>49</sup>:

Մ. Օրմանյանը եւս անդրադարձել է կաթողիկոսի կյանքի վերջին շրջանին. «Եսայի հիասթափուած եւ յուսախաբուած ասպարճէ քաշուեցավ, եւ այլեւ իր անունը գործի վրայ չլսուիր, թեպետեւ կը յիշուին ռուս պաշտօնատարներու ըրած դիմումները, որոնք շարունակեցին մինչեւ իր մահը 1728-ին, նոյն տարին որ Դաւիթ ալ մեռաւ»<sup>50</sup>:

Չատկապես սրտառուչ է Լեոի գնահատականը Եսայի կաթողիկոսի մահվան ու ազատագրական պայքարի այդ ժամանակամիջոցի մասին. «[Սղնախներում] սկիզբ էին առնում ազգամիջյան անհամաձայնություններ: Եվ նրանք ուղղված էին գլխավորապես Եսայի կաթողիկոսի դեմ: Նա էր գերագույն հրամանատարը, նա էր խոսում ռուսների հետ և նա էր, որ շարունակ հավատացնում էր, թե ռուսները պիտի գան: Իր այս պաշտոնին Չասան-Ջալալյան կրոնապետը վերաբերվել էր մի անդրդվելի շիտակությամբ և հավատարմությամբ, որին բոլորովին չէր համապատասխանում ռուսական ցարի երկդիմի քաղաքականությունը: Նշանավոր է այն հանգամանքը, որ օսմանցիները, չկարողանալով կոտրել Սղնախների համառ դիմադրությունը, փորձեր արին հաշտություն խոսել հայերի հետ, նույնիսկ կաշառքներ էին առաջարկում Եսայի կաթողիկոսին, եթե նա համա-

ծայրի իրենց կողմն անցնել»: Թերագնահատելով «լավ կռվող» լեռնցիների քաղաքագիտական ընդունակությունները, Լեոն այնուհետև գրել է. «Եսայի կաթողիկոսը բացեփրաց մերժեց այդ առաջարկությունները, կամենալով անաղարտ պահել իր հավատարմությունը դեպի ռուսները: Այս շիտակությունն էլ, բնականաբար, սնուցանում էր հակառակություն կաթողիկոսի դեմ: Նրան էին համարում երկրի քայքայման պատճառը: Եվ այս էլ միանգամայն անբնական չէր, եթե նկատի առնենք անհաջողության մատնված, տրտունջների սովորած ամեն մի զինվորական հոգեբանություն: Մեծ վիրավորանքներ եւ վշտեր կրեց նա, ինչպես վկայում է Մինաս վարդապետը: Եվ այդ վշտերի ու վիրավորանքների մեջ էլ նա վախճանվեց 1728 թվականին: Այս մի շատ ծանր հարված էր, որ կրում էր հայոց ազատագրական գործը, զրկվելով Եսայու պես մի անխոնջ կազմակերպիչ ուժից եւ ոգեւորված գաղափարախոսից: ...Բայց Եսայի կաթողիկոսի մահը դեռ վերջնական քայքայում չէր հայոց Սղնախների համար»<sup>51</sup>:

Եսայի կաթողիկոսն, անշուշտ, ճկուն դիվանագիտության կողմնակից էր, ինչի մասին են վկայում մի շարք փաստեր, ուստի Լեոնի պնդումը նրա կողմից «ռուսների հանդեպ հավատարմությունը» անաղարտ պահպանելու վերաբերյալ՝ անհամոզիչ է: Ինչպես իրավացիորեն նկատել է Ջ. Արզումանյանը, սղնախների ղեկավարները սպանացող աղետի կանխման հարցը լուծեցին, ելնելով ստեղծված իրավիճակից ու իրենց հնարավորություններից: Ինքնապաշտպանության համար բավական ուժեր ու հնարավորություններ չունեցող շրջանները դադարեցրին զինված պայքարը և թուրքերի հետ կնքեցին յուրահատուկ մի զինադադար, ըստ որի հայերը պարտավորվում էին «իրենց գոյության ու խաղաղության համար թուրքերին վճարել ոչ մեծ քանակով դրամ՝ որպես հարկ» ( Эзов Г. А., Сношение Петра Великого с армянским народом, № 3 . N 299.), իսկ լեռնային շրջանների սղնախները շարունակեցին զինված պայքարը<sup>52</sup>:

Համաձայնվել է պետք ուսումնասիրողի այն կարծիքի հետ, որ Եսայի Հասան Ջալալյանն ամմասն չմնաց այդ իրարամերժ իրադարձություններից և «քիչ քանքեր չգործադրեց» հայերի համար ճակատագրական ու խճճված այս իրադրության մեջ: Գանձասարի կաթողիկոսը, նկատի առնելով քաղաքական իրադրության փոփոխությունը, «Շոշ սղնախում գտնվող Իվան Կարապետին հրահանգավորել է պայքարի դրոշը չխոնարհած սղնախների ղեկավարներին հորդորել, որպեսզի նրանք զգույշ լինեն, իզուր տեղը չզրգռեն, ոտքի չհանեն շրջակա գյուղերի բնակիչներին»<sup>53</sup>, որոնք, ռազմունակ ուժերը սղնախներում կենտրոնացված լինելու պատճառով, զրկված էին արդյունավետ ինքնապաշտպանության հնարավորությունից:

Տեղին է անդրադառնալ Ջ. Արզումանյանի այն դիտարկմանը, որ մեր գրականության մեջ տարընթերցման է ենթարկվել Եսայի կաթողիկոսի հրահանգի հետեւյալ տողերը. «Պիտի հրամանքը մեր տղոցդ խրատես փարաղաթ կենան, զեղարանց հետ բան չունեն, թէ որ չէ՝ սոքա էլ կռիվ կանեն, իւրանք գիտեն»<sup>54</sup>: Մասնավորապես նա անհամաձայնություն է հայտնում «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի ակադեմիական հրատարակության IV հատորում արված մեկնաբանությամբ. «Հարկ է, որ համոզես մեր տղաներին հանգիստ մնալ եւ չտարվել զեղջուկների տրամադրությամբ. բայց եթե, այնուամենայնիվ, կռվի բռնվեն (թուրքերի հետ), թող հենց իրենք էլ պատասխանատու լինեն հետեւանքների համար»<sup>55</sup>: Ղարաբաղի բարբառում, ըստ Ջ. Արզումանյանի, «փարաղաթ» կամ «փրղաթ» բառն օգտագործվում է «կամաց», կամ «զգույշ» («փրղաթ կաց», «փրղաթ (տ) դիր»), այլ ոչ թե «հանգիստ» իմաստով: Այս նկատառումից հետո, ուսումնասիրողը առաջարկում է վերոհիշյալ հրահանգի հետեւյալ ճիշտ ընթերցումը. «Հարկ է, որ մեր տղաներին հորդորես զգույշ լինել, գյուղերի հետ գործ չունենալ [ գյուղերը ոտքի չհանել], հակառակ դեպքում սրանք (թուրքերը) եւս կվերսկսեն հարձակումը»<sup>56</sup>:

Իսկապես, նախորդ ընթերցմամբ ստացվում է այնպես, որ Եսային մտահոգված էր միայն սղնախների ղեկավարների վիճակով և նրանց խորհուրդ էր տալիս գյուղացիների ազդեցության տակ չընկնել և պայքարը չշարունակել, մի խոսքով՝ զենքը վայր դնել: Այս մեկնաբանությունը բխում էր դասակարգային պայքարի խորհրդային-կոմկուսակցական գաղափարախոսական պարտադրանքից, և Զ. Արզումանյանը համարձակություն է ունեցել չընդունել դա, իրավացիորեն գրելով. «Սա իսկապես կապիտուլյանտական կուրս կլիններ»: Մինչդեռ «Իրականում Եսայու հրահանգը հանգում է նրան, որ անպաշտպան գյուղացիներին պետք չէ ոտքի հանել, այլապես թուրքերը կվերսկսեն հարձակումը, որը ողբերգական վախճան կարող է ունենալ»: Այսինքն՝ «պայքարը պետք էր շարունակել ժողովրդի ռազմունակ մասով, որը կենտրոնացված էր սղնախներում, զինված էր և այդ անառիկ ամրոցներում էլ կարող էր հաջողությամբ կռվել և պաշտպանվել»<sup>57</sup>:

Այս օրինակը, թերևս բավական է համոզվելու համար, թե ինչքան անարդար են եղել իրենց գնահատականներում ոչ միայն ժամանակակիցները, այլ նաև հետագա հեղինակները:

Այլապես 1726-1727թթ. ընթացքում ստեղծված բարենպաստ պայմաններից օգտվելու և տեղական ժողովուրդների ցանկությանն ընդառաջելով՝ թուրքերի դեմ շարժվելու կողմնակից զեներալ-ֆելդմարշալ Վ. Դոլգորուկովը բարձր գնահատական չէր տա Եսայի կաթողիկոսին՝ ընդհուպ մինչև իր մահը՝ 1728թ. ամառը սղնախների ազատագրական անզիջում պայքարը ղեկավարելու ասպարեզում, եթե 1726 թվականին թուրքական «փաշայի մոտ գտնվող» կաթողիկոսը իսկապես իր կապերը խզած լիներ պայքարող սղնախների ղեկավարների հետ, նպաստած չլիներ այդ պայքարին: Դրա մասին է վկայում խնդրո առարկա հաղորդագրության շարունակությունը. «Եվ չնայաց նա(Եսային) փաշայի մոտ էր գտնվում, այնուամենայնիվ իր գաղտնի հրահանգներով նրանց(հայերին) չի թողել»<sup>58</sup>:

Այսպիսով, Եսայի Հասան Ջալալյանց կաթողիկոսը, շարունակելով իր նշանավոր տոհմի ավանդույթները, առաջնորդել է իր հավատացյալ ժողովրդին ազատագրական պայքարում, դիվանագիտական եռանդուն գործունեությամբ փորձել է դաշնակիցներ գտնել պարսիկ ու թուրք զավթիչներին դիմագրավելու գործում, իսկ հարկ եղած դեպքում նաև կաթողիկոսական գավազանը փոխարինել է զենքով, դրանով իսկ իր պայծառ անունն անմահացրել հայ բազմադարյան ազատամարտի տարեգրության մեջ, ի դեպ, որի արարմանը մասնակցել է մի ուշագրավ պատմական երկ ստեղծելով...

Նրա հաջորդները և հետնորդները շարունակել են արարել և հարստացնել Արցախի հոգևոր-մշակութային կյանքը, իսկ նորօրյա ազատագրական պատերազմում նոր սխրագործություններով բազմապատկել Գանձասարի վաղեմի փառքը: Անշուշտ, պատահական չէ հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի բազմաթիվ հոգևորականների մասնակցությունը Արցախյան պատերազմին: Անուրանալի է Արցախի թեմի առաջնորդ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի, Տեր Հովհաննես քահանա Հովհաննիսյանի, Ռաֆայել սարկավազ Խաչատրյանի, Տեր Գրիգոր Քահանա Մարկոսյանի, Տեր Կորյուն քահանա Կարապետյանի, Տեր Ստեփանոս Հակոբյանի, հայր Կրթանես Աբրահամյանի և այլոց ներդրումը՝ ոսոխին մեր հայրենիքից դուրս շարտելու գործում: Տեր Հովհաննեսը ողջ պատերազմի ընթացքում, մինչև իսկ, երբ թշնամին Գանձասարի մատույցներում էր, մնացել ու իր ներկայությամբ շունչ է տվել եկեղեցուն, որտեղ հազարավոր հայորդիներ մկրտվելով ու օրինանք ստանալով՝ ուղղակի մարտադաշտ են մեկնել և վանել վտանգը հեռու: Այդ վարքագիծը բնորոշ է եղել հայ հոգևորականին: Այդ մասին մի առիթով նշվել է. «Ջգալով Գանձասարի տաք շունչը թիկունքին, ունկերում զանգերի ղողանջը՝ հայ զինվորն աննկուն կանգնեց առանց մի քայլ անգամ նահանջելու: Հոգևոր այրերը պատվով կատարեցին իրենց պարտքը՝ ոգևորելով, լիցք հաղորդելով մարտնչող զինվորներին»<sup>59</sup>:

Ուրախությամբ կարող ենք փաստել, որ այն սուրբ գործը, որ սկսել էր Եսայի Գասան Ջալալյանցը շուրջ երեք դար հետո պատահական չէ, որ Տեր Գովհաննեսը պատերազմում գործած իր խիզախության համար՝ պարգևատրվել է ԳԳ երկրորդ աստիճանի «Մարտական խաչ» շքանշանով, «Արծիվ Մահապարտ» (կրկնակի) և ԼԴԳ «Արիություն ու երախտագիտություն» մեդալներով, իրականություն դարձրին մեր ժողովրդի լավագույն զավակները, քանի որ հույսը դրել էին իրենց բազկի ու կամքի վրա: Եվ դրանում մեծ է այն հեռավոր օրերի քաղաքական խնդրումների, դիրքորոշումների խաչաձևման ու մտաբխումների և գաղափարախոսական հասունացման դերը...

Եսայի Գասան Ջալալյանց կաթողիկոսը հայ ազատագրական շարժման երախտավորն ու գաղափարախոսը, «զինվոր հոգեւորական» լինելուց բացի նաև հայ մշակույթի նշանավոր գործիչներից էր, 18-րդ դարի առաջին քառորդի պատմագրության ներկայացուցիչներից մեկը: Ինչպես Բ. Ուլուբաբյանն է հավաստիացնում՝ նա է առաջին անգամ ձեռնարկել խաչենի տարածքում գտնվող վանքերի ու խաչքարերի արձանագրությունները հավաքելու գործին: Գիմնականում խաչենի իշխանության հոգևոր երեք կենտրոններում Գանձասարում, Խաթրավանքում ու Ղաղի վանքում և դրանց շրջակայքում նա արձանագրություններ է ընդօրինակել 1718 թվականին<sup>60</sup>: Եսայի կաթողիկոսի այդ ընդօրինակությունների ձեռագրի մասին վկայել են Սարգիս Ջալալյանցը<sup>61</sup>, Զ. Շահխաթունյանցը<sup>62</sup>, Խ.Վ. Ղաղյանը<sup>63</sup>, Կարապետ Եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը<sup>64</sup>:

Սակայն, Բ. Ուլուբաբյանի պնդմամբ, հայտնի չէ, թե ձեռագիրը որտեղ է գտնվում: Ըստ նրա՝ դրա երկու ընդօրինակությունները պահվում են Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում: Նշելով, որ Եսայի կաթողիկոսի կողմից ընդօրինակված արձանագրությունների հիման վրա փորձել է տալ Ծարա ճյուղի (Խաթրավանքի տերերի) տոհմաբանությունը, բայց լրացուցիչ տվյալների բացակայության պատճառով մի թյուրիմացություն է սպրդել, ինչը կրկնել

են հետագա ուսումնասիրողները, միաժամանակ բարձր է գնահատում «հոգեւոր ու քաղաքական նշանավոր գործչի» ճիշտ ու անթերի աշխատանքը արձանագրություններն արտագրելիս, որոնք հիմնականում անփոփոխ մտցվել են վիճագրագետներ Գովհ. Վարդապետ Շահխաթունյանցի, Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցի եւ այլոց գրքերի մեջ<sup>65</sup>:

Ինչպես տեսնում ենք, Եսայի Գասան Ջալալյանցը Գայոց Արեւելից կողմանց և իր տոհմի պատմությամբ զբաղվել է առնվազն 1718 թվականից: Սակայն, մեզ հավանական է թվում, որ նա այդ գործով զբաղվել է, երբ դրա համար ժամանակ է գտել: Իր իսկ խոստովանությամբ՝ պատմությունը գրել է գիշերները, իր հանգստի հաշվին, ապագա ընթերցասեր եղբայրների համար<sup>66</sup>: Նկատի առնելով, որ նրա «Գամառոտ պատմությունը» ավարտվում է 1722-23 թվականների դեպքերով, կարելի է եզրակացնել, որ թուրքերի ներխուժման ու ծանր ներքաղաքական իրավիճակի պատճառով կաթողիկոսը հնարավորություն չի ունեցել շարունակաբար վերսկսելու շարադրանքը և արձանագրելու այդ բախտորոշ իրադարձությունները: Չի կարելի բացառել, որ կաթողիկոսը իր երկասիրությունը ձեռնարկել է իր կյանքի վերջին տարիներին՝ 1726-1728 թվականներին, դրանով իսկ փորձելով դուրս գալ այն դժվարին հոգեվիճակից, որում հայտնվել էր այդ ու ձախից տեղացող մեղադրանքների և իրադարձությունների աննպաստ ընթացքի պատճառով: Ըստ երևույթին նա մտադրություն է ունեցել ընդարձակ պատմություն գրել, բայց, ինչպես կարծել է Վ. Պարսամյանը, ծանր ու աննպաստ պայմանները, ամենօրյան հրատապ հարցերի մեջ մխրճված լինելը հնարավորություն չեն տվել իրականացնելու» այն: Այդուամենայնիվ, նա թողել է իր ժամանակը աշրջանի ազգային պատմության համառոտ մի տեսություն, որն իր տեսակի մեջ պատմագիտական բացառիկ արժեք է ներկայացնում: Այդ ծավալով փոքր, բայց նշանակությամբ շատ կարեւոր աշխատության մեջ իրենց վառ արտահայտությունն են

գտել Եսայի կաթողիկոսի հասարակական-քաղաքական հայացք-ները: Ազատագրական շարժման վերաբերյալ ստեղծված հարուստ վավերագրերը, դրանցում արժարժված ազատասիրական ու հայրենասիրական գաղափարները Վ. Պարսամյանն իրավամբ համարում է ազատագրական մտքի ու գործի հետագա զարգացմանը, ազատագրական շարժման գաղափարախոսության սկզբնավորմանը նպաստող գործոններ<sup>67</sup>:

Հանձին Եսայի Հասան Ջալալյանցի ուսումնասիրողները իրավամբ տեսնում են հայ ազատագրական պայքարի ղեկի մոտ կանգնած հայրենասեր և ազատասեր մի անձնավորության, տաղանդավոր քաղաքագետի ու դիվանագետի, ով ներքին ու միջազգային քարոզ իրադրության պայմաններում կարողանում էր ճիշտ կողմնորոշվել և ճիշտ ուղղություն տալ այդ պայքարին: Հայկական սղմախների կազմակերպումը, հայ-վրացական եւ հայ-ռուսական ռազմաքաղաքական դաշինքի գաղափարը, որի ոգեշնչողներից ու ակտիվ կենսագործողներից մեկն էր նա, դրա վառ ապացույցն է<sup>68</sup>:

Եսայի Հասան Ջալալյանցի երկը առաջին անգամ տպագրվել է 1839 թ. Շուշիում «Պատմութիւն կամ Յիշատակ ինչ ինչ անցից՝ դիպելոց յաշխարհին Աղուանից, համառօտագրեալ, ի Սրբազնակատար Կաթողիկոսէն Աղուանից ի Տէր Եսայեաց Հասան Ջալալեանց. ի թուականին հայոց ՌճԿ(1160), իսկ ի թուականի Տեառն մերոյ փրկչին Յիսուսի 1711» վեռնագրով, որի նախածեռնողը Բաղդասար մետրոպոլիտն էր, բայց, Րաֆֆու գնահատմամբ՝ «սաստիկ համառոտած եւ անխնա կերպով կրճատած»: «Մենք այժմ ավելորդ ենք համարում բացատրել, թե ի՞նչ նպատակով է կատարել հանգուցյալ մետրոպոլիտը այդ գրականության սպանությունը,- շարունակել է Րաֆֆին,- միայն այսքանը կասենք, որ Եսայի կաթողիկոսի պատմության իսկականը շատ ընդարձակ է եղել, ինչպես երեսուն է այդ մեր ձեռքը հասած մի գրչագիր օրինակից, որը դժբախտաբար կիսով չափ փտած է: Ցանկալի կլիներ, որ գտնվեր այդ աշխատության

անբողջը եւ դա առատ նյութ կտար մեր նոր պատմությանը»<sup>69</sup>:

Երկրորդ անգամ այն տպագրվեց 1868թ. Երուսաղեմում «Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի» վերնագրով Ղերութնա Եղեսացու «Թուրք Աբգարու թագաւորի հայոց, եւ քարոզութիւնք սրբոյն Թաղեի առաքելոյ» գրքի մեջ<sup>70</sup>:

Այն 1876 թ. տպագրվել է նաև ֆրանսերեն՝ *Histoire d, Aghavanie par le catholikos Essai Hassan Dehalalants, Trad. par M. Brosset, Coll. t. II. St. pb, 1876*: Ռուսերեն տպագրությունն իրականացվել է Խորհրդային Ադրբեջանում տխրահռչակ Զիա Բունյաթովի կողմից, 1989 թվականին<sup>71</sup>, այսինքն՝ Արցախյան շարժման այն ամենաեռուն շրջանում, երբ պայքարը հիմնականում ընթանում էր օրենսդրական ակտերի ընդունման և գաղափարաքարոզչական հունով: Ստորև դեռ անդրադառնալու ենք այդ հրատարակությանը և այնտեղ տեղ գտած խեղաթյուրումների ու կոպիտ միջամտությունների փաստին:

Եսայի կաթողիկոսի երկի երրորդ հայերեն հրատարակությունը Բագրատ Ուլուբաբյանին է, ով գրքույկի առաջաբանում կանգ է առել ադրբեջանական խեղաթյուրումների վրա ու բացահայտել դրանց հակազիտական ու հակահայկական էությունը<sup>72</sup>:

Թվում է, թե այսքան հրատարակություններից հետո Եսայի Հասան Ջալալյանի երկի վերահրատարակումն այլևս հրատապ չէ: Այն ինչ, ինչն ենք ներկայումս է անհրաժեշտ գլուխ բերել վերահրատարակումը, քանզի մեր հակառակորդների կողմից հերթական, հուսանք՝ դատապարտված փորձն է ձեռնարկվում ոչ միայն խեղաթյուրել ու նենգափոխել մեր մշակույթի հազվագյուտ արժեքներից մեկը, այլ նաև սեփականացնել, այդ եղանակով այն ծառայեցնելով քաղաքական կեղտոտ նպատակներով՝ ինչ որ կերպ արդարացնել իրենց ապօրինի գոյությունը ուրիշի, տվյալ դեպքում՝ հայ ժողովրդի պատմական հայրենիքում: Այս առումով՝ բնագրի օտարալեզու հրատարակումը կարող է մերկացնել ադրբեջանցի զեղծարարների կեղծիքը և նպաստել մեր պատմական երկի ճիշտ ու օբյեկտիվ ընկալմանը:



Այսպես, համացանցային կայքէջում գետեղված Եսայի կաթողիկոսի երկի էլեկտրոնային տարբերակի, որն իբր 1989թ. հրատարակության վերադարձությունն է, Տ.Ի. Տեր-Գրիգորյանին վերագրվող «Եսայի, Աղվանից կաթողիկոս» հոդվածում նշվում է. «Ռուսերեն թարգմանությունում մեր կողմից բաց են թողնվել և չեն թարգմանվել այն հատվածները, որոնք կրոնական բնույթ են կրել և անմիջական կապ չեն ունեցել նկարագրվող իրադարձությունների հետ», բայց իրականում այդ պատրվակի տակ անխնա ջնջված է այն ամենը, ինչ կարող է հիշեցնել հայկականի մասին: Կամայականորեն բնագրերը աղճատելու գիաբունյաթովյան տնայնագործական մեթոդներին բազմիցս անդրադարձել ու քննադատել են հայ գիտնականները, ուստի անիմաստ է վերստին արծարծել այդ թեման<sup>73</sup>: Պարզապես, մնում է փաստել, որ մեր հակառակորդների նենգամիտ խարդավանքները նախատեսված են անտեղյակ ընթերցողների համար, որպիսիք շատ կարող են պատահել համացանցից օգտվողների մեջ:

Աղբբեջանցի «հրատարակիչները» ոչ պատահականորեն բաց են թողել նաև Եսայի Հասան Ջալալյանցի առաջաբանը, որը կարող էր պայթեցնել մեր հակառակորդների ստի ու կեղծիքի փուչիկը:

Վատահամբավ Ջ. Բունյաթովը «Առաջաբանում» Եսայի Հասան Ջալալյանին ներկայացրել է իբրև «ալբանական» նշանավոր Սիիրանյան տոհմի ժառանգ: Այս իսկ հոդվածի սկզբում մենք տեսանք, թե որտեղից են սերում Հասան Ջալալյանները: Զիաբունյաթովյան հակագիտական «կոնցեպցիան» նպատակաուղղված է Ղարաբաղում հայ բնակչության գոյությունը ժխտելուն և միայն թուրքմենչալի համաձայնագրով այն պայմանավորելուն:

Նույն «Առաջաբանում» ճարպիկ ձեռնածություններով վաճառակաղեմիկոսը փորձել է ընթերցողին հավատացնել, որ Աղվանից կաթողիկոսությունը ոչ մի կապ չի ունեցել էջմիածնի կաթողիկոսության հետ, դեռ ավելին՝ իբր անհաշտ պայքար ու հակամարտություն է ընթացել նրանց միջև, իբր էջմիածնին հաջողվել է կաշառել

Սյրբազան Սիմոնին և վերացնել Աղվանից կաթողիկոսությունը: Այս ահավոր կեղծիքը 18-րդ դարում հակաթուրքերի գործունեության աշխուժացման նենգափոխումն է միջեթնիկական բախման, մինչդեռ դպրոցականներին անգամ հայտնի է, որ նման բան լինել չի կարող, քանզի «Աղվանից» տեղանունը զուտ աշխարհագրական հասկացություն է և երբեք էլ եթնիկական իմաստ, առավել ևս այն, ինչ պարոյուն փորձում են հրամցնել գիաբունյաթովականները, չի արտահայտել, այն պարզ պատճառով, որ նախ, Աղվանքը վերացել է 8-րդ դարում, իսկ այդ երկրում ապրող տասնյակ ցեղերը ծուլվել են տարածաշրջանի ժողովուրդների մեջ և վերացել պատմության թատերաբեմից: Իսկ ընդամենը 18-րդ դարի երկրորդ կեսին հայտնված քոչվորների ժառանգ «ակաղեմիկը» փորձում է իր ցեղակիցներին ներկայացնել որպես տեղաբնիկներ...

Իհարկե, գոեհիկ միջամտությունների ու նենգափոխումների շարքը երկար է, դրանք անգն աչքերով էլ երևում են բնագրի հետ համեմատելիս, ուստի բավարարվենք նշվածով և հուսանք, որ սույն հրատարակությունը համեմատություններ անելու և իրական պատկերացում կազմելու հնարավորություն կտա:

Աշխարհաբար թարգմանությունը կատարվել է բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր արցախցի եղուարդ Սամսոնի Մկրտչյանի կողմից, 1868թ. Երուսաղեմի հրատարակությունից: Այս և Բ. Ուլուբաբյանի հրատարակությունների տեքստերի համեմատությունը ցույց է տվել, որ վերջինիս կողմից կատարվել է ազատ թարգմանություն: Սույն թարգմանության համար հիմնական սկզբունք է ընտրված բնագրին հոգեհարազատ մնալը: Ծանոթագրություններ կազմելիս մեծամասամբ հիմք ենք ընդունել նախորդ հրատարակությունների ծանոթագրությունները, բայց մեր հերթին ավելացրել կամ սրբագրել ենք այն ամենը, ինչ որ կարևոր ենք համարել և թելադրված է եղել գիտության նոր նվաճումներից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Համառոտ պատմություն-

նը» ավարտվում է Կախեթի խանի կողմից Տփիսիսի գրավումով(1723թ. մայիս), իսկ դրան հաջորդած իրադարձությունները ոչ պակաս կարեւոր են եղել, նպատակահարմար գտանք գրքի հավելվածում տալ Եսայի Գասան Ջալալյանց կաթողիկոսի նամակները՝ հասցեագրված Ռուսաց արքունիքին, տարբեր պաշտոնյաների, ազատագրական պայքարի մասնակիցներին, հոգևոր հայրերին, որոնք կամբողջացնեն ընթերցողի պատկերացումները Գամծասարի կաթողիկոսի 1724-1726 թվականների գործունեության և հայացքների մասին: Գրանով փաստորեն կլրացվի մինչև հայրապետի մահը(1828թ.) ընկած ժամանակագրական բացը: Մյուս կողմից, այդ արխիվային վավերագրերը, որոնք տարբեր ժամանակներում հրապարակվել են զանազան ժողովածուներում ու աշխատություններում, կպատասխանեն մեր հակառակորդների զեղծարարությամբ հարուցված բազում հարցերի: Հետազոտողների կողմից բարձր գնահատականի են արժանացել ոչ միայն Եսայի կաթողիկոսի տարեգրությունը, այլ նաև Ռուսաստան և իր գործակիցներին հասցեագրված նամակներն ու դիմումները, որոնք այն ժամանակվա իրադարձությունների ուսումնասիրման համար առավել արժեքավոր սկզբնաղբյուր են, ինչը ևս դրանց վերահրատարակումը այժմեական է դարձնում: Հարկ է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ թեև ռուսերեն թարգմանությունները երբեմն տալիս են բնագրերի լուկ ընդհանուր իմաստը, բայց դրանք կարևոր են, քանզի հենց դրանցով էլ առաջնորդվել են հասցեատերերը, հետեւաբար այդ թարգմանությունները ստացել են պաշտոնական փաստաթղթերի ուժ: Որոշ թարգմանություններ չունեն իրենց հայերեն բնագրերը և դարձել են արխիվային բացառիկություններ, ուստի վավերագրերը, նմանատիպ ժողովածուների օրինակով, տպագրում ենք տարբեր համարների տակ:

Երախտագիտություն ենք հայտնում Հասան Ջալալյանցների ժառանգորդ Մելս Թևոսյանին՝ գրաբարի նյութը տրամադրելու համար:

**ՊԱՏՄՈՒԹԻՒՆ  
ՀԱՄԱՌՕՏ  
ԱՂՈՒԱՆԻՑ ԵՐԿՐԻ  
ՅՕՐԻՆԵԱԼ**

**Ի Տ. ԵՍԱՅԻ ԱՂՈՒԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ  
ՀԱՍԱՆ ՋԱԼԱԼԵԱՆՑ**



**Ի ՏՊԱՐԱՆԻ  
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՒՈՅ Ս.  
ՅԱԿՈՎԲԵԱՆՑ  
ՅԵՐՈՒՍԱՂԷՄ  
1868- ՌՅԺԷ**

Եսայի կաթողիկոս, որոյ անուն թերեւս գտանիցի ի գաւազանագիրս կաթողիկոսաց տանն Աղուանից, այլ մեք ի ձեռն առաջիկայ երկասիրութեանս եթ ծանօթանամք անուան նորին, էր՝ որպէս յայտէ, ի հնագոյն յերեսելի և յիշխանագուն տոհմէն Հասան Ջալալեանց, որոց կենցաղ և գործք նշանաւորք՝ ունին զփառաւոր տեղի յազգային պատմութեանս: Նստաւ սա յկթոռն Մետրապօլտութեան Գանձասարայ, (որոյ գահակալք կոչէին կաթողիկոս Աղուանից,) յառաջնում քառորդի ութետասներորդ դարու. սակայն չունինք ի ձեռին կարելոր և ստոյգ ծանօթութիւնս զվարուց իւրոց և զկենաց. այլ այս ճշմարիտ է՝ զի ընդ այլոց նախորդացն իւրոց համեմատեալ զսա, գտանեմք ըստ բաւականին տեղեակ ազգային դպրութեան և նախանձաւոր գործոց բարեաց, մանաւանդ եթ վառեալ ի սէր ազգին իւրոյ, զգուշաւոր և փոյթ ի զարթուցանել ի համազգայինսն զոգի արիութեան և զյիշատակ քաջագործութեանց նախնեաց և զգինւորութեանցն՝ որ ընդդէմ թշնամեաց եկեղեցւոյն իւրեանց և ազգայնութեան:

Այսոքիկ թափառանցի իմն նշմարին ի հակիրճ տեսութեան անդ զոր տայ մեզ պատմագիրս յառաջիկայ երկասիրութեան իւրում. որ թեպէտ վերջացեալ գտանի դասական և ի կանոնաւոր ոճոյ նախնի դպրութեան մերոյ, և ուրեք ստորին յոյժ յասացուածս իւր և ի բացատրութիւնս իմաստից, մինչեւ զաւտական բառս և օտարազգիս եւս առնուլ ի կիր. սակայն կարելորութիւնն զոր տամք աշխատութեան առնս՝ են պատմական տեսութիւնք անցից վերջին՝ դարուս, որ գործեցան ի մէջ Պարսից և աշխարհին Վրաց և Աղուանից, և յարաբերութիւնքն որ ընդ ազգային պատմութեանս են, որք և ձգին մինչեւ ցամն Տեառն 1723:

Առաջին անգամ տպեալ է մատեանս ի Շուշի քաղաքի, յամի 1839, հրամանաւ և ծախիւք Բաղդասարայ Հասան Ջալալեանց՝ Արքեպիսկոպոսի և Ասպետի Մետրապօլտի և վիճակաւոր Առաջնորդի Ղարապաղու և այլոց:

**Ի ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՈՒԹԵԱՆ  
Տ.Տ. ԳԷՈՐԳԱՅ  
ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ՎԵՀԱՓԱՌ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ  
ՀՐԱՄԱՆԱԻ  
Տ.Տ. ԵՍԱՅԵԱՅ ՍՐԲԱԶԱՆ  
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ  
ԵՒ ՊԱՏՐԻԱՐՔԻ Ս. ԵՐՈՒՍԱԴԷՄԱՅ  
ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ  
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ  
Տ.Տ. ՊՕՂՈՍԻ ՍՐԲԱԶԱՆ  
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ**

Ոմանք յառաջին՝ մանաւանդ թէ յուրվք ի նախկին կորովամիտ իմաստուն և քաջ նա և ի սուրբ արանց յառաջ բերեալ իւրաքանչիւր դարուց և ժամանակաց զեղեալ եղեալ իրաց պատմութիւնս հոգեւորաց և մարմնաւորաց, շարադրեալ թողին ինքեանց առյապապս եկեւոնց ի յիշատակ և ի զգուշութիւն: Որոց զանուանս նոցին ոմանց արանց լուեալ մեր շարագրեցաք աստ սակս պատճառաց երկուց: Նախ՝ զի դիտաւորութիւն բանիս առ պատմութիւնս ներկայիս է՝ յորում եմքս, որոյ նիւթ բանից և շարադրութիւն բառից ի նոցին ուսեալ գուրով գրոց, մի լիցուք ապերախտ նոցին երախտեաց՝ արտաքոյ թողլով զանուանս արանցն երախտաւորաց: Եւ երկրորդ՝ ի նոցանէ թեպէտ ոմանք ի յազգէ Գրեից էին և ի հեթանոսաց, և ոմանք յայլազգ քրիստոնէից՝ այսինքն Յունաց, Ասորոց և Լատինաց, և այլք ի մերս Գայոց ազգէ. սակայն բանք և վիպասանութիւնք նոցա ո՛չ է թարց շնորհաց անենագոր Գոգոյն սրբոյ Աստուծոյ. որոյ այսօր՝ տօնախմբութիւնս է ի գլուխ յոբելեանի պետեկոստէիս: Ընդ որոց և ես յուսամ ընդունել կաթիլ մի յառատ պարգեւաց այնմ պարգեւատուի՝ որ ո՛չ զԳրեայս և զհեթանոսս խտրէ, և ոչ զԵթովպացիս որոշէ, և ոչ ի դաւանողաց իւրոց արժանաւորաց և յանարժանից խորշի. որպէս զի շնորհիւ նորին յաւարտ հասից տկար մտօք սկսելոյ տրակիս:

Արդ՝ որպէս վերագոյնդ խոստացայ զանուանս առաջնոցն, են այսոցիկ: Նախ՝ Ափրիկանոս, Յեսով, Գեքեսիպոս, և Յովսէպոս Գրեայք. և Նսննոս կրօնաւոր, Եւեբիոս, և Ջովսիմոս, Փաստոս Բիւզանդ, և Ջենոր յունաց. Սոկրատ, և Թէոդորիտոս, Յովհաննէս՝ ճեպելու, և Թէոդորա, Յովհաննէս Ասիացի. և Կորայ իմաստուն, Յակովբ Ուրիայեցի: Դիոննեսիոս սարկաւազ, և Իզնատիոս եպիսկոպոս Անտիոքայ, Սլիւայ երէց, և Յովհաննէս ի Քեսնոյ. Դիոնեսիոս Սալիպայ որդի, և Միխայէլ պատրիարք Ասորոց:

Իսկ ի մենջ և յազգէս Գայոց՝ կորովին Ագաթանգեղոս, և այրն Աստուծոյ Սովսես Խորենացի, Եղիշէ սուրբ վարդապետ, և Ղազար Փարպեցի, Թովմա Վարդապետ Արծրունի, և Շապուհ Բարգրատունի, Յովհաննէս կաթողիկոս Գայոց, և Մովսես Աղուանից պատմագիր Կաղանկատուացի, Ուխտանէս եպիսկոպոս Ուրիայու, Ստեփաննոս վարդապետ Ասողմիկ, Առիստակէս վարդապետ Լաստիվերտցի, Մատթէոս վանաց երեց Ուրիայու, Սամուէլ քահանայ կաթողիկէին Անույ, Վանական վարդապետ Տաւուշոյ, և Կիրակոս վարդապետ և Վարդան նորին աշակերտք: Ապա հուսկ վերջին և հուպ ի յետինքս Առաքել վարդապետ Դարիժեցի, որ ունի պատմութիւնս ամաց իբրեւ վաթսուն և հնգից. սկսեալ իռ<sup>1</sup>ծ թուէն մինչեւ իռ<sup>1</sup>ճԺԵ թիւն հասեալ դադարէ: Արդ՝ եթէ գոն այլ ինչ պատմութիւնք ի մեջ մեր և կամ այլ ազգաց, թողաք զայն ի գիտունս նոցին, և զայս միայն յիշեցաք զոր ի գիրս մեր գտաք:

Եւ արդ՝ սոցին աստ յիշեցելոց արանց ոմանք, սկսան որ առաւել հմտագոյնքն էին, ի Ստեղծողէն զարարածս, և ի նախկին մարդոյն Ադամայ, և ռճով իմն անցանելով ընդ դարս և ընդ ժամանակս, և աւարտեալ մինչեւ ի յինքեանց իսկ կեանս: Իսկ ոմանք ինչանաւոր դարուց և ի քաջագոր թագաւորաց և ի սքանչելի արանց սկիզբն եղեալ են զբանս իւրեանց, և այսպէս իրաց ինչ եղելոց մեծամեծաց և փոքունց, և այլ եւս ի բռնակալաց արանց և ի գոռոզաց տիրողաց, և ընդ հաւատոյս Քրիստոսի և եկեղեցւոյ նորին մրցողաց, և հերձուածողաց անբարշտաց, և նեղութեանց ժամանակաց: Նաեւ խաղաղարար և բարեպաշտ թագաւորաց և իշխանաց, աշխարհի շինութեանց, և եկեղեցւոց բարեկարգութեանց և թշնամեաց յաղթութեանց. եւս շարայարեալ են ընդ պատմութիւնս զանազանս և իիացուցանօղս արժանիս լսելեաց, և հասուցեալ են մինչ առ իւրաքանչիւր ժամանակս՝ առ ի խրատ և յօգուտ և ի զգաստութիւն յետագայիցս: Որպէս զի բարեաց արանց նախանձաւորքն ընդ բարիսն գովեսցին,

և չարքն և արհամարհեալքն ընդ նախկին չարեացն արհամարհեալք արտաքսեսցին:

Այլ արդ՝ եղբարք իմ սիրեցեալք ի տէր, քանզի նոքա ի ժամանակս տէրութեան քրիստոնէից թագաւորաց և իշխանաց բարեպաշտից գլուղ, և կամ թէ ընդ իշխանութեամբ այլազգեաց բռնաւորաց անկեալ, որք թեպէտ թշնամիք օրինաց են, այլ կամին շինութիւն և խաղաղութիւն աշխարհի և յուրկութիւն ռամկաց վասն օգտի իւրեանց, այնքան աղէտս և կսկիծ և տառապանս, և աղաղակ, և անբաստանութիւնս տրտնջանօք հանդերձ գրեալ են ի պատմութիւնս իւրեանց, որ և քաջայայտ իսկ է ձերում իմաստութեան: Ապա ո՞րչափ և քանի՞ցս և քանի՞պատիկ պարտիմք մեք ողբալ և հառաչել և աւաղել զողորմելի կեանս մեր. և երկոքումքք ձեռօք հարկանել զգլուխս, և վա՛շ կարդալ զկորստեամբք մերովք, որ ոչ միայն ի թագաւորաց մերոց և յիշխանաց զրկեցաք. այլ և յայլազգի գոռոզաց և ի բռնակալաց, որ ակամայ կամօք հաճեալ և հնազանդեալ էաք ընդ տէրութեամբ նոցին (մնալ) բազում ժամանակս: Որք թեպէտ հակառակ էին եկեղեցւոյ և օրինաց սրբոց, այլ ոչ իսպառ դիմամարտէին: Եւ թեպէտ կեղեքէին, և կողոպտէին զկեանս մեր, այլ ապահով և խաղաղ եւս պահէին զմեզ յարտաքին և յօտար թշնամեաց և յաւարչաց: Ձոռսին եւս եքարձ տէր Աստուած մեր յերեսաց իւրոց և ի մէջ. եթէ վասն անկշռելի և անչափելի և անհամար մեղաց մերոց էր որում յաւետ արժանի եմք՝ զոր կրեմքս, և եթէ յաղագս չափուց իւրեանց լրմանն՝ որ անցեալ էին քան զչափ բնութեանս մարդկան և օրէնսդրին իւրեանց յափշտակութեամբ, զրկողութեամբ, կաշառառութեամբ, պղծագործութեամբ, և ամենայն իրօք չարեօք, թերեւս արժանն տարաւ ի տեղի հատուցման, որ շեղելոց զգործսն քննէ, և զգոյն իբրեւ զգոյ կոչէ. նմա միայնոյ է գիտելի, և կարող է հատուցանել զհատուցումն նոցա նոցին:

Այլ դուք որով եղանակաւ և կամիք ընտրեցէք. բաց ի մեզ եհաս և կատարեցաւ հրաման Տեառն մերոյ և Փրկչին՝ թէ և տարադէպ է ինքեան, եթէ՝ «Չարից գիովին և ցրուեսցի հօտն»: Այսպէս եղել և մեզ. զի յընտանի հաւատակից հովուաց վաղ ուրեմն էաք զրկեալք, այժմ յօտարահաւատ և յայլակրօն տներանց եւս մեկուսացաք. և եղաք իբրեւ նաւաբեկ ոք որ ի մեջ կոհակացեալ աչեաց ծովուն տարաբերի ոտիւք և ձեռօք, և ոչ ուստեքէ լինի փրկութիւն: Քանզի և ես այսպէս գիտեմ՝ թէ ի հնումն և թէ ի նորումս սուրբ հարքն որքան ողբք և սուգ զոր ասացեալ և գրեալ են, զայն նախագիտութեամբ վասն այսր ժամանակիս է, և վասն մեր՝ և ոչ իւրեանց: Վասն որոյ ոչ կարեմ տալ լռութեան. թեպէտ հայիմ և չափեմ զկարողութիւն անձին իմոյ, և անսանեմ յոյժ տկար և անիմաստ և յոռի քան զամենայն մանկունս և զպաշտօնեայս եկեղեցւոյ, և քան զուսումնակիցս իմ և ընկերս ըստ ժամանակիս, մանաւանդ թէ մեղօք զառածեալ և թշուառական կեցօք զբաղեալս. սակայն հայիմ ի քաջսն և ի գիտունսն քանզիս, զիլռեալ յայսմ ամենայնէ անփոյթ առնեն, և հարկանելոյ սրտիս ոչ տոկալ այսմ անտանելի աղետիս, այլ յուսացեալ յամենազօր աջ Տեառն և յառատաձիր պարգեւս: Չոգւոյն՝ որ խլից լսել տայ, համերց խօսել, և արժանաւոր աղօթիւք Տիրուհւոյ Կուսին, և Կարապետին սրբոյ, և ի լոյս անողին զմեզ բազմերախտ հօրն մերոյ մեծին՝ Գրիգորի, և ամենայն սրբոց և եղբարց սրբանու էրից, արկի զանձն իմ ի հոգս գործոյս այսորիկ մտատանջի, վստահացեալ ոչ թէ ի կարողութիւն իմ՝ այլ ի սէր սրբասէր և հեզաբարոյ եղբայրութեան ձերոյ: Վասն որոյ հայցեմ և ժտեմ խոնարհաբար զիջանել ըստ աշակերտացն Տեառն, մանաւանդ թէ աղօթիւք օգնել, և մի քամահելով և պոստելով զանց առնել, գոլով և ձեր կարեկից և բնութեանակից մեզ ըստ բնութեան. զի և ի գիրս աստուածայինս ի յուրով տեղիս մարդասիրութեամբն իւրով իրք նուաստ առաւել յարգի և գովի՝ քան զառաւելն և զմեծամեծս:

Եվ վասն խօրանին վկայութեան սպասու այծեայս եւս նուիրեցին ընծայաբերքն, և Տէրն իսկ գովեաց զլուծայս այրւոյն, և զունակ նմին և ես աղերսեմ ընդունել ձեզ զտրակս զայս իբրեւ զնոյն, որ իբրեւ ի մէջ գիշերի թանձրամած խաւարեալ վերջացեալ ժամանակիս հազիւ թէ այսքանս ընծեռել կարացաք ապագայից ընթերցասեր եղբարցդ, ի փառս Զօր և Որդւոյ և սրբոյ Զոգւոյն, և ի յօգուտ լսողացդ:

**Ն.Ծ. Աստուծոյ  
Կաթողիկոս Աղուանից՝ Տեր Եսայի  
Չասան Զալալեանց:**

## **ՀԱՍՆՈՑ ՊԱՏՈՒԹԻՒՆ ՎՂՈՒՆԻՑ ԵՐԿՐԻ**

### **ԳՂՈՒՆ Ա.**

ԸՆԴ ժամանակս թագաւորութեան ազգին Պարսից՝ որ են կրօնիւք Մահմետականի, յորում տիրէին բռնակալութեամբ սկսեալ ի Կովկասային լեռնէ, և ի յեզերաց կասպիական ծովուն, (որ երկաթի դուռն կոչի,) մինչեւ ի Մազանդարան և Աստարապատ. և անտի սահմանօքն Յոզպեկու հատեալ ի Խորասան, և ի Ղանտահար բերդ, և անտի ձգեալ յեզր ծովուն Զնդկաց ի Բանտար քաղաք և այսր ի Շիրազ և միջոցաւ երկրաւ հասեալ մինչեւ ի Բաքելոն (այսինքն՝ Պաղտաղ.) անդէն և այսր հատեալ սահմանօք նասեալ մինչեւ ի Զամատան և ի ծովն Վանայ. յորմէ և սահմանօքն Սարաց հասեալ ի խոյ և ի Սալմաստ. և Նախջաւանաւ հատեալ ի յերասխ գետ, և անտի Սահաթի Կաղզուանաւ և Կողբաւ անցեալ ի գետն Ախուրեան՝ որ կոչի Արփայչայի: Եւ անտի անցեալ Ղայդուլի անուամբ նահանգիւ և ի սահմանս Վրաց ի Տփլիսի քաղաք և ի Կախէթ՝ իւրովք բոլոր թեմիւք և թումանօք: Եւ ապա հատանի ի լեռն Կովկասու, դարձեալ ի նոյն անուրն Զունարակերտ, (այսինքն՝ Ղարբանդ,) և ի տեղի կայից զխաւորի լեռնորդացն զոր Շամխալն անուանեն, և անուն տեղւոյ նորին Թարխու կոչեցեալ: Արդ՝ ի յայս միջոցի ծոցոյ երկրիս արեւելեայց խառն ընդ հարաւ և ընդ հիւսիս կողմանս Եւրոպիոյ՝ տիրեալ էին ազգն Պարսից որ Ղըլլպաշն կոչիւր, ունելով զաթոռ և զգահ արքայութեան իւրեանց զամենահռչակ արքայանիստ մայրաքաղաքն Շոշ, (այսինքն է՝ Ասպահան. և անդ կալով թագաւորացն՝ տիրեն և իշխեն վիճակեալ իւրոց հնազանդելոց ազգացն ձգեալ յաջ և յահեակ զթեւս իշխանութեան իւրեանց:

Այլ արդ՝ աստուծոյ տարակուսիմք սակս նախնի ցեղապետութեանց՝ թէ յորմէ ազգէ և ծննդոց սերեցան սոքա թագաւորագունք, և կամ յորմէ հետէ յառաջացեալք եղեն. քանզի սրբազան հայրն մեր

Մովսէս քերթողն հաւաստէ մեզ այսպէս, եթէ «Արշակ քաջ պարթեւն վանեալ զՍակեդոնացիսն՝ զղայեակորդիսն Աղէքսանդրի, որ ամս վաթսուն և կամ աւելի կալեալ ունէին զթագաւորութիւնն Պարսից, իր և զեղբայրն իւր Վաղարշակ երկրորդ իւր կարգեալ՝ թագաւոր ի Դայս առաքէ»: Եւ այսպէս ի միոյ ցեղէ եղեալք երկուց ազգաց Պարսից և Դայոց թագաւորք պարթեւքն՝ մինչեւ ի ժամանակս Սասանականին Արտաշրի սպանանելոյ զԱրտաւան արքայ Արշակունի. և ինքն կորգեալ զթագաւորութիւնն Պարսից. և ազգաց տիրեաց մինչեւ յերեսումն Մահմետի, որ զկնի երեսուն կամ աւելի և պակաս ամի տիրելոյն իւրեանց, սպանին զՅազկերտ արքայ Պարսից, և տիրեցին նոցին իշխանութեան. յորմէ տիրապետեալ ոմն Մահմուտ անուն բռնացեալ ի Բահլ, և անտի մինչեւ ի Խորասան. և ապա փոխանակելով զմիմեանս յառաջացեալ առին զՌե: Իսկ որդի Մահմուտին Մասխուտ անուն ի Դոնոյ էառ զԵշապուր, զԽազուիսն, զԱսպահան, և զամենայն տունն Արագու և զՔրտաստան. (այս ըստ սրբոյ վարդապետին Վարդանայ): Եւ ապա ասէ զսոցանէ՝ որդի զհայր փոխանակելով յերկար ժամանակս նստան ի Խազուիսն, որոց անուանք են այսոքիկ, Աբու-ալի, Տաւուք, Չաղրպէկ, Ապու-թալիպ, Տողրիլպէկ, որ զօրացեալ ի Խալիփայէն, և առեալ զիրաման և անուն սուլդանութեան, ընդարծակեաց զսահմանն իւր սկսեալ ի Խորասանայ՝ և զամենայն երկիրն Պարսից:

Զսա փոխանորդէ Արփասլան եղբօրորդի իւր, և զկնի նորա Մելիք շահ կոչեցեալ. և ապա Մահմուտ սուլդան, և յետ նորա Բաքարուլս. և որդի Մահմուտ սուլդանին եհար զԲաքարուլսն, և ինքն սուլդանացաւ: Եւ զկնի Մահմուտի որդի նորա. և Սանճար սուլդան ոմն սպանանէ զնա և առնու զիշխանութիւնն. և ապա Տաւուք որդի նորա. և զկնի Տողրիլ. և յետ նորա Մախսուտ. և ապա միւս Տողրիլ. զկնի որոյ Ալփասլան, որ էառ զկնի քաղաք մինչեւ ի Վրաց տուն, որն պատուեալ ի Խալիփայէն իւրեանց: Եւ այս Ալփասլան փոխեաց այլփի Տողրիլ. և ապա Շահի արմէն, և զկնի Ելտկուլ. զկնի որոյ Փահ-

լաւան և խզիլասլան որդիք սորա՝ որ ի միասին տիրեցին աշխարհաց. և այս հասանի մինչեւ ի ուիզ թիւս հայոց: Յայսմ միջոցի ոչ գտաք զորպէսն, բայց սոյն վարդապետ ասէ, թէ ի ուիզ՝ թուին եկն թաթարն, և ի խորասանու փախոյց զորդիս խորագմ շահին: Իսկ զայլուստ թաթարին՝ և փախուցանել զ. Ջալալատին սուլդանն ի խորասանայ, և յառաջ խաղալն առ մեզ, և յաղթել և տիրելն ամենայն երկրի, և վիճակելով ելանելն և առնուլն զտիեզերս, և պէս պէս շարութիւնք և գործք նոցին զոր անցուցին ընդ ամենայն ազգս արեւելից և արեւմտից, հիւսիսոյ և հարաւոյ, զայս ամենայն ուսուցանեն մի ըստ միոջէ Վանական, Կիրակոս, և սոյն Վարդան վարդապետք և պատմագիրք, որք և հասուցանեն մինչեւ ի շԺԵ թիւս զպատմութիւն բռնակալութեան սոցա. և զկնի ոչ գտաք զորքանութիւն ամաց իշխանութեան սոցա. և կամ թէ որով եղանակաւ բարձան, և ո՛վ ոք էր որ հալածեաց և չքացոյց զնոսա յաշխարհէս մերմէ. և կամոյք էին որք տիրեցին և բռնակալեցան երկիրն Պարսից. մինչեւ ասի ի պԼԵ թուին գալն թամուրլանկին, որ և նա զազանաբար եկեր և մանրեաց, և զմնացորդսն առ ոտն եհար ըստ տեսլեանն. և զամենայն տիեզերս ի հարկի կացոյց, սկսեալ ի Սմրդամտայ մինչեւ ցՍամարիա և ցԵգիպտոս, ժամս ութ և տասն մաշելով ի սուր զամենայն հասակ, և քայքայելով զեկեղեցիս ուր եհաս զնացք ոտիցն, որոյ զհանդամանս չարագործութեանն պատմէ քեզ թովմա վարդապետ Արծրունի: Եւ զկնի սորին գալ Ղարայ Յուսուփ չարին ասէ ի պԺԵ թուին, և կերպակերպ չարիք նորին. զկնի որոյ ի պԺԵ թուին Շահուլս ոմն կրկնաչարագոյն քան զնա երեւեալ, և ապա Ջաղաթայն: Յետ ասորիկ Ջիան շահն ազգաւ թուրք, որ թագաւորակերպ տիրեալ բոլոր երկրին Պարսից ի պԺԷ թուին. և զսա փոխանորդէ Եաղուբ փատշահ որդի իւր, ի ջԼԷ թուին հայոց:

Այս Եաղուբ թագաւոր որ նստէր ի Ղարեթ շահաստանի, փեսայացոյց ինքեան ի քոյր իւր զՀէս Դայտարն, որ էր որդի Շէխսեփուլն որ նստէրն յԱրտաւիլ քաղաքի: Այս Հէս եղելոց սկիզբն և ազգն և որ-

պիտութիւնն ոչ գտաք ուրեք թէ ո՛ր, կամ յո՛րմէ ցեղէ յառաջացեալ քնակեցան աստ: Այս շէխ Չայտարին ծնանի որդի մի զոր անուանեն Իսմայէլ, և վասն ոչ ունելոյ զաւակ եաղուք թագաւորին, վասն որոյ շէխն և կիսն իւր խորհեցան հնարիւք իմն սպանանել զեաղուքն, զի ինքեանց և որդւոյ իւրեանց մնացէ ժառանգ թագաւորութեան. որ և արարին իսկ: Քանզի կոչեցին զնա ի պատճառս պատուոյ, և պատրաստեցին նմա կերակուր մահարար, և ի ճաշակելն նորա՝ իսկոյն զգաց. և ապա բռնի հրամայեաց ուտել և ինքեանց. և այսպէս ի միում ժամու մահացան թագաւորն և քոյր իւր և շէխն. և յաղմկել զօրացն՝ զմանուկն Իսմայէլ փախուցին ի յԱղթամար կղզի (այս ըստ Առաքել վարդապետի դաւրիժեցւոյ վիպասանութեան,) և այսու զկնի զմիմեանքք ելեալ յառաջացան ի գահ իշխանութեան, որ և Սնխուր անուն ոմն բռնացաւ և տիրեաց, և հաստատեաց զաթոռ իւր յԱսպահան ի ջիւղ թուին. և յետ նորա Ալվանդն սուղ ժամանակաւ. որ և տեւեցին մինչեւ իջժ՛ թիւն հայոց: Արդ որպէս ի գլուխ ճառիս խորշելով խոյս ետու ըստ կարգի և ըստ ազգաշարութեան ողջոյն գիտել և գրել ըզկարգ թագաւորութեանն Պարսից, որպէս որդի զհայր փոխանակեալ: Այլ այսքան միայն ի հնագիր պատմութեանց հաւաքեալ զանուանս երեւելի և նշանաւոր արանց գոռոզաց և ամբարշտաց, հասուցաք մինչեւ ցայս վայր՝ ի զբօսանս եղբարց մերոյ սիրելեաց. և Քրիստոսի Աստուծոյ մերոց փառք յաւիտեանս, ամէն:

## ԳԼՈՒԽ Բ.

### Յաղագս սկզբան թագաւորութեան Պարսից, և որք Կարմրագլուխ կոչին. և խանգարման իշխանութեան նոյին:

Արդ՝ որպէս ասացաք զսպանումն եաղուք թագաւորին և շէխ Չայտարին, և փախուցանելն զմանուկն Իսմայէլ ի յԱղթամար կղզի, և զկնի ամաց ինչ զարգանալոյ տղային՝ աղմուկ շփոթի ոչ սակաւ լինէր տանն Պարսից. և ապա միաբանեալ զօրագլխաց և զօրացն

հանն զԻսմայէլն ի կղզոյն և թագաւորեցուցանեն ի յինքեանց վերայ ասելով, թէ սա է ժառանգ երկուց կողմանցն, այսինքն շէխին, և զուրով քվել որդի եաղուք թագաւորին, և սմա անկ է թագաւորութիւնն. վասն որոյ հնագանդեցան և երկրպագին նմա: Եւ նա ելեալ ի ջժ՛ թուին, նախ հալածէ զյառաջ ասացեալ զԱլվանդն, և յինքն գրաւ զիշխանութիւնն. և ապա պատերազմեալ ընդյաջ և յահեակ թշնամիսն-զամս քսան և հինգ, ընդարձակէ զսահմանս իւր ըստ կարողութեան. և վարեալ զիշխանութիւնն. մեռանի ի ջիւղ թուին: Ջկնի որոյ թագաւորէ որդի նորին շահ Թահմազ ի նոյն ամի, այր քաջ և արի: Սա յուրով տեղիս արար ընդ իւրով իշխանութեամբ, որպէս զԱտրպատական և Վրաց աշխարհն բռնութեամբ հնազանդեցոյց. և ի կողմանս Խորասանու նոյնպէս ընդարձակեաց. նա և քազուն կարգս ուղղեաց իշխանութեան իւրում և թեթեւութիւնս հարկաց, որպէս և ասեն: Եւ սա վախճանի ի ռի՛դ թուականին, և փոխանակ կացուցանեն զորդին իւր Իսմայէլ անուամբ. որոյ կամեցեալ զբռնագլուխսն և զանհնազանդ խորամանկսն ի զօրագլխաց և զօրաց իւրոց բառնալ յերեսաց. իսկ նոցա անապարեալ քան զնա ընդ փոյթ կենագրաւեն՝ որպէս ասի հնարիւք իմն մահացուցեալ, և զկնի սորին բերեն զեղբայր իւր Խոտապանտա կոչեցեալ ի Խորասանայ, այր անարի, պակասեալ եւս ի լուսոյ, և սա եւս զամս սակաւս դաժանութեամբ և դառնութեամբ վարեալ զիշխանութիւնն՝ մեռանի. և ապա ի ռի՛թ թուին որդի սորին Ապաս՝ կոչեցեալն Մեծ, շահ նստուցանեն ի Մաշատ, որ և ընդ սակաւ ժամանակս հնազանդեցոյց զըրջագայ թշնամիսն իւր, և ի բուռն էառ զբոլոր երկիր հայրենի իշխանութեան իւրոյ. և ի խորասանայ մինչեւ ցերասիս գետ և զԲաղդատ՝ բաց յԱտրպատականէս:

Վասն զի թագաւորն Կոստանդնուպօլսոյ իսմայէլացի, խորխտն սուլդան Մուրատ՝ կոչեցեալն Խոնդըար, խոչընդակն եղել սմազի եհան զօր և հրաման ի վերայ երկրիս Ատրպատականի՝ գալ և առնուլ զսա. որ և եկեալ առին իսկ զերեւան, զՆախջուան, զԴարեժ, և



զԳանջայ, մինչեւ ի սահմանն Վրաց, զՏփիսիս, և զբոլոր տունն Վրաց. այլ և յայն կողմ կուր գետոյ զՇաքի, զՇրուան, զՇամախի և զՂարբանտ. այսքան քաղաքաց և երկրի տիրէին Օսմանքիք: Եւ զկնի աւարտման պատերազմաց յայն կողմանցն թագաւորն Շահապաս և խաղաղութեամբ նստեալն յԱսպահան մայրաքաղաքի, զկնի սակաւ ամաց ապա դարձուցեալ է զերեսս ի վերայ երկրիս Ատրպատականի առնուլ զսա. որ և եկեալ է բազմօք զօրօք ի վերայ Դաւրիժու, և ըստ բաղդի և աջողման իւրոյ առեալ է զՂարեժ, զՆախջուան, և զերեւան ի միում ամի. և ապա զկնի միոյ ամի առեալ է զԳանջայ և զամենայն երկիրն Ղարաբաղու, զՇամախի, զՂարբանտ և զըջակայս նոցա, զՏփիսիս քաղաք, և զբոլոր տունն Վրաց ի ձեռաց Օսմանցւոց: Եւ զկնի այսոցիկ արարմանց հաշտութիւն եւս ընդ թագաւորին Օսմանցւոց հաստատեալ է՝ զսահմանս և զբաժինս յատկացուցանելով իւրաքանչիւրոց ի մէջ երկուց աշխարհացս Պարսից և Հռոմոնց: Եւ սա այսպիսի քաջութեամբ և արիութեամբ կեցեալ վախճան առնու ռիժ թուին: Եւ ապա զկնի սորա թագաւորեցուցանեն զթոռն սորին Շահսէֆի. ի սոյն թուին յԱսպահան և սա ևս արիութեամբ և խաղաղական կենօք վարեալ զիշխանութիւն իւր՝ փոխի յաստեացս, թողլով զթագաւորութիւնն որդւոյ իւրում փոքր Շահաբասին ի ողա թուին Հայոց: Որ և սա առաւել հաստատեաց զգահ իշխանութեան իւրեանց, և խաղաղացոյց զերկիր և զժողովուրդ իւր յամենայն կողմանց թշնամեաց. որ և յաւուրս սորա շինեցան ամենայն աւերակ գեօղք և քաղաքք, և երկիր աշխարհիս Հայոց և Պարսից. զի կարի քրիստոնէասէր և աշխարհաշեն էր. որոյ աղագաւ հաստատեցան յամենայն տեղիս եկեղեցիք վանորայք և անապատք, մանաւանդ սուրբ Աթոռն Էջմիածնի, և սուրբն Գանձասար յԱղուանս, առ սրբազան Հայրապետին Փիլիպպոսիւ և Պետրոս կաթողիկոսին Աղուանից: Եւ սա եւս այսպէս բարեբախտիկ լեալ յաշխարհի, վճարի ի ո՛ժ թւին. և էառ զիշխանութիւն թագաւորութեանն որդի նորին Շահ Սուլէյմանն ի նոյն ամին. որ և յաւուրս սորա

առաւել խաղաղութիւն եղեւ աշխարհի և շինութիւն աւերակաց, և բազմամարդութիւն երկրի. ուղղութիւն և իրաւունք դատաւորաց, չափաւորութիւն հարկապահանջութեանց. և բարեկարգութիւն ամենայն գործոց և արարողութեանց: Սա եւս այսպէս կառավարեալ զերկիր և զհնազանդեալս իւր՝ վախճանի ի ո՛ժ թուին: Զկնի որոյ թագաւորէ որդի սորին Շահ սուլդան Հիւսէյնն կոչեցեալ՝ ի ժամանակի մերում, ի տիս տղայութեան զոչով ի ո՛ժ թուին:

Արդ՝ զոր ինչ մինչեւ ցայս վայր եղեալ էր՝ ի նախկին գրոց պատմութեան, մանաւանդ ի գրոցն Առաքել վարդապետի ժողկաքաղ արարեալ հաւաքեցաք, որում Տէր ողորմեսցի. յետ այսորիկ պարտիմք ի ներկայ ժամանակս այս՝ յորում կամք, զժագրել աստ. և Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն:

## ԳԼՈՒԽ Գ.

### Յաղագս Վրդովման և խանգարման թագաւորութեանն Պարսից:

Ի տասներորդ ամի թագաւորութեան իւրում Հիւսէյն կոչեցեալ Շահ սուլդանն արար հրաման մարդաթիւ և աշխարհագիր առնել ազգիս Հայոց, և ամենայն ազգաց ընդ իշխանութեամբ իւրով եղելոց. և ելեալ հրամանատարք նորին արք իբրու հաւատարիմք տան նորա՝ գրիչք և քարտուղարք, զի անսխալ և առանց թագուցանելոյ գրեսցեն զամենայն հասակ ի հնգետասանամենից և ի վեր, սպառնացեալ ի հրովարտակին՝ այսպէս. «Եթէ ոք գտցէ զթագուցեալ և զղօղեալ ոք, և յայտնեսցէ զայն արքայի, գլուխ ողղելոյն՝ արքայի, և ինչք նորա աւար այնմ լիցի՝ որ գուշակեացն»: Զոր և արարին իսկ. զի յոյժ յուղմամբ և որոնմամբ զննեալ տեղեկանային պէսպէս հնարիւք և սպառնալեօք: Ի գիւղի ուրումն գտանուտեր գիւղին և զքահանայսն և զհիւրընկալն՝ զոր գգիր ասեն, արգելուին ի տունս ուրոյն և զատ ի միմեանց, և ապա ասել տային զանուանս արանց եղելոց ի գիւղին և գրէին, և քերեալ ի մի վայր՝ հաւասար տեսանէին,

և թե աւելի կամ պակաս գտանելին ասացեալքն ի միմեանց, (և զի թուղթ եւս առնուին ի բերանոյ) նոցա, այսինքն տուչալկա, զի թէ սուտք գտցեն, այնքան տուգանս վճարեսցեն,) կախելով ի փայտ բրածեծ առնէին զարսն ասացեալ ի սակս տուգանին, ընդ նմին կաշառս յղովս և տասանորդս, և զկարգեալ վարծս զինուորացն առաւել քան զչափն առնուին, և ապա զգրեալն կրկնէին: Ապա յետ այսորիկ գրեցին և զվանորայս զանապատս և զգիւղօրէից եկեղեցիսն, ընդ նմին և զեպիսկոպոսունս և զաբեղայս, և զերիցունս առհասարակ ի թիւ արկին. և աւարտելով զնոսա սկսան զրել և զվաճառականսն, զճանապարհորդսն, և զորս սուղ ինչ առետրոյ տեարքն էին, և զամենեսեան ի համարաթիւն գրելով՝ տարեալ ցուցին ատենի արքային: Իսկ անդ եղին հարկս ի վերայ գրելոց գլխոցն՝ երեքպատիկ յաւելմամբ ի վերայ առաջնոյ սահմանին. և ի վերայ եկեղեցական պաշտօնէից որ յառաջնումն ոչ երեւի բնաւ, տասնապատիկ առաւել քան աշխարհականաց ծանր բեռինս եղին. և զսոյն աշխարհագրութիւն հազիւ մինչև յերիս ամս աւարտեցին. զի ի ոճիս՝ ը թուին սկսան և ի ոճ՝ ծա թուին հրաման արարին զերեք տարւոյ զգլխահարկ ժողովորեանն՝ զոր նոր եղին (հաւաքել), նաեւ վասն եկեղեցականաց և կրօնաւորաց կարգեալն ընդ նմին միահաղոյն առնուլ: Ապա ել մեծ վեգիրն Ատրպատականի որ նստր ի Դարեժ քաղաքի, որոյ անունն էր Միրզաթահիր, հազար հարիւր արամբք, և եկն յերկիրս Դարաբաղու և ի Գանջայ քաղաք. և սկսաւ առնուլ յոյժ աւելորոջ քան զգրեալն:

Եւ ցրուեցան զօրքն ընդ երկիրս և ընդ գիւղօրայս ի թիւ արկեալ գրովն. և քանզի յոյժ ծանր էր լուծն և ոչ կարէին տանել, վասն որոյ չարչարէին և կեղեքէին, և ջարդելով առնուին ըստ չափու իւրեանց ի յղովիցն՝ յղով, և ի փոքունցն՝ փոքր, զի (մեծ) զեղն հարիւր յիսուն, հարիւր, կամ յիսուն թուման, և յոյժ փոքրն յերեսուն և կամ ի քսան թումանէ չէր պակաս: Նոյնպէս ի վաճառականաց, և յամենայն արուեստաւորացն առին: Եւ այսպէս ամի ամի զգլուխսն համարէին,

և հարկահանքն եկեալ ճշդիւ առնուին: Յետ այսորիկ միւս եւս կերպիւ հարկս եղին, և անուանեցին զայն, Ապիփոռւրան. դարձեալ միւս, եւս եղին, և զայն ասացին Շահգատի ախրաջաթ. միւս եւս յաւելին, և անուանեցին Շեշտինար, և զայս երեքպատկեցին: Եւ դարձեալ կրկին եւս եղեւ հրաման ելանել և զրել զամենայն սահմանս երկրի, գիւղօրէից և ագարակաց, զհող, զջուր, զայգի, զանդաստան, զծառ, զտունկ, և զամենայն ինչ որ պիտոյ է մարդկան՝ առ հասարակ զամենայն գրեցին, թէ Դայոց, և թէ ալազգեաց, այլ և վրանաբնակաց, և խաշնարածաց. ազգ մի որ թարագամայ ասեն, զնոցին եւս զանդեսայս և զհօտս, և զջոկս և զջուլիրս և զերամս ամենայն անասնոց չորքտանեաց ի թիւ արկին, և յառաջնոցն վերայ կրկին յաւելին զհարկս:

Ձայս ամենայն զոր գրեցաք՝ նորահնար չարիք էր, զոր եղին ի վերայ առաջնոյ սահմանեալ հարկացն, որ և առաջինն եւս ծանրագոյն էր բեռն ի վերայ ժողովորեան. այժմս փոխանակ թեթևացուցանելոյ, զայսքան ևս յաւելին ի վերայ: Եւ դարձեալ որպէս սովորութիւն է Պարսից իշխանութեան՝ յամենայն քաղաքս տէրութեան իւրեանց, և ի վերայ ամենայն երկրի, պետս և գլխաւորս զօրաց. կացուցանել, որպէս Խան, Սուլդան, Դուլրեկի, Վեգիր, Դարուդայ, և Թուլիտար: Յառաջնումն որոյ միանգամ այսպիսեացս իշխանութիւն ինչ տային, ոչ դիւրեաւ փոփոխէին և առնուին ի նմանէ. բայց թէ մեծ յանցանք ինչ և կամ վնաս առնն յայտնիւր, և կամ վասն զրկողութեան և ազահութեան զանգատողք և դատախազք երթային ի դուռն արքայի, և զյանցանս առնն յայտնի կառուցանէին, և ապա հազիւ ուրեմն առնուին յառնէն յայնմանէ զիշխանութիւնն զայն: Իսկ այժմս և այսու թագաւորաւս ոչ այսպէս, այլ թագաւորն և նախարարք իւր կաշառակուր լեալ՝ փոյթ ընդ փոյթ փոփոխեալ հանէին. և ի միում ամի երկուս և երիս տեարս և իշխանս՝ ի միում քաղաքի և զաւառի զկնի միմեանց առաքէին: Եւ նոքա եկեալ՝ որպէս և ինքեանք կաշառօք ստացեալ էին զիշխանութիւնս իւրեանց, նոյնպէս և նոքա այնպէս ա-

մենայն զդատ և զիրաւունս ժողովրդեան ի բաց եղեալ՝ կեղեքէին, կողոպտէին զհնազանդեալս իւրեանց. սոյնպէս առնէին և օրինապահք դպիրք նոցա, այսինքն դատաւորք Շխալսլամք, շէխք, և որոց Ղազիս ասեն:

Դարձեալ յաւելին միւս ևս չարիս, զի որ միանգամ տեարք էին զիւղից և ագարակաց, նաեւ վարձաւորք՝ այսինքն դօնլուղ հատեալ, զօրապետք և զօրք որքան դրամոյ չափ որ ոք և ունէր, զնորին տասանորդն եւս հատին, և թագաւորական արարին, իսկ նոքա ոչ իւրեանց դրամոցն տային, այլ զայն եւս յաւելին և եղին ի վերայ իւրաքանչիւր հնազանդելոցն, և այնպէս առնէին: Եւ մանապէս և այլ բազմահոյլ չարիս յորդեցին. ուստերս և դստերս ուժգին քարշելով, զարս և զկանայս բռնի ուրացուցանելով, և զյետամնացելոց զինչսն և զստացուածսն և զգանձս յափշտակելով՝ և ուրացողացն տալով. որպէս և որքան տօվլաթաւորս և մեծատունս աչօք մերովք տեսաք ի Ջուղայ և յերեւան՝ որ ի վերջին աղքատութիւնն և ի թշուառութիւնն հասեալ էին. և հարցեալ զպատճառն տեղեկացաք, որ վասն ուրացողացն և յափշտակութեան ընչից իւրեանց էին եղեալք այնպէս: Այնպէս զամենայն բարեկարգութիւնս բարձին յերկրէ, զորս մանրամասնաբար ոչ գրեցաք. միանգամայն և օրէնս եղին իւրեանց. իսկ զտան հակառակ՝ փոփոխելով զեղեալ սահմանս նորա, զոր վասն զխահարկաց և դատաստանաց եղեալ էր ի վերայ նոցա: Վասն այնորիկ եհաս և ի վերայ նոցա իրաւունք արդարադատին Աստուծոյ, այլ և ի վերայ ազգիս Հայոց. եւս զոր յապագայն զծագելոց են, սակս նոցին անողորմ և անաստուած գոլոյն կեղեքելոյն և կողոպտելոյն զկեանս տառապելոցն, զորս փոքր ի շատէ ծանուցաք: Իսկ յաղագս անօրէնութեան օրինազանցութեան, սպառութեան և անմտութեան և անմիաբանութեան սոցա, միանգամայն և ընդդէմ դառնալոյ Աստուծոյ և աստուածային գրոց և պատուիրանացն՝ զոր և ծանուցի ձեզ Աստուծով, որ եղեւ պատճառ կործանման ինքեանց, յորմէ Տէր Յիսուս ազատեսցէ, և նմա փառք յաւիտեանս, ամէն:

**Վասն հակառակաց և ընդդիմակայից՝ որ ի տեղիս յուրեան  
ընդդէմ թագաւորութեանն Պարսից:**

Քանզի ըստ նախագուշակութեան սրբոյ մարգարէին Դանիէլի և ըստ լրման ժամանակի տեսլեան նորին, որպէս և կարծի ի բազմաց իմաստնագունից վասն տասն եղջերաց խոյին նշանակ յառնելոյ տասն թագաւորաց յազգէն Պարսից, որպէս թիւ համարոյ սոցին է. և կամ թէ ըստ կամաց նախախնամողին Աստուծոյ, որ զիրաւունս հատուցման իւրոյ, իբրեւ զբաժակն ի ձեռնն ունի՝ և ուն կամի արբուցանէ զնա. և տէր է թագաւորութեան մարդկան և երկրի, որում և կամի՝ նմա շնորհէ: Ըստ որում և այժմս է տեսանել. և զի եղեւ ի ժամանակս սոյն սուլդան Հիւսէին թագաւորիս, ազգ մի ի կողմանս խորասանայ և Ղանտահարու, զորս Աղուանք անուանեն. և ասեն վասն ազգիս այսորիկ՝ եթէ են բնիկ ի լեռնաբնակացն Կաւկասու և յերկրէն Ալանաց, որ են ազգաւ Աղուանք, որ այժմ եւս նախկին անուամբն վերակոչին. և լեալ են հաւատալ քրիստոնեայք, և ապա զկնի ժամանակաց Լանկթամուրն կոչեցեալ բռնակալ, որ տիրեաց յոլով մասին աշխարհիս յաղթութեամբն իւրով, զոր պատմութիւնքն վկայեն զսմանէ, և ասէն վտարանդեալ զազգս զայս ի տեղուոջէ իւրեանց, և տարեալ զքսան և հինգ տունն բնակեցոյց երկրին յայնմիկ: Եւ զկնի ժամանակայց դարձուցեալ են ի կրօնս Մահմետի. և ապա ուռնացեալ և բազմացեալ են, և լեալ իշխանք և պետք յիւրաքանչիւր մասին, և տիրազուխք մինչեւ ի ժամանակս Շահաբաս կոչեցեալ արքային. որոյ յառնուլն զՂանտահար և տիրելն կողմանցն այնոցիկ՝ նուաճին և սոքա ընդ իշխանութեամբ նորին, և զկնի որդուց և թոռանց նոցին մինչեւ ի ժամանակս այս ի ոճ՛ծ թիւս մեր. և ապա սկսան աղմկել և վրդովել կողմանքն այնոցիկ:

Այլ և միւս ևս ազգ որ Պլուճ անուանին, այլ և երկիրն Սովուխ - Պուլաղու զոր թուրքմանն կոչեն, և զխաւոր մի սոցա որ Սուլէյման

պապա աստի՛ն, որ ասէր զանձնէ գոլ յազգէ առաջնոց թագաւորացն որք նստէին ի Ղաւրեօ շահաստանի Ջահանշահ և Եաղուպ անուանեալք, նա և յերկիրն Աստարապատու շրջեցաւ: Եւ զգլխաւոր նոցին Ատինաղուրտ կոչէին. այլ և լեռնականքն Կաւկասու, ծինարնակ ազգքն Լեկաց, որ և Լազկիք՝ և ըստ գրոց Դոնք կոչեցեալք, և բնական թշնամիք ի սկզբանէ երկրիս Ատրպատականի, ազգիս Դայոց և օրինաց մերոց: Սոքա միահաղոյն և զվերոյ գրեալսն ամենեքեան հետեալք թիկունս դարձուցին, և ընդդէմ դարձան հրամանաց թագաւորին Պարսից: Եւ սկսան յիւրաքանչիւր երկրէ զշրջակայս և զմերձակայս իւրեանց կողոպտեալ, գերի առնել, և որոյ ճարակ տալ. և այս ոչ թէ ի միում ամի, այլ յերկար ժամանակս: Եւ ապստամբիլ սոցա սակաւ ամօք, զկնի և կից միմեանց եղեն, և թէպէտ թագաւորն զօրս գումարեալ ի ձեռն զօրագլխաց և սպարապետաց առաքել ի վերայ նոցա՝ բաշխելով և յոլով զանձս, սակայն ոչ ինչ օգտիր, այլ յաղթահարեալ լինէին. թէպէտ ոմանց բազմաւ ջանի և հազիւ ուրեմն դադարեցուցին գխռովութիւնն ոչ այնքան յաղթութեամբ՝ քան թէ հաճելով զմիսս նոցա ըստ կամաց իւրեանց: Բայց կազ կողմանցն Ղանտահարու և Կովկասայնոց յերկարեաց բազում ժամանակս, զոր յիւրում տեղուքն ասասցուք՝ եթէ Տէր կամեսցի: Եւ նմա փառք յախտեանս. ամէն:

**ՂԼՈՒԽ Ե.**  
**ՈՒ ԻՆՉ զործեցին ազգն Դոնաց ընդ ամենայն երկիրս**  
**Աղուանից:**

Ձի յայտնի իսկ է ամենեցուն այս, թէ տուն և կամ այլ ինչ շինուած թէ մեծ թէ փոքր՝ յորժամ հնացեալ փլանելոց իցէ, նախ որմունք և հիմունք խախտեալ բաժանին, և ապա ձեղուն տանեացն իջանէ. և զկնի այնորիկ ամենայն տանիքն ի վայր իջեալ կործանի: Այսպէս եղև և թագաւորութեան Պարսից. քանզի բնակիչք լերինն Կովկասու, որք Լազկիք կոչին, յայսմ կողմանէ լերինն՝ ի տեղի որ Ղախ, Ճար, և Թալա, և այլ գիւղօրայից անուանք յորջորջին, սրոց գլխաւոր էր Ալի սուլդան անուամբ, որ նախ հրամանաւ Շահին նստեր: Սա և այլ յոլովք ինքնագլուխք միաբանեալք ընդ նմա՝ դարձան և ապստամբեցին ի թագաւորէն ի ոճկա թուին. որ և յառաջ քան զայս Ինխսելու երկիրն, այլ և Շաքուա, Պասնջաղ, Մումպարաք, Չարդաթալու, և այլ յոլով գիւղօրայք ասպատակեալ և գերեվարեալ էին և աւարի առեալ: Այժմս եկեալ ի Քանտաք անուն գիւղօրայս՝ իսպառ տարան: Եւ այսպէս զրգռեալ ամ յամէ ասպատակ սփռեալ յայս կողմ և յայն կողմ Կուր գետոյն յերկրին Շաքուայ և Ղապալու և Գասանու նահանգին մինչև մերձ ի Շամախի քաղաք: Իսկ յայսմ կողմանէ յոլովք ի նահանգէն Ղազախու, որ է Ախստելու՝ և ի յերկրէն Ամիրշամ Շատինլուէն որ են Ձակամներն:

Նա և չորս գետն Գանջապասանու՝ այսինքն Շամքօռ, Գանջապասան, Ռսկանապատու ձորն, և Քուրաքպասան. այլ և յոլովք ի գիւղօրէիցն Պարտալու, և զդաշտավայր գիւղօրայսն միահաղոյն կոտորեալ, գերի և աւարի առեալ ամայի արարին, և զմնացեալսն փախստեալ ի լերինս և ի գարանձաւս Արցախու, և իւրաքանչիւր հանդէպ ամուր տեղիսն գերծեալք զապրուստ իւրեանց հոգային: Այլ և ի ոճկի թուին նոյն ինքն Ալի սուլդանն գումարեալ ի վերայ ինքեան զօրս ի նոյն ազգէն Լազկացն թուով ոչ սակաւ քան զուրք հա-

զար, եկե ի վերայ քաղաքին Գանջայու մինչեւ եմուտ ի պողոտայն (այսինքն Քուջան,) որ ի կողմն Սուքօքուլան անուն գեղջն, թոյլ տալով քաղաքացւոցն: Եւ յորժամ մտին ի ներսն, ապա յարեան քաղաքացիքն և կալան աստի և անտի զանցս գնացից նոցա, և կոտորեցին ի նոցանէ մինչեւ ի հազար քսան և մի ոգիս աւելի կամ պակաս, և ոչ ինչ կարացին առնել. այլ յետս դարձեալ ամօթով գնացին ի տեղիս իւրեանց:

Եւ այսքան իրս զոր աստ գրեցաք ի մենք, յոթ և յինն տարի գործեցաւ, սկսեալ ի ռճկ թուէն: Եւ որքան հրաման եղեւ ի թագաւորէն գնալ զօրացն Պարսից ի վերայ նոցա, այսինքն բնակելոցն ի քաղաքն Շամախու և Գանջայու և ի շրջակայս նոցա. և խանքն որք նստին անդ, որքան ջանացին՝ բնաւ ոչինչ կարացին դիմակայիլ, մանաւանդ թե յաղթահարեալ կորացան առաջի նոցա. որպէս և Յասան ալի խանն Շամախու հնգետասան հազար զօրօք գնաց մինչեւ ի սահմանս նոցա. և նոքա յառաւօտու պահուն յանկարծօրէն հասին ի վերայ նոցա և գլուով մասն զօրացն կոտորեալ՝ գխանն եւս սպանին և մնացեալքն փախստեայ դարձան: Այլ և ասպատակեալն Շամքօռու, Օղուրլու խանն Գանջայու եւ ընդ առաջ նոցա և ընդ կրունկն փախստեայ դարձաւ, և եմուտ ի Գանջայ: Այլ և Քիչի խան անուն ոմն իշխող Շաքուայ՝ սուղ ինչ ժամանակ ընդդիմացաւ նոցա, գնա եւս սպանին: Իսկ ի վերայ այսր ամենայնի ազգս այս ժպիրի առաւել ևս համարձակեցան, և ապա ծեռն ամբարձին ի վերայ երկրին Կախեթու և ազգին Վրաց. որ և նախ քան զայս քանիցս անգամ ուժգնութեամբ բախեալ էին ընդ միմեանս, և հեղումն արեան ոչ սակաւք արարեալ երկրցունց կողմանց. որպէս և Իմամդուլի խանն Կախեթու մի անդամ և երիցս փախուցին ի պատերազմէ, և աւարի առին զամենայն կահ և կարասի նորա: Եւ այսպէս յառաջ խաղալով ամ յամէ աւերեցին զամենայն երկիրս նորա, մինչեւ ի հայրենի թագաւորանիստ տեղիսն իւրեանց, և զեպիսկոպոսարանն ի բաց թողեալ՝ ի յամուրս Թուշայ լերանցն ելին: Եւ սոցին. այսպէս և այսքան

ժպիրեւոյն միւս եւս դոյ պատճառ, զոր այժմ գրեցից:

Քանզի յերկրին Շիրուանու ի նահանգին Ղապալու գոյ իշխանութիւն ազգի միոյ Մահմետականի զոր Մէլիք անուանեն, իգիւղն Ղուրթղաշին կոչեցեալ՝ Ղարասու անուանել տեղին: Եւ երեւի թէ սոցին եղեւոմն Մէլիք՝ զոր Մէլիք Միհամճուտ ասեին, այր համճարեղ և բախտիւն յաջողակ, և յոյժ ազահ քան զՅուդա, և անյագ քան զտգրուկ. սա զբոլոր երկիրն Ղապալայու ի բուռն եռն Մախթայիւ ի խանէն Շամախու: Եւ երկիրն էր բարելի և չէն և մարդաշատ, թե Յայ ազգօք, որ ի Ղարաբաղու երկրէն ժողովուրդք յոլովք անցեալ էին յերկիրն այն աւելի քան զտեղականսն. և եթե այլ ազգօք՝ որ բնիկ երկրէն են, յորոց պէսպէս հնարիւք Մէլիքս այս ժողովեալ մթերեաց զանձս յոլովս և սաստիկս ոսկոյ և արծաթոյ, և բռնացաւ ի վերայ ամենեցուն. յորմէ վշտացեալ ամենայն ոք տրտունջ եղեն զմմանէ, որպէս և Յայ ազգն Պօղեբուն ժողովեալ ի դուռն խանին, և ազդ եւս արարին արքային: Եւ ոմն Բարսեղ անուն քահանայ, որ էր բնիկ Ղարապաղու՝ յերկրէն խաչենու, և ի յազգէ Մէլիքաց, էր անդ, որ ընդ գնալոյ ժողովրդեանն սոքա եւս ազգաւ գնացեալ էին՝ և զՍօկուբլու գեղն նորոգ շինեալ և բնակեալսր և քան զայն՝ այլ առաւել ոչ գոյր ի մէջ գիւղօրտիցն: Չսա առեալ յեցին յԱսպահան ի դուռն արքայի, զի ի վերայ ինքեանց արասցէ զիշխանութիւն Մէլիքութեան ազգին Յայոց՝ որ անդ, իբր գլուով յազգէ Մէլիքաց: Որ և գնացեալ ըստ կամաց իւրոց առեալ հրաման յարքայէն՝ եկն. բայց ոսոխն իւր բուռն էր, ոչ կարաց ընդդիմագրաւել կաշառօք կուրացոյց զաչս բռնաւորին Շամախու, և ոչինչ արարին զբանն երիցուն: Ապա ոխս կալան ընդ նմա մեծամեծքն Շամախու. այլ և ի խանէն ապստամբեցան, և գնացին առ թագաւորն զխանն ձգեցին յիշխանութենէ, և զՄէլիքէն տրտնջեցին առ թագաւորն, եթե յոլով զանձս ժողովեալ է, և կամի ապստամբիլ ի քէն: Եւ արար հրաման զամենայն ինչսն զգայուն և շարժուն՝ որ ինչ և իցէ՝ ի գիր ձգել, և առնուլ (ի գանձն) թագաւորական. և զինքն իւրայնովք ի բանտ արկանել. որ և արարին իսկ: Եւ եկեալ

դահիճք արքայական ի գիր և ի դաւթ ձգեցին զտուն և զհնչս Մելիքին. և զինքն ընդ եղբօրն, որոյ անունն Ահմատ կոչիւր, կապանօք տարան ի քաղաքն Շամախի, և արկին ի բանտ ամիսս ինչ. և դարձեալ արձակեալք անտի՝ կրկին կարգեցան յիշխանութեան իւրեանց: Բայց ինչք սոցին զոր առին յարքունիս, ասէին զբի ոսկւոյն և արծաթոյն լինիլ իբրև եօթանասուն հազար թուման, զատ ի յայլ կահից և կարասեաց, և չորքոտանեաց և մլքերաց, որոց ոչ գոյր թիւ: Քանզի ասէին լինիլ սմա ջրաղաց հինգ հարիւր. տիմկ որով զբրինձն զտեն՝ հինգ հարիւր. քուն և մաջինակ որ գապիրշումն քարշեն՝ հինգ հարիւր. գետք և առուք զոր արիս ասեն՝ ի վերայ արարից և արմտեաց երկրագործութեանց՝ յուրվք. և զայլն մտօք նկատեսցես փարթամութեան առնս:

Ղարծեալ զկնի սակաւ ամաց անցելոց ի վերայ այսր ամենայնի, Յիւսէին անուն ոմն խան Շամախու՝ կրկին ըմբռնեաց զսոսա երկուսին՝ եղբարսն հրամանաւ Շահին, և զլխատեաց. և ապա ի ծեռն առեալ զերեսին որդիս նորա զոր Փէյքար, Իպրահիմ, և Ղասում ասէին, յոյժ չարչարանօք և խոշտանգանօք ետ հանել և զմնացորդս ընչիցն, զոր ասէին քսան և հինգ հազար թուման. այսքան եւս այժմս առին և թողին զնոսա: Ապա Փէյքար անուանեալն զնաց առ Շահն, և առեալ զՄելիքութիւն՝ եկն ի տեղի իւր, և վարէր ըստ հայրենի սովորութեան: Որ և զկնի չորից ամաց միւս եւս Յիւսէինն անուն խան Շամախու, ետ գլխատել զՓէյքարն ի տան իւրում, և ապա զտունն, զկանայս և զորդիս և զամենայն ինչսն իբրև ի գերութիւն վարեալ ածին ի Շամախի. զկնի որոյ զննեալ և որոնեալ զամենայն զոր ինչ և ունէր, զայն եւս առին և արարին արքունիս. որ և զհամար ընչից սորին եւս ասացին զոլ ակելի քան զքսան հազար թուման: Բայց եղբարք սորին Իպրահիմն և Ղասումն փախստեայ զմացին առ Ալի սուլդանն վերոյ յիշեալ. և անտի անցին յայն կողմն լերինն առ մեծամեծս ազգացն այնոցիկ Լազկեաց: Ջի որպէս ասեն՝ երկուս կրօնս ունիլ Մահմետականաց, ոմանք Շիայք կոչին՝ որ են Պար-

սիկք և Ղըզլպաշք, և ոմանք Սունիք՝ որ են Օսմանցիք, և այս լեռնականք և Աղուան ազգն Ղանտահարու, և Օղպէկք, և Պուխարացիք, և Արաբացիք, և այլ յուրվք որ ընդ տիեզերս կան կրօնիւքս այս. և վասն այն զմացին սոքա առ Լազկիսն, վասն զի ընդ նոսա միակրօնք էին, և ասեն թէ բակոտն և բացագլուխ շրջեցան ի դրունս նոցա վասն նախատանաց իւրեանց՝ զոր կրեցին ի ծեռաց Շիայիցն. քանզի այսպէս է սովորութիւն տեղւոյն: Եւ այսպէս շրջիւն նոցա ի նախանձ դրդեաց զնոսա, և չարացան քան զգազան կատաղի. և յոյժ ամօթ համարեցան ինքեանց այնպէս լինիլն նոցա. և ծայն տուեալ միմեանց՝ միաբանեցան և խրախուսեալ ժողովեցան ի մի վայր բիրք բիրուց և հազարք հազարաց. քանզի միշտ լսէին ասպատակ յայսն կողման եղելոց Լազկեացն՝ զոր նախ յիշեցաք, և նոքա եւս խորհեալ էին զալ և խառնիլ ի սոսա: Որպէս և յանցեալ ամին Սուրխայ անուն զլխաւոր նոցա եկն մինչեւ ի Վրաց տուն անցեալ ի ներքոյ Կախեթու և Տփիսիսու ասպատակեաց զգաւառսն զոր Սոմխէթ և Ղումնախ ասեն: Իսկ այժմ սակս վերոյ ասացեալ պատճառին ի ոճճհա թուին օգոստոսի տասն, գրոհ տուեալ առ հասարակ միահաղոյն ազգս այս Լազկիք, ամենայն զլխաւորօք իւրեանց որք էին այսոքիկ, նոյն վերոյ ասացեալ Սուրխայն, Շամխալն, Իսմին, Յաճի Ղոավութն և Ալի սուլդանն, ամենայն զօրութեամբ իւրեանց եկին ի վերայ քաղաքին Շամախու, և յաւուրս ութ սաստիկ կռուեցան, և ոչ կարացին առնուլ: Այլ և համբաւ եւս եհաս առ նոսա ի հետուստ, իբր թէ յոմանց յետագայից իւրեանց աղմկեալ իցէ զերկիր նոցա. վասն որոյ յանկարծակի ի զիշերի միում դարծեալ դարձան ի տեղիս իւրեանց: Եւ ապա քաղաքացիքն Շամախու սկսան ամրացուցանել զկողմանս քաղաքին ցանկովք խորագունիւք, և շրջապատ որմովք: Այլ և զօրք եւս հասին աստի և անտի, (այսինքն Գանջայու և Դարաբաղու և Սգանու.) այլ հրամանաւ Շահին եկն նոր խան քաղաքին, որոյ անունն էր Յիւսէին խան Ազուլեցի: Եւ զայն ամն պահեցին զքաղաքն մինչեւ ի գալ միւս ամին ի նոյն, ժամանակն և ի նոյն ամիսն:

Դարձեալ եկին վերոյ յիշեալ լեռնականքն քան զառաջինն յոյժ ամբոխիւք, և պատերազմեցան ուժգնութեամբ զաւուրս երկոտասան, և ապա առին դքադաքն Շամախի ի ոճի թուին Յայոց, օգոստոս ամսոյ, ի սուրբ Աստուածածնի պահոցն, յաւուր չորեքշաբաթի: Եւ եղև այսպէս առնուլն. քանզի որպէս յառաջն ասացաք՝ երկու կրօնս ունիլ Մահմետականաց, այսինքն՝ Շիայք, և Սունիք, և բնակիչք յայսմ քաղաքի ընդ կիսոյ էին, այլ և յուրվքն էին Սունիք, վասն որոյ ի Սարու-Թօբրաղ անուանեալ կողման բնակիչքն ի գիշերի բացին զկողմն իւրեանց, և ի ներքս առին ի զօրացն թշնամեաց. և ընդ լուսանալ առաւօտուն ինքեանք եւս խառնեցան ընդ նոսա և ետուն ի ձեռս զքաղաքն: Եւ մտեալ ի ներքս Լազկացն՝ սուր ի գործ արկին ի վերայ Ղզլպաշ Մահմետականացն, և զինչ ասացից տակս աղետիցն և արեան հեղմանցն, որ իբրև զգետ հոսէին ի մէջ շուկայիցն. և ութ հարիւր այր ի գլխաւորաց քաղաքին և ի մեծամեծացն փախուցեալ և մտեալ էին ի մամն իւրեանց, որ ի մէջ քաղաքին: Եւ զնոսա անդ իբրև զամ ստունս գեմուին, միանգամայն հատին և սպառեցին զձայն վայոցն: Եւ յուրվք ի զօրացն Պարսից և ի գլխաւորաց նոցա փախստեայ գնացին յո և կամեցան, սոցա ինչք, տունք և ընտանիք և զաւակք նոցա գերեվարեցան և աւար գնացին: Եւ զխանն Յիւսէին ըմբռնեալ պահեցին քանի մի աւուրս, և ապա ետուն ի ձեռն Իպրահիմ աղին եղբօր յառաջ ասացեալ Մելիք Փեյքարին, զոր սպան փոխանակ հօր և եղբօր իւրոյ: Իսկ հայ ազգ քրիստոնեայքն թէ բնակիչք քաղաքին, և թէ այլ գիւղօրից՝ ոչ այնքան վնասեցան կոտորմամբ, այլ սակաւ ոմանք. զի խնայեցին ի նոսա ողորմութեանքն Քրիստոսի. այլ աւարունն ընչիցն ոչ սակաւ եղև, նա և գերեվարութիւն զաւակաց և որդւոց նոցա ոչ եւս եղև: Քանզի գիտել եւս արժան է յաղագս փարթամութեան: քաղաքիս այսորիկ Շանախու, զի ի մեծէ Շահաբասէն՝ որ էառ զաա ի ձեռաց Օսմանցւոց ի ոճիե թուին, մինչեւ ի ոճիե թիւն շիւղ մի ոչ եր ստերիւրեալ յայսմանէ. և զի եր պամտար Կասպիական ծովուն և յամենայն կողմանց վաճա-

ռականացն տեղիք բնակութեան, և վաճառի, և շահաւետութեան ի Յնդկաց և ի Յոռոմոց, ի Տուրայու, ի Ռուսաց, և յամենայն երկրէ. և այսպէս լի էր ամենայն ստացուածովք և զանձիւք: Վասն որոյ ազահ և անագորոյն ազգն այն, մանաւանդ թէ իշաբարոյքն կողոպտեալ առ հասարակ մերկացուցին, որպէս այր մի անկեալ ի ձեռս անաստուած աւազակաց. և ժողովեալ զամենայն կերպուկերպ ինչս, ոսկիս և արծաթս, բերեալ արտաքոյ քաղաքին կոտորեցին ուրոյն ուրոյն, և բաժանեալ յինքեանս բարձեալ տարան ի տեղիս իւրեանց: Եւ այնքան տգէտք էին պիղծքն այնօրիկ, զի ոսկի մի տային հացի միոյ և սեխի միոյ: Եւ այսպէս եղև առունն ամենափարթամ մայրաքաղաքին Շամախու:

Եւ զկնի առման քաղաքիս գլխաւորքն Գանջայու և Երեւանու ազդ արարին և բողոք բարձին առ արքայ, և ինքեանք գրոհ տուեալ ամենայն զօրօք իւրեանց եկեալ հասին ի Պարտաւ քաղաք Աղուանից առ ափն Կուր գետոյն: Խանն Երեւանու ամենայն կողմնակալօք իւրովք, նոյնպէս և խանն Գանջայու ամենայն մեծամեծօք իւրովք, և այլք աստի բազմութիւն զօրաց յոյժ իբրև երեսնից հազարաց: Բայց յարքայէ ոչ եղև և ոչ եհաս օգնութիւն սոցա, քանզի յոյժ ի տարակուսի կայր և զբաղեալ էր ի պատերազմաց կողմանցն Ղանտահարու. միայն թէ բանիւ և թղթով հրամայեաց սոցա առնել զոր ինչ և կարասցեն: Իսկ մարդախանձ զազանքն այնօրիկ՝ իբրու թէ ընդելք որսորդք, քաջք, և կիրթք ի չարիս իւրեանց, և ահարկաղէնք, որ զանուն և զձայն նոցա միայն լսելով սարսէին և դողային մերձակայք նոցին, ըստ որում և այժմս նոցա եւս հանդարտ և անվրդով առանց աղաղակի ժողովեալ էին յայն կողմն գետոյն մեծի, և ի գիշերի միում լռութեամբ անցեալ էին յայս կոյս: Իսկ թուլամորթ և կանացի ազգն Պարսից ըստ սովորութեան իւրեանց՝ որ ի գիշերի մինչեւ ցառաւօտ խնճոյիւք արբենան, և յառաւօտուն ընդ խոր քնովք անկանին: Եւ ապա ընդ լուսանալն և ընդ ծագել արեւուն յարեան ի պատերազմ. և մինչ սոքա դանդաղանօք պատրաստեցին զինքեան, նոքա յաղթա-

հարեալ արկին առաջի իւրեանց, և կոտորմամբ հասուցին մինչեւ ցլեռնոտայքն Արցախու՝ առ Դրոդուական գետովն և Խաչինաձորով: Եւ այսպէս կորագլուխ եղեալ Պարսիցն նանրացան ի խորհուրդս իւրեանց և խազիրքն ժողովեալ զկապուտս նոցա, դարձան ի տեղիս իւրեանց խնդութեամբ: Այս գործեցաւ ի ռճի թուին, յաւուրս աշնան: Եւ յանցանել ձմեռնային սաստկասառոյց գետոյն, և մերձեմալ գարնանային քաղցրահոտ շնչմանն որ մեզ դառն երեւեցաւ, յաւուրս մարտի ամսոյն, մերձ առ մեծի պասեքի Տեառն, դարձեալ վառեցան ի չար խորհուրդս իւրեանց, կրկին և եռապատիկ ժողովեցան զնոցեան և միացան իբրեւ զմարախ բիրք բիրուց և հազարք հազարաց, ելին ի Դուռն Երկաթի և հասին ի Շամախի, և անտի եկեալ բանակեցան ի տեղին ուր Երասխ և Կուր գետք խառնին ընդ միմեանս հանդէպ բերրի դաշտին Սուղամու: Եւ զօրագլուխ մի Պարսից գոր Չարխաճի ասէին, և նա բանակեալ էր յուրով զօրոք ի յերկիրն Բարկուշատայ՝ ի վերայ նոյն Երասխայ. նա ի լրոյ համբաւոյ սոցա ինքնահալած եղև իբրեւ այր ամբարիշտ, և ի չիք դարձաւ ի տեղուոջէ իւրմէ: Իսկ Գոնքն քաջամարտիկք և արեանարբուք եկին զառ ի վեր գետոյն մինչեւ ի սահմանս Բարկուշատայ ի յերկիրն Տիգակայ, և պատեցին զնա զլերամբք և զդաշտօք. և կարգ առին զօրէն ոճոյ և ինքեանք որպէս բազմահմուտ հնձօղք անկան ի վերայ նոցա: Եւ զի լի էր երկիրն քրիստոնէիք՝ այլ և Մահմետականօք յուրովիք, և բաղխեցան ի վերայ նոցա յաւուր մեծի շարաթուն, և զաւուրս երիս ունայն և թափուր կացուցին զամենալի երկիրն այն ի մարդկանէ և յանասնոց, կոտորմամբ և զերութեամբ: Եւ անտի անցին յերկիրն Վարանդու, զնոյն և անդ գործեցին. բայց Մելիքն նոցա Պաղիր անուն փութով ընդ առաջ յղեաց նոցա արս ոմանս յիւրմէ անտի ընծայիք, և զկէսն թափեաց զդերուոյն և զերկիր իւր: Եւ անտի եկեալ հասին յերկիրս Խաչինու՝ անահ և համարձակ դիմօք, զի բնաւ ոչ ոք ընդդէմ եկաց նոցա ոչ սիրով և ոչ բռնութեամբ. այլ առհասարակ զթիկունս իւրեանց փոխանակ դիմաց դարձուցին ի նոսա

վասն որոյ և դիրամուտ եղեն աստ, և զոր ինչ կամեցան՝ զայն գործեցին, զոր ոչ բաւեմ ասել:

Քանզի ի միում՝ աւուր ի Կարկառ գետոյն մինչեւ ի Դրոդուական գետն և յերկիրն Չարաբերդու, միահաղոյն ասպատակ սփռեցան ընդ լերինս և ընդ դաշտս: Նախ՝ զփայտաշէն տունս և զյարկս զիւրօրէից հրձիգ արարին, և ապա յարձակեցան ի վերայ գերեաց, իջուցին ի գլխոց լերանց և հանին ի ծակաց վիմաց, և ի ներքոյ անտառախախտ և մացառուտ մայրից: Եւ ժողովեալ ընդ նոսա զկահ և զկարասիս նոցա. ընդ որոց խառնեցին և զհօտս, զջոկս, և ըզօղիւրս խաչանց և արջառոց և ամենայն չորքոտանի անասնոյ, և միահաղոյն խառնեալ վարեցին զառ ի վայր ընդ գետն Խաչինու. զդերին և զանասունսն ընդ միմեանս խառնեալ էին իբրեւ զհեղեղ յորդ, և որպէս զբանակ մեծ ի զնայն իւրեանց. զոր և մեք աչոք իսկ նկատեաք. քանզի փախստեայ հասեալ էաք ի կատար լերինն որ ի վերոյ է սրբոյ Աթոռոյն Գանձասարայ. և ոտք նոցա ոչ հասին առ մեզ: Եւ մեք անտի հայեցեալ տեսանեաք զեղելոցն իրագործութիւնն. և այս եղև ի ռճիա թուին, ապրիլ ամսոյ քսան, յաւուր աշխարհամատրան կիրակէին: Ատանօր տեսանելի է զաղետ յետամնացելոց, զսուգ կոտորելոցն, և զաշխարս գերելոցն, զկսկիծ մարցն, և զաղետ գերեալ զաւակացն, զողբումն որք մնացելոցն, և զաւարառութիւն ընչիցն. զծայն լալականացն խառնեալ ընդ վայումն միջակտուր արանլե, որդարեւ զքնութիւնս լերանց և կարծր վիմաց փոխեալ՝ ընդ ինքեանս սգակից ինքեանց առնէին:

Իսկ զօրք թշնամեացն տարեալ զաւարն և զգերին խառնեցին ի բանակն իւրեանց. և չուեալ ի Ականակերտու բանակեցան ի վերայ գետոյն Դրոդու, զոր այժմ թարթառ կոչեմք ըստ պարսկականին, ի վերայ կամրջին որ Դառի-քօրփի ասեն: Եւ ոչ տեսցին անդ այլ և ոչ կարացին այնքան վնասել երկրին Չարաբերդու և Պարտայու՝ որպէս մերոյս: Քանզի նոքա յառաջադգած լեալ ի յամուր տեղիս լեռանց իւրեանց ամբացեալք էին, մանաւանդ թէ երիտասարդք ո-



մանք ընդդիմանային եւս, որ և զբազունս հարին ի թշնամեացն. վասն որոյ զաւարն և զգերին ճեպով անցուցին ընդ գետն մեծ Կուր ի կողմանս իւրեանց, և ինքեանք փութացան հասանել ի վերայ քաղաքին Գանձակու:

Յայսմ վայրի ի սոցանե վառնդեալ և նեղեալ մեծ պարոնն Քալպալի-պեկ, տէրն Չարաբերդու և Ղայնաղին, որ էր թռն Ղարկահ-ղուլի սուլտանին: Քանզի փախստեայ ի յերկիրն Շարոյ էր, և անճարակ լեալ եկն առ սոսա: Եւ զկնի քանի ինչ աւուր գորդին իւր պատանդ տուեալ, և ինքն գաղտ դարձեալ եկն ի տեղի իւր: Իսկ նոքա զնացեալ նստան ի վերայ քաղաքին Գանջայու յաւուրս երկոտասան, աւելի կամ պակաս. և ոչինչ կարացին առնել, քանզի ի ներքուստ ընդդիմանային քաղաքացիքն, և մանաւանդ թէ յառաջագոյն իրագեկ եղեալ վասն սոցին զալստեան մեծատունք և ճոխք քաղաքին, զնացին ի քաղաքն Տփխեաց առ թագաւորն Վրաց Վախտանկ, զալ յօգնութիւն իւրեանց. և նա խոստացեալ էր զալ: Եւ յորժամ մօտ եղեն սուրհանդակք, և պատգամաւորք սոցա մի զմիոյ կնի ընթանային զկնի նորա. որ և եկին իսկ քառասուն հազարաւ ի վերայ Լազկացն: Եւ յորժամ եհաս նա յերկիրն Շամքօռու, սոքա աստի սկսան սորիլ դէպ ի Կուր գետն. և այսպէս մի ըստ միոջէ զնալով ի մեջ երից աւուրց չիք եղեալ կորեւտն ի տեղիս իւրեանց, և բարձան ի միջոյ: Իսկ թագաւորն Վրաց Վախտանկ եկն յոլով ամբոխիւ աւելի եւս՝ քան զքառասուն հազար, և բանակեցաւ ի հարաւոյ կողմանէ քաղաքին Գանձակու օգնութեամբն Քրիստոսի Աստուծոյ, որուն փառք յաւիտեանս ամէն:

Վասն երկրորդ Գալստեան Թագաւորին Վրաց  
Վախտանկին ի Գանջայ:

Եւ որպէս պատմեցաք զառաջին զալուստ Վախտանկին յօգնութիւն քաղաքին Գանձակու ի կողմանէ աւարառութեան ազգի Լազկաց, որ և զնոսա փախստական արար առանց պատերազմի. և ինքն անսօրեայ աւուրք նստաւ մերձ ի քաղաքն: Իսկ քաղաքացիքն բանատար եղեն առ նա, և ասեն. ոչ լինէր զալուստ Լազկացն առ մեզ և յերկիրս մեր, եթէ ոչ ի մերձակայից և ի շրջակայ ազգացս որ զմեօք են համակամ և միաբան չէին լեալ ընդ նոսա: Քանզի ի սատարելոյ սոցա եկին նոքա, վասն զի միակրօնք և համադէնք և Սունիք են: Արդ՝ եթէ դու մեծի Շահին բարեկամ և սիրելի ես, և մեզ կամեցող, պարտիս և դու զնոսա գերել աւարել և կողոպտել: Եւ պատճառ մի սոցին այսպէս ասելոյն. զի վասն զալստեան նորին յօգնութիւն ինքեանց, բազուն և յոլով դրամս խոստացեալ էին նմա, և ի չտալն իւրեանց զնոսա, մատմեցին զնա ի ձեռս նորա: Եւ զի էր յաւուրս գարնան ի յամսեանն մայիսի, ի ռճհա թուին, և առ հասարակ վրանաբնակ ազգքն՝ որ և Թարաքամայ կոչին, որ խաշնարածք ելեալ էին ի լերինս և ի հովանոցս և ի խոտաւետ տեղիս ըստ նախնի սովորութեան իւրեանց, մանաւանդ թէ փախստեայ իսկ էին և նոքա ի յահե Լազկուն, և այժմ ի թելադրութենէ Գանջեցւոց, որոց զլխաւորն էր Ջաւատ անուն խանն, իրաման արար Վախտանկն զօրաց իւրոց ելանել ասպատակ ի վերայ այնոցիկ յորոց նոքա ասացին: Եւ իսկոյն զունդագունդ ելեալ Միլեկան ազգն Վրաց առաւել անողորմ քան զԿովկասայինսն. սփռեցան ի լերինս և ի ծորակս և յարձակ վայրս երկրի Ջակամու, Շամքորոյ, Գանջապասանու, Ոսկանապատու, Քուրաքչայու, և Պարտայու, մինչեւ ի Գուլստան գեղն և ի գետն Դրդու: Եւ թէպէտ սպանութիւն և գերեվարութիւն ոչ այնքան արարին, սակայն զոր ինչ տեսին աչք նոցա, չորքոտանի անասուն, մին-

չեւ ի հաւ և ցկատու և ցշում. իսկ զանշնչից ոչ է ասելի, զի մինչեւ զվայտեղէն և զպրտեղէն և զխեցեղէն տարան:

Եւ եթ այս այսպէս, և զի՞նչ գրեցից սակս պիտոյ և պատուական ընչից և գոյիցն ոսկեղինաց և արծաթեղինաց, և այլ ազգի ազլի կահուց և կարասեաց. և զի ասելի՝ թէ ի բազմութենէ աւարին, այսինքն պղնձոյն. երկաթին, և շորեղինին ոչ բաւէին բռնակիրք. այլ սայլիւքն որ ընդ ինքեանս՝ այնու կրէին ի բանակս իւրեանց, որ էր մերծ Գանջայու, ի Չօլակ անուանեալ վայրն:

Եւ զայս ոչ թէ միայն յառաջ ասացեալ Մահմետականացն արարին ոչ. այլ ընդ նոսին խառնեալ և զամենայն գաւառս Յայոց ի վերոյ գրեալ յերկրէն միահողոյն աւարի առին զշարժուն և զանշարժուն: Եւ զի լինէր երբեմն գունդ ինչ զօրացն Վրաց. դիմէին ի գեօղ ինչ քրիստոնէի, և նոքա քահանայիւք և ժողովորօք ընդ առաջ լինէին նոցա խաչիւք, շուրջառօք, զանգակօք, և մոնեղինօք իբրև զքրիստոնէի: Իսկ Վրացիքն ի վերայ անկեալ կողոպտէին զզգեստսն, և զեկեղեցիսն, զգիրք, և զամենայն անօթս. զարս և զկանայս, և զամենայն ինչս գեղջն մերկ ի սօրէ կողոպտեալ և աւարի առեալ գնային. և այսպէս զամենայն գաւառս և զեկեղեցիս կողմանցն Գանձակու աւեր և թափուր արարին յամենայն ընչից, և լցին զբանակս իւրեանց: Այլ զթիւ հօտից և անդէոց և առջառոցս կարէ ասել. քանզի կարգ և սովորութիւն է նոցա յամենայն աւարէ զտասանորդն տալ զխաւորին իւրեանց. այժմ ասէին զբաժին նորա ի յոչխարաց քսան և հինգ հազար, և յարջառոց ինն հազար, և զայլն մտօք զմնեսցես: Եւ զի այս եղև օգուտ մեզ զալուստ նորին, որ զմնացեալն ի ժպիրի ազգէն Լեզկաց ճռաքաղ արարին ազահ և անյազ և անողորմ ազգն Վրաց:

Եւ զիտելի է, զի թագաւորն Վախտանկ. ինքն այր բարեսէր, երկիւղած յաստուծոյ և քրիստոնէասէր և անյիշաչար էր, որ և յուրով անգամ պատուիրէր և սպառնայր զօրացն ոչ առնել այնպէս զքրիստոնեանայսն՝ որպէս վասն սպանութեան և գերութեան. իսկ նոքա ըստ

բիրտ և սոպա բարուցն Վրաց՝ ոչ անսային, և ոչ լսէին հրամանի զխաւորին իւրեանց: Եւ սոքա զայս արարեալ, և ապա դարձան ի տեղիս իւրեանց, և մնաց երկիրս մեր անտերուց և անգլխաւոր, և սկսան մարդիկ իւրաքանչիւր զհաճոյս կամաց և մտաց իւրեանց առնել: Ուստի և իմ տեսեալ զայս և նկատեալ զի յաւարտ իրին ոչ գոյնշան խաղաղութեան, որ և էի ի մէջ բանակին Վախտանկայ, ընդ նոսին և ես ուղղեցայ գնալ յերկիրն Վրաց. որ և գնացաք իսկ. և յուրի անկեալ ի Գանջայու ի ռճհա թուին, մայիսի ամսոյ ի՛ը, մտաք ի Տփլիսիս քաղաքն, մնալով անդ ամիսս չորս:

Եւ ի մտանել աշնան, յամսեանն սեպտեմբերի սկսաւ կրկին դառնալ ի Գանջայ Վախտանկ այսու պատճառաւ:

Քանզի ի նուազիլ միանգամայն և ի ստորանկանիլ թագաւորութեանն Պարսից, զոր յապայն ասասցուք զորպիսութիւն իրին, առաւել եւս բարձրացան թշնամիք նորին մանաւանդ կայսերքն մեծամեծք և ինքնակալք Ռուսացն ասեմ՝ որ Մոսկովու, Պետրոս թագաւորն և Յոռոմոց Կոստանդնուպօլեաց տիրօղ իսմայէլացիս. սոքա յիւրաքանչիւր դիմաց սկսան զօրս յարուցանել ի վերայ երկրին Պարսից. զի Ռուսն օգնել կամէր թագաւորին Պարսից, իսկ Յոռոմայեցիսն (օսմանցիսն) առնուլ ջանայր յինքն ասելով: Որովիտես ալլք կամին տիրել կողմանցն այնոցիկ, ինձ անկ է առնուլ. վասնզի յառաջնմէ մեր էր երկիրն Ատրպատականի: Սակս այսր պատճառի սկսան յերկուց կողմանց պատգամս յղել առ թագաւորն Վրաց Վախտանկ մին ասելով՝ յիմ կողմն լեր, և ինձ հնազանդեա. և միւսն թէ՛ հաւատակից իմ ես, պարտիս ինձ անսալ և առ իս գալ. քանզի պայման ուխտի և ժամադիր եղեալ էր թագաւորն Պետրոս առ Վախտանկ, զի յայսմ աշնան ի մուտն հոկտեմբերի՝ ինքնին ի քաղաքն Շամախի հասեալ և զնա անդ ի պատրաստի գտանել պարտ է: Յայսմ նուագուն թագաւորն Պարսից, որ հանդերձեալ էր անկանիլ իզահոյից և ի բարձրութենէ իւրմէ, փութանակի հրովարտակ մի հասոյց առ Վախտանկ, եթ «Քեզ ետու զամենայն իշխանութիւն

կողմանցի Գանջայու, և ամենայն Ասորպատականի. և զքեզ կարգեցի զլուխ և սպարապետ ամենայն իշխեցողաց կողմանցի այդոցիկ. վասն որոյ շեշտակի զօրս գումարեալ գայցես ի Գանջայ, և պահ կալեալ զգուշացիս կողմանցի այդոցիկ. ի թշնամեաց մերոց»:

Ձայս հրաման և ի նմանէ ընկալեալ Վախտանկին, մտախոհ եղեալ ի սենեակ սրտի իւրոյ այսպէս, եթէ ահա ստիպիմ ի յերկուց ինքնակալացս, որ և հարկ է զհրաման միոյն կատարել: Արդ՝ հոռոմայեցիս այլահաւատ և օտար զուրկ ի մէնջ, կամի բռնութեամբ տիրել երկրի մերում: Իսկ կողմս այս, զի մին բուն տէրն մեր է, ասիւքն Պարսից թագաւորն և միւսն հաւատակից մեր և քրիստոնեայ կայսր է, մանաւանդ թէ՝ հզօր զօրութեամբ: Արդ՝ դիմեալ գնացից ի հրամանս նոցա, և յորոց ի նոցանէ յաջողեսցի զհրամայեալն՝ զայն կատարեցից:

Եւ իսկոյն հրաման եհան զօրս գումարել, և վաղվաղակի ժողովեալ զբազմութիւն զօրաց ազգացն Վրաց և Հայոց, և ոչ ոք եթող զոր ոչ երարծ ընդ իւր, ընդ որոց և զիս էառ բերել. զի զնալն մեր անդ մինչեւ ի դարծս այս սիրով ընդունէր զմեզ, և զոռծիկն մեր ի յինքենէ էր հրամայեալ: Եւ ելեալ ի Տփիսիսու անբաւ ամբոխիւ, զորոյ որքանութիւնն անբաւ գոյով՝ ոչ կարացաք դրել, և եկեալ հասաք ի կամուրջն կոտորած՝ զոր Անդբօրիի ասեն, յաւուր տօնի սրբոյ խաչին: Եւ ապա աստ յայսմ աւուր յառաջ կոչեցեալ զիս՝ հրամայեաց նախ քան զինքն յառաջ ընթանալ յերկիրն մեր Ղարաբաղ, և զհայագուն զօրսն՝ որ գումարեալ կային անդ ի ձեռն Մելիքներաց, և չորս գլխաւորք եղեալ երիտասարդացն, որոց անուանքն են Աւան, Շրուան, Շահնի, և Սարուխան, որ և սոքա հարիւրապետք և իուզպաշի կոչէին: Սոքա ընդ Մելիքներացն Ղարաբաղու, զկնի առաջին դառնալոյն Վախտանկին և խախտելոյ իշխանութեան Պարսից, միաբանեալ ընդ ինքեանս զամենայն քաջասիրտ և արիական և զօրեղ մանկունս և երիտասարդս տանս Աղուանից, ըստ ինքեանց կազմեալ էին զօրս բազումս աւելի քան զերկոտասան հազար, և

ամրացեալք յամուր վայրսն Արցախու: Եւ այսպէս բազում արիութիւնս ցուցեալ յերկրիս մերում. որոց պատմութիւնքն յառաջակայս յաճախագոյնս գտցես:

Այժմս լուեալ սմա զսոցանէ՝ շեշտակի ճեպով յղեաց զմեզ վասն առ ինքն ածելոյ զնոսա կազմ զօրօք: Եւ ըստ հրամանին եկեալ մեր յարդարեցաք զնոսա ըստ օրինի զորաց իշխանաց, վասն զի անվարժք էին զինուորական սպասաւորութեանց. և այսպէս բովանդակեալ զամենայն, և իբրեւ տասն հազար արս ընտիրս և սպառազէնս ընդ որոց և զդասս քահանայից և պաշտօնէից մերոց առեալ մեծաւ ճոխութեամբ և խնճոյիք, համարելով նոր նորոգեալ զիշխանութիւն Հայոց. և զնացեալ իջաք մերծ ի քաղաքն Գանջայ, Չօլակ անուն վայրն՝ յաւուրս երիս: Քանզի և թագաւորն Վախտանկ բնակեալ էր յայն կողմ քաղաքին՝ ի վերայ ջրոյն որ Ղօչղարի գետ և Ղարա-արխ ասեն. և զկնի երից աւուրց ապա հրաման արար զնալ առ ինքն: Որ և լեալ զնացաք: Եւ ի մերծենալ բանակի նորին, ինքն իսկ հրաման արար զօրաց իւրոց ընդ առաջ լինիլ մերայնոցն՝ իբրեւ ողջամբ ընդունելով զնոսա:

Եւ այսպէս մեծաւ շքով ի հանդիպիլ միմեանց երկուց կողմանց զօրացն, և իբրեւ զօրէն պատերազմի ռազմ՝ կարգեալ ճակատ առ ճակատ. և քաջամարտիկ մանկունք մերոցս դիմաց յառաջ խաղացեալ ճախր առեալ քաջընթաց երիվարօք, և զինակազմ զրահիւք պարէին յանդիման ճակատուն. և ի ծայնէ հրացանացն սրասայր և թնդայր վայրն այն. և փոշեխառն ծուխ նորին, իբրեւ զկայծակնափայլ ամպ արդել զճառագայթս արեգական, մինչ զի զմիմեանս հազիւ տեսանէաք: Եւ այսպիսի ուրախութեամբ հասեալ իջաք մերծ առ բանակի նոցին: Ջոր տեսեալ Վախտանկին այսպիսի յառաջադիմութիւն մերայնոցս, ցնծացաւ ի հոգի և ի մարմին իւր: Եւ նոյնժամայն յղեալ կոչեաց առ ինքն զմեզ, և զգլուխ կարգեալ տղայսն և զՄելիքն. և յորդորական բանիւ յուսադրեաց, և զօրացոյց ասելով. «Այսուհետեւ զօրասցիք և քաջ լերուք իբրեւ յորդիս զօրութեան. և յու-

ստեղծել և յուճեղծ մի երկնչիցիք, զի ահա հասնալ է ժամանակ փրկութեան քրիստոնէից՝: Եւ դարձուցեալ զբանն առ մեզ, և յոյժ շնորհակալ եղել զմէնց, և ի վաղիւն զամենեցուն զգլխաւորսն խիլայեաց, և այսպէս մնացաք առ մնա իբրեւ աւուրս քսան և հինգ:

Եւ պատճառ սորին այսպէս սեր առնելոյն ընդ մեզ՝ այս է. առաջինն՝ զի բնական սեր ունէր ընդ ազգիս Յայոց, և ոչ այնքան հաւատայր ազգին իւրոյ Վրաց որք միշտ նենգաւորք և խորամանկք են, վասն այն կամէր զայս զօրս՝ մանաւանդ ազգս Յայոց իւրն սեփականեցուցանել որպէս Տփիսիսեցիք: Եւ երկրորդ՝ զի յատկացեալ և ըստուզեալ էր զալուստ մեծի կայսերն Ռուսաց Պետրոսի, և կամէր Յայ և Վրացի զորօք ճոխ և շքեղ ընդ առաջ ելանել նմա: Բայց զկնի յոլով ակնկալութեան և սպասաւորելոյ համբաւոյ զալստեան նորին, մեղք մեր յառաջընթաց եղել քան զնա. զի եկն եհաս ի Պուռն Երկաթի, այսինքն՝ ի Ռարբանտ, և բնակիչք տեղոյն ինքնակամ յօժարութեամբ ետուն զամուրն ի ձեռս նորա: Բայց ոչ գիտեն զինչ պատահումն եղել. ոմանք ասացին զի ի հիւանդութեն և յայլ պատահարաց վնասք յոլով եղել զօրուն և կոտորումն ծիող վասն անընդելութեան նոցա օդոյ եղանակի երկրին. այլ և նաւաբեկութիւն եւս լեալ զինուց, այսինքն քապախանից, (ճէպհանէ) և ռոճկաց զօրուն. և այլք այլ իմն պատճառս ասացին: Զինչ և իցէ, անտի եղել դարձ նորին, թողեալ զօրս յոլովս անդ՝ պայմանեալ ի գալ միւսոյ ամին դարձեալ դառնալ. և ինքն չոքաւ յերկիր իւր:

Եւ զայս լուեալ Վախտանկին, սա եւս սկսաւ դառնալ ի տեղի իւր, զի ի սոյն նազում համբաւ եւս եհաս ի դրանէ թագաւորին Պարսից, թէ զքաղաքն Ասպահան՝ Շահն և զօրք իւր իներքս փակեցին, և մերձ են ի յառնուլ: Այլ եւս զկնի իւր սուրհանդակքս եւս հասին, եթէ ահա ի հին թշնամեաց քոց կամին յառնել ի վերայ տան քաղաքիս քո, փութանակի պարտիս հասանել այսր: Յաղագս որոյ վաղվաղակի յարուցեալ դարձաւ ընդ կրունկն, և սուղ ինչ պատերազմեալ ընդ Ղազախու երկրին սակս առաջնոյ ինչ քինու իւրեանց, գնաց ի տեղի իւր ի քաղաքն

Տփիսիս: Իսկ մեք անյոյս մնացեալ առաջնոյ ասացեալ յուսոյն, դարձաք իւրաքանչիւր ի տեղիս մեր, և ամրացաք ի լերինս ուր և դժուարին էր:

Բայց սակս որպիսութեանց Վախտանկին դարձեալ կայ մեզ ասել սակաւ ինչ պատմութիւն. զի զկնի դառնալոյ նորա՝ տակաւին բռնաւորն Գանջայու և Կախեթու և Երեւանու և Պօրջալուիւն, և Դազախու ի տեղիս իւրեանց էին: Սոքա ամենեքին թշնամիք եղեալ ընդ նմա, մանաւանդ ուրացեալն Սիամմատղուլի խանն Կախեթու, որոյ յառաջն Կոստանդ ասէին, ի թառանց թամրազին, և Օղուրլու անուն խանն Գանջայու, որ ազգաւ և ի բնուստ թշնամիք էին ընդ ազգին Վախտանկայ, այժմս միաբանեալ առ Յասարակ յապստամբութիւն, գրեցին զՎախտանկայ առ նոր անուանեալ շահն Թահմազ. քանզի մի ի յորդուցն շահ սուլտան Յիւսէինին՝ Թահմազ անուն, փախուցին յԱսպահանու և բերեալ ի Ղազուիւն արարին շահ: Առ սա գրեցին վասն Վախտանկին. եթէ խորհեալ է զապստամբութիւն ի քէն, միաբանէ ընդ ինքեան զազգն Յայոց և Վրաց, և դեսպանս արձակեալ առ թագաւորն Ռուսաց՝ զի եկեալ տիրեսցէ աշխարհիս քո: Արդ՝ զոր ինչ Յաճոյ է յաչս քո՝ Յրամայեսցես առնել: Իսկ նորաքուսիկ անխտենմն այն գրեաց հրովարտակ, եթէ զերկիրն Կախեթու, և Քարթալայ որ է Տփիսիս, բոլոր թուճանօք Վրաց՝ ետու Սիամմատղուլի խանին, և զամենայն գլխաւորս և զզօրս Գանջայու, Երեւանու, և զայլս և զվերոյ գրեալսն ետու օգնական նմա, ահա պահանջեմ ի ձէնց զՎախտանկն, և կամ զգլուխ նորին վաղվաղակի յղեսցիք առ իս: Եւ ապա յամենայն կողմանց ժողովեալ զօրաց ի վերայ նորա, և նոյն ինքն Սիամմատղուլի խանն, ի գիշերի գաղտ եմուտ ի բերդն՝ ոչ գիտելով Վախտանկին. և ընդ առաւօտն յանկարծակի ձգեաց թոր ի վերայ տանն Վախտանկին և ասէ. «Յրաման է շահին, ել աստի և գնա»: Իսկ նա հազիւ թէ զերծեալ էր ի Պարսից, զոր յառաջնմէ երդմամբ կոչեցին առ ինքեանս, և զամս երիս ի խորին Պարսկաստան յաքսորս պահեցին. և դարձեալ ետուն զսպարապետութիւն զօրացն Պարսից զամս երկուս. և ապա զիւր Յայրենի իշխանութիւնն

տուեալ Գրանայեցին դառնալ ի տեղի իւր: Յետ այսորիկ եկեալ Վախտանկն, և Թեպէտ առ երեսս այլ իմն կերպիւ կեայր, այլ ըստ մտացն խորհրդոյ՝ զղջունն սրտին յայտնի էր յաչս ամենեցուն. վասն այնորիկ յոյժ ատելիք էին նմա Պարսիկք, և նոքա նմա Թշնամիք. յայժմս ի յորինիլ ի վերայ նորա պատերազմն, և նա ժողովեաց զօրոս իւր, մանաւանդ զքաղաքացիսն, զհայազուն քաջամարտիկ զօրականսն, որք զհոգիս և զորդիս, զինչս և զանձինս եղեալ էին ի վերայ նորա յօժար սրտիւ. և սկիզբն արարին զպատերազմն յառաջներորդէն դեկտեմբեր ամսոյ՝ մինչեւ ի տօն սրբոյ Ջատիկին. Վախտանկն վրացի և հայ զօրօք, իսկ Միամմատղուլին պարսկօք:

Ձինչ այլ գրեցից սակս աներութեան և գերութեան և սպանութեան երկրին այնմիկ, այլ զի առաջինն այն եղեւ աւարտ իւշին որ զօրսն Պարսից յաղթահարեցին կոտորմամբ և փախստական առնելով. և ըզնոյն ինքն զՄիամմատղուլին զատ ի զօրացն միայն գտեալ՝ Հալաձեալ էին մերծ ի հասանել. և նա գերասունակ երիվարին ուղղեալ էր առ գետն Կուր ի ներքոյ քաղաքին Տփիսիսու: Եւ այնպէս երիվարն արկեալ զինքն ի գետն, և ի լող անցեալ յայնկոյս՝ զնաց յերկիր իւր ի Կախեթ. քայց ոչ կասեցաւ և ոչ դարդարեաց ի չարութենէ, զի որպէս զուր վառեալ էր ի չար նախանձուն, և երկրորդ Յուդայ զգեցեալ էր զհայր իւր զսատանայ: Քանզի զնացեալ իսկոյն ընդ իւր միաբանեցոյց զազգն Լազկեաց և զամենայն կովկասային լեռնաբնակիչսն, զի անյուսացաւ ի կողմանցն Պարսից. և ընդ նոսա ուխտեաց այսպէս. «Եթէ սատարիցէք ինձ և օգնիցէք ի. ձերով օգնականութեամբ և զօրութիւ առից զքաղաքն Տփիսիս, ձեզ տաց որ ինչ գտանիցի ի նմա, ոսկի և արծաթ, կերպասեղէնն, կտաւն, և բրդեղէնն, պղինձն, երկաթն, և անագն, միանգամայն և գերին զոր ի նմա գտանիցէք: Եւ ի վերայ այսր ամենայնի ըստ մարդաթուի ձերոյ ամենայն մարդոյ երիս Թուման եւս յիննէն տաց, միայն թե մեծ նախանձու իմոյ զվրժմն առիցօ:

Ձայս լուեալ ինձանէ կիրթքն ի չարիս, և աշխարհակործան մոլեգին լեզունն սաղայելի, զի այսպիսի անտիս ետ զօրապետն իւրեանց, և յոյժ զուարճացան ի սիրտս իւրեանց, և խոստացան կատարել զկամս

նորա: Եւ վաղվաղակի ի մի վայր ժողովեալ բազմութիւն յոյժ վայրենաբարոյ ազգացն լեռնական բարբարոսաց, հանդերձ զլխաւորօքն իւրեանց զոր Ալի սուլթան և Իսմի ասէին, և այլք սմանք: Եւ յերիս բաժանեալ զօրս վիճակաւ ելին ի վերայ ամենափարթամ քաղաքին Տփիսիսու, որում ի բազում ժամանակաց ցանկային. և յանկարծ իմն եկեալ պաշարեցին զքաղաքն: Քանզի զօրք Վախտանկին ցրուեալք էին, և ինքն անհոգ կայր. և աուրս ինչ դիմակայեալ՝ և ետես զի յուստեքէ ոչ եհաս օգնութիւն, այլ և ոմանք ի գլխաւորացն Վրաց և մեծամեծաց յետս չոզան ի նմանէ, որ էր Ղարաղալխանու Կեօրզի յերիս Թաւն և Ղափլանեցիք, և ի քաղաքէն ոմանք ևս: Ձայս տեսեալ Վախտանկին՝ զի յամառելն ոչ օգուտ բերեինքեան և ոչ քաղաքին, իւրովի ել արտաքս ի քաղաքէն յեզր ինչ: Եւ հրաման ետ զլախաւորաց քաղաքին ելանել ընդ առաջ նորա և յօժարութեամբ առնուլ ի ներքս զօրն. զի թերես մի իսպառ աներեսցեն զնոսա, և զի զերծցին ի գերութենէ և ի սատակմանէ, վասն զի խնայեաց ի քաղաքն, քանզի սեփական Հայրենիք իւր էր: Եւ ինքն զնացեալ ի վեր ամրացաւ ի խորին Վրաստան, և անտի ստեպ ստեպ հրեշտակս և դեսպանս առաքելր առ թագաւորն Ռուսաց, զի զօրս հասուցէ ինքեան ի թիկունս, և ոչ ժամանեաց:

Իսկ Միամմատղուլին յորժամ եմուտ ի քաղաքն հանդերձ բազմութեամբ Լազկեացն, և իսկոյն սկսան որոնել զքաղաքն տանէ ի տուն, և դրանէ ի դուռն. այլ և զեկեղեցիսն ամենայն և զվերնատուն և զներքնատունն նոցա: Եւ զի ի յուրվ ժամանակաց և այսր անդրդուելի էր ի թշնամեաց, և խաղաղացեալ ի պատերազմի ամենափարթամ և վայելուչ քաղաքն Տփիսիս. և որպէս ամենեցուն է յայտնի, բազմաշխատ վաճառականք են արք տեղւոյն, և փափկասունք և գեղեցկատիպ կանայք, ուստերք և դատերք նոցա, և ըստ կենցաղոյս քաղաքավարութեան անմանք ի բազմաց ապարանիք գեղապաճուճօք զարդարեալ, կահիւք և կարասեօք ուռճացեալք. և ըստ ժամանակի իշխանութեան Հայոց զամենայն սպասս և անօթս տանց և սեղանոց նոցա գլուղվս փոխանակ պղնձոյ՝ արծաթեղէնս և ոսկեղէնս էին կազմեալ. իսկ զհանդերձից և զգեստուց զարդուց ականակուռ դիպակաց մարգարտաշարաց պայծառութիւն՝ դիտեա որչափ որ միտք քո բաւն: Այլ վասն եկեղեցեացն

շքեղութեան և պայծառութեան զինչ ասացից. զի յոյժ շքեղացուցեալ էին ոսկեղինօք և արծաթեղինօք և դիպակօք և ամենայն կահիւք և կարասեօք և անօթեղէն սպասիւք: Ձայս ամենայն գրեալքս ի ծեռն առին վայրենի և անազորոյն և ազահութեան մասամբ անյագ գազանաբարոյ և տգրկանման ազգքն այնոքիկ. և կողոպտեալ թափեցին յինքեանս զբազմութիւն աւարին և զմանկանց և ղաղայոց, կանանց և աղջկանց՝ զաչաց զհաճոյսն առին ի գերութիւն. իսկ զխայտառակութեանց զչաւի ո՞ կարտ պատմել, և զաւարին զթիւն ո՞ կարտ ընդ գրով արկանել: Բայց սպանութիւն և այլ անելի գերեվաւութիւն ոչ այնքան արարին, վասն զի ոչ եթող խանն. այլ նոքա և ոչ նմա լսէին, քանզի զխոստացեալ դրամն խնդրէին, վասն որոյ ծանր հարկս էարկ ի վերայ քաղաքացւոյն անչաւի համարօք, իրբեւ քառասուն հազար թուման, և առեալ զայն՝ ետ նորա, և արծակեաց զնալ ի տեղի իւրանց:

Վ Ե Ր Ջ



Աղվանից երկրի  
համառոտ պատմութիւնն՝  
հորինված Աղվանից կաթողիկոս  
Տ. Եսայի Դասան Ջալալյանցի կողմից

ս. Դակովբյանցի առաքելական  
Աթոռի տպարանում  
Երուսաղեմ  
1868-ՌՅԺԷ

Եսայի կաթողիկոս, որի անունը թերևս կգտնվի Աղվանից տան կաթողիկոսների գավազանագր(ք)երում, բայց մենք առաջիկա այս երկասիրության միջոցով ենք միայն ծանոթանում նրա անվանը: Ինչպես հայտնի է՝ Չասան Ջալալյանցը հնագույն երևելի և իշխանագուն տոհմից էր, որոնց կենցաղն ու նշանավոր գործերը մեր ազգային պատմության մեջ փառավոր տեղ ունեն: Սա նստեց Գանձասարի Մետրոպոլիտության Աթոռին<sup>75</sup> (որի գահակալները կոչվում էին Աղվանքի կաթողիկոս)՝ 18-րդ դարի առաջին քառորդում, սակայն [նրա] կյանքի և կենսագրության մասին ձեռքում չունենք կարևոր և ստույգ ծանոթություններ [տեղեկություններ]: Բայց ճշմարիտ է այս, որ սրան համեմատելով իր այլ նախորդների հետ՝ գտնում ենք, [որ] ըստ ազգային դպրության և նախանձավոր բարի գործերի՝ բավականին տեղյակ [է], մանավանդ եթե սիրով [է] վառված իր ազգի [նկատմամբ], զգուշավոր է, հոգատար՝ համազգային [խնդիրներում] արթնացներլու արիության ոգի, Նախնիների և զինվորականների քաջագործությունների հիշատակ՝ ընդդեմ իրենց եկեղեցու և ազգայնության թշնամիների: Սրանք սփռված ձևով նշմարվում են այն հակիրճ տեսության մեջ, որ առաջիկա իր երկասիրության մեջ մեզ է տալիս այս պատմագիրը, որ թերևս ավարտված գտնվի մեր դասական նախկին կանոնավոր ոճի դպրության մեջ, ստորև՝ իր ակնառու խոսքերում և իմաստալից բացատրություններում, զրի առնելով անգամ գավառական և օտարազգի բառերը: Սակայն այն կարևորությունը, որ տալիս ենք այս մարդու աշխատությանը, վերջին դարի անցքերի պատմական տեսություններն են [անցքերը], որ կատարվեցին Պարսկաստանում, Վրաց և Աղվանից երկրներում, և այն հարաբերությունները, որոնք [կապված են] ազգային պատմության հետ, որոնք ձգվում են մինչև տիրոջ 1723 տարին:

Առաջին անգամ այս մատյանը տպվել է Շուշի քաղաքում, 1839թ.՝ արքեպիսկոպոս, Մետրոպոլիտի ասպետ<sup>76</sup>, Ղարաբաղի և այլոց վիճակավոր առաջնորդ Բաղդասար Չասան Ջալալյանցի հրամանով և ծախսերով:

**S. S. Գեորգի՝  
ամենայն հայոց  
աստվածաբանտիր վեհափառ կաթողիկոսի  
հրամանով  
(նրա պատրիարքության օրոք)  
S. S. Եսայի սրբազան եպիսկոպոսի  
և ս. Երուսաղեմի պատրիարքի  
և S. S. սրբազան արքեպիսկոպոսի՝  
Կոստանդնուպոլսի պատրիարքության  
օրոք**

Առաջ ոմանք՝ մանավանդ նախկին կորովամիտ, իմաստուն, քաջ, նաև սուրբ մարդկանցից շատերը, առաջ բերելով յուրաքանչյուր դարի, ժամանակների հոգևորների և մարմնավորների [կողմից] զեղված-եղած դեպքերի ու իրադարձությունների պատմությունները և շարադրելով, հիշատակ ու զգուշացում թողեցին իրենցից հետո եկողներին: Մենք լսել ենք նրանց՝ որոշ մարդկանց անունները և այստեղ ներկայացնում ենք [նրանց] երկու պատճառով: Նախ՝ խոսքս ուղղված է ներկայիս պատմության, որտեղ մենք կանք, [իսկ] խոսքի նյութը և բառերի շարադրանքը նրանց գրքերից սովորած լինելով՝ ապերախտ չլինենք նրանց երախտիքի նկատմամբ՝ դուրս թողնելով երախտավոր մարդկանց անունները: Երկրորդ՝ թեպետ նրանցից ոմանք իրեաների ազգից էին և հեթանոսներից, ոմանք՝ այլազգի քրիստոնյաներից, այսինքն՝ հույներից, ասորիներից և լատիններից, ուրիշները՝ մեր հայոց ազգից, սակայն նրանց խոսքերն ու վիպասանությունները առանց աստծու ամենագոր ու սուրբ հոգու շնորհների չէ, որի տոնախմբությունն է այսօր՝ Պենտեկոստեսի հորեյամի ուղեկցությամբ [զլխավորությամբ]: Դրանց հետ ես էլ հույս ունեմ այն պարզևատուի առատ պարզանեղից ընդունել մի կաթիլ, որը [պարզևատուն] չի զանազանում իրեաներին և հեթանոսներին, չի որոշում [սահմանում] եթովպացիներին և չի խուսափում իր արժանավոր ու անարժան դավանողներից, որպեսզի նրա շնորհիվ տկար մտքով սկսած գրիս ավարտին հասնեն:

Արդ՝ որպես վերագույն, խոստացա [քեզ ներկայացնել] առաջինների անունները, սրանք են. նախ՝ Ափրիկանոս, Յեսավ, Չեքեսիպոս և Յովսեպոս<sup>78</sup> իրեաներ, Նոննոս կրոնավոր, Եվսեբիոս<sup>79</sup>, Ջովսիմոս, Փավստոս Բյուզանդ<sup>80</sup>, Ջենոբ հունաց, Սոկրատ<sup>81</sup>, Թեոդորիտոս, Յովիաննես՝ Ճեպելի, Թեոդորոս, Յովիաննես ասիացի, Կորա իմաստուն, Յակովբ Ռուրիայեցի, Դիոնեսիոս<sup>82</sup> սարկավագ, Իգնատիոս եպիսկոպոս Անտիոքա, Սյուա երեց, Յովաննես՝ Քեսնից, Դիոնեսիոս՝ որդի Սալիպի և Միխայել պատրիարք Ասորվոց<sup>83</sup>:

Իսկ մեզնից և հայոց ազգից՝ կորավին Ագաթանգեղոս և այրն աստծու Մովսես Խորենացի, Եղիշե սուրբ վարդապետ և Ղազար Փարպեցի, Թովմա վարդապետ Արծրունի և Շապուհ Բագրատունի, Յովաննես կաթողիկոս հայոց և Մովսես Աղվանից պատմագիր Կաղանկատվացի, Ռիստանես եպիսկոպոս Ռուհայի<sup>84</sup>, Ստեփանոս վարդապետ Ասողնիկ, Արիստակես վարդապետ Լաստիվերոցի, Մատթեոս վանքի երեց Ռուհայի, Սամվել քահանա Անիի<sup>85</sup> կաթողիկեի, Վանական վարդապետ Տավուշի, նրա աշակերտներ Կիրակոս վարդապետը և Վարդանը<sup>86</sup>: Ապա ամենավերջինը և դեպի հետինները՝ Առաքել վարդապետ Դավրիժեցի, որն ունի մոտ վաթսուհինգ տարվա պատմություններ՝ սկսած 1050 թվականից մինչև 1115 թվականը, [որին] հասնելով՝ ընդհատում է: Արդ՝ եթե մեզնում և կամ այլ ազգերի մեջ կան ինչ-որ այլ պատմություններ, թողնում ենք դրանք իրենց գիտուններին, իսկ [մենք] հիշեցինք այս, ինչ գտանք մեր գրքերում:

Եվ արդ՝ այստեղ հիշված նրանց մարդկանցից ոմանք, որ առավել հմուտներն էին, սկսեցին արարածները ստեղծողից [աստծուց] ու նախկին մարդուց՝ Ադամից և ինչ-որ եղանակով անցան դարերի ու ժամանակների միջով՝ ավարտելով մինչև իրենց կյանքը: Իսկ ոմանք նշանավոր դարերից, քաջագոր թագավորներից և սքանչելի մարդկանցից իրենց խոսքի սկիզբն են դրել, այն է՝ եղած մեծամեծ և փոքր իրադարձությունների, նաև բռնակալ մարդկանց ու գոռոզ տիրողների, Քրիստոսի հավատի և նրա եկեղեցու [դեմ] կռվողների, ամբարիշտ հերձվածողների, նեղ ժամանակների [պատմությունն են արել], այդպես էլ՝ խաղաղարար և բարեպաշտ թագավորների ու իշխանների, աշխարհի շինությունների և եկեղեցու բարեկարգությունների, թշնամիների [նկատմամբ ունեցած] հաղթանակների [պատմությունը]: Նույնպես պատմություններում շարադրել են հիացմունք [պատճառող] զանազան [իրադարձությունների



մասին, որոնք] հաճելի են [սելիքին [ականջներին]: Յուրաքանչյուրը դրանք հասցրել է մինչև [իր] ժամանակները՝ որպես խրատ, օգուտ և զգաստություն հաջորդներին, որպեսզի բարի մարդկանց բարի գործերով գովեն նախանձավորները, և չարերն ու արհամարհվածները, նախկին չարիքների հետ արհամարհվելով, արտաքսվեն:

Իսկ այժմ [ասեն], Իմ սիրելի՛ եղբայրներ [տիրոջ սիրելիներ], քանի որ նրանք քրիստոնյաների բարեպաշտ թագավորների և իշխանների տերության ժամանակներում են եղել և կամ թե այլազգի բռնավորների իշխանության տակ ընկած, որոնք թեպետ հավատի թշնամիներ են, բայց աշխարհին կանենում են շենություն ու խաղաղություն և ժողովրդի աճ իրենց օգուտի համար, աղետները, կսկիծն ու տառապանքը, աղաղակն ու ամբաստանությունը՝ բողոքներով ու դժգոհություններով հանդերձ, գրի են առել իրենց պատմություններում, որ հենց քաջ հայտնի է ձեր իմաստությանը: Ապա մենք որքա՞ն, քանի՞ անգամ և քանիպատի՞կ պարտավոր ենք ողբալ, հառաչել և վա՛յ տալ մեր կյանքին, երկու ձեռքով խփել գլուխներին և վա՛շ կարդալ մեր կորուստներով, որ ոչ միայն մեր թագավորներից և իշխաններից զրկվեցինք, այլև այլազգի գոռոզներից ու բռնակալներից, որ ակամա (կամքով) հաճել և հնազանդվել էինք բազում ժամանակներ մնալ նրանց թագավորության տակ: Նրանք թեպետ հակառակ էին եկեղեցուն և սուրբ հավատին, բայց իսպառ դեմ չէին մարտնչում, առձակատում: Եվ թեպետ կեղեքում էին, կողոպտում [մեզ], [դառնացնում] մեր կյանքը, սակայն մեզ ևս ապահով ու խաղաղ էին պահում արտաքին և օտար թշնամիներից ու ավերիչներից: Մեր տեր աստված նրանց ևս վերացրեց իրենց երեսից (= պատճառով) և մեզնից. եթե մեր անկշռելի, անչափելի և անհամար մեղքերի համար էր, [ապա] հավետ արժանի ենք [դրան], որը մենք կրում ենք, իսկ եթե իրենց չափերի լրացման համար [էր], որ մարդկանց էության և իրենց օրենսդրի չափն անցել էին հափշտակությամբ,

զրկողությամբ, կաշառառությամբ, պղծագործությամբ և ամենայն չարի բաներով, թերևս օրինավորը տարավ հատուցման տեղը, որ չեղյալների գործերն է քննում և չեղածը եղած է կոչում. միայն նրան պետք է իմանալ, [որ] կարող է նրանց հատուցումը հատուցել նրանց:

Բայց դուք ո՞ր եղանակով կամենում եք, [այն] ընտրեցեք: Սակայն մեզ հասավ և կատարվեց մեր տիրոջ և փրկչի հրամանը (թեև անվայել է իրեն), թե. «Չովվին խփեմ՝ հոտը կցրվի»: Այսպես եղավ և մեզ [իետ], որ ընտանի հավատակից հովիվներից շուտ էինք զրկվել, այժմ օտարահավատ և այլակրոն տերերից ևս մեկուսացանք և եղանք իբրև նավաբեկ մեկը, որ ծովի բարձրացող ալիքների մեջ տատանվում է ոտքերով ու ձեռքերով, և ոչ մի տեղից փրկություն չի լինում: Որովհետև ես հենց այսպես գիտեմ. թե՛ հնում և թե՛ նոր [ժամանակներում] սուրբ հայերը որքան ողբ ու սուգ են արել և գրել [դրա մասին], նախագիտությամբ մեր ժամանակի և մեր մասին [են ասել], ոչ իրենց: Այդ պատճառով չեմ կարողանում լռել, թեպետ նայում եմ ու չափում իմ (անծի) կարողությունը և տեսնում չափազանց տկար, անհմաստ և չնչին, քան եկեղեցու բոլոր մանուկներն ու պաշտոնյաները, քան իմ ուսումնակիցները և ներկայիս ընկերները, մանավանդ եթե մեղքերով ընկել-հիմարացել են և թշվառական կյանքով զբաղվել: Սակայն նայում եմ ինձնից քաջերին և գիտուններին, որ լռելով այս ամենից, չեն հոգում, և սրտիս զարկից չեմ [կարող] տուկալ այս անտանելի աղետին, այլ հույս եմ դրել աստծու ամենագոր աջին և Յոզու առատաշնորհ պարգևներին, որ խուլերին լսել է տալիս, համրերին՝ խոսել, արժանավոր աղոթքներով Տիրուհի Կույսին և սուրբ Կարապետին, մեզ [ույս բերողին՝ մեր բազմերախտ հորը՝ մեծն Գրիգորին, բոլոր սրբերին և սրբազան եղբայրներին: Ինձ նետեցի այս մտատանջող գործի հոգսերի մեջ՝ վստահելով ոչ թե իմ կարողությամբ, այլ ձեր սրբասեր և հեզաբարո եղբայրության սի-

րուն: Որի համար հայցում և թախանձագին աղերսում են խոնարհաբար զիջել տիրոջ աշակերտներին, մանավանդ աղոթքներով օգնել և արհամարհելով, բարձրաձայնությամբ մոռթ անելով, զանց չանել: Լինելով ձեր կարեկիցը, [դուք էլ] ծննդով մեզ բնութենակից (= հայրենակից), [ասեմ], որ աստվածային գրքերի շատ տեղերում իր մարդասիրությամբ նվաստը ավելի է հարգվում, քան առավելն ու մեծամեծները: Եվ [ասեմ], որ խորանի արարողության սպասքի համար ընծայաբերք նվիրվեց՝ այծի մազերը, և տերն իսկ գովեց այրի կնոջ լուծաները: Դրա նման ես էլ աղերսում եմ ձեզ ընդունել զիրս՝ որպես նույնը, որ զիջերվա մեջ ժամանակիս թանձրամած, կուտակված խավարի [պայմանում] հազիվ կարողացանք այսքանը ընծեռել՝ ապագայի ընթերցասեր եղբայրներիդ [մատուցելու], Զոր, Որդու և սուրբ Զոզու փառքի և չսողներիդ օգուտի համար:

**Ն. Ծ. Աստուծո  
Կաթողիկոս Աղվանից՝ Տեր Եսայի  
Հասան Ջալալյանց**

## Աղվանից երկրի համառոտ պատմություն Գլուխ Ա

Պարսից ազգի թագավորության ժամանակներում (առաջնորդվում էին) մահմեդական կրոններով, եւ (երկիրը), որտեղ տիրում էին բռնակալությամբ, սկիզբ է առնում Կովկասյան լեռից և Կասպիական ծովի եզերքից (որ Երկաթի Դուռ է կոչվում)<sup>87</sup> մինչև Մազանդարան և Աստարապատ<sup>88</sup>, այնտեղից Զոզայեկի<sup>89</sup> սահմաններով անցնում մինչև Խորասան և Ղանտահար<sup>90</sup> բերդը, ապա ձգված դեպի Զնդկական ծովի եզրը, մինչև Բանտար<sup>91</sup> քաղաքը և այստեղից՝ Շիրազ<sup>92</sup>. Երկրի միջով հասնում է մինչև Բաբելոն (այսինքն՝ Բաղդադ), սահմանները հատելով՝ հասնում մինչև Զամադան և Վանա ծովը, որից և Մարաց սահմաններով՝ Խոյ<sup>93</sup> և Սալմաստ<sup>94</sup>, ու Նախիջևանով՝ մինչև Երասխ գետը, ապա Սահաթով,<sup>95</sup> Կաղզվանով և Կողբով անցնում մինչև Երասխ գետը, ապա Սահաթով, Կաղզվանով և Կողբով անցնում մինչև Ախուրյան (որ կոչվում է Արփաչայ): Եվ այնտեղից Ղայդուլի<sup>96</sup> անունով նահանգով անցնում է դեպի Վրաստանի սահմանները՝ մինչև Տփլիսի քաղաքը և Կախեթ՝ իր բոլոր նահանգներով ու գավառներով: Եվ ապա (դարձյալ) վերջանում հասնում է մինչև Կովկասի լեռը, մինչև նույն Զունրակերտ ամրոցը (այսինքն՝ Դարբանդ),<sup>97</sup> Թարխու կոչված տեղը<sup>98</sup>՝ լեռնականների զխավոր Շամխալի կայանատեղը: Ահա արևելքիների երկրի այս ծոցամիջից խառը՝ Եվրոպայի հարավային եւ հյուսիսային կողմերում տիրել է պարսից ազգը, որ ղզըլբաշ է կոչվում<sup>99</sup>՝ ունենալով իրենց արքայական աթոռն ու գահը, ամենահռչակավոր արքայանիստ մայրաքաղաքը՝ Շոշ (այսինքն՝ Ասպահան)<sup>100</sup> և այնտեղ թագավորները գահակալելով տիրում, իշխում են իրենց հնազանդյալ ազգերին՝ իրենց իշխանության թևերը սփռելով դեպի աջ ու ձախ: Բայց այժմ այստեղ տարակուսում ենք նախկին ցեղապետական իշխանությունների պատճառով, թե որ ազգից եւ ծնունդներից սերվեցին սրանք՝ թագավու-

րագուները, և կամ՝ հետո առաջ եկան, քանի որ մեր սրբազան հայր Մովսես Քերթոզը<sup>101</sup> մեզ հավաստում է այսպես, թե՝ «Քայ պարթեւ Արշակը<sup>102</sup> հեռացրեց մակեդոնացիներին՝ Ալեքսանդրի դայակորդիներին (սենդակիցներին)<sup>103</sup>, որոնք վաթսուն և ավելի տարիներ տիրում էին Պարսից թագավորությանը, և իր եղբորը՝ Վաղարշակ երկրորդին<sup>104</sup>, թագավոր կարգելով, ուղարկում է Յայաստան»: Եվ այսպես՝ մի ցեղից երկու՝ պարսից և հայոց ազգերի պարթև թագավորներ եղան, (որ տևեց) մինչև Սասանյան Արտաշիրի՝ Արշակունի արքա Արտավանին սպանելու ժամանակները<sup>105</sup>: Ինքը խեց Պարսից թագավորությունը և ազգերին տիրեց մինչև Մահմետի երևալը<sup>106</sup>, ու երեսուն և ավել կամ պակաս տարի իրենց տիրելուց հետո սպանեցին պարսից Յազկերտ արքային<sup>107</sup> և տիրեցին նրանց իշխանությանը: Գրանից (հետո) տիրապետեց Մահմուտ անունով մեկը<sup>108</sup> բռնաճալ-տիրելով Բահլին և այնտեղից մինչև խորասան, ապա միմյանց հաջորդելով և առաջ գնալով վերցրին Յենն<sup>109</sup>: Իսկ Մահմուտի որդին՝ Մասխուտ անունով<sup>110</sup>, որ Յենից (եր), առավ Նշապուրը, Խազաունը, Ասպահանը, Արագի ամբողջ շրջակայքն ու ազգատոհմերին և Քրդստանը (սա ըստ Վարդան վարդապետի)<sup>111</sup>: Եվ ապա (վարդապետն) ասում է սրանց մասին, թե հոր ու որդու միմյանց հաջորդումով երկար ժամանակ նստեցին Խազուինում. դրանց անուններն են՝ Աբու-Ալի, Տավութ, Աբու-Թալիպ, Տողրիլբեկ<sup>112</sup>, որ հզորացել է խալիփայից<sup>113</sup> և ստանալով հրաման ու սուլթանության անուն՝ ընդարձակել իր սահմանը՝ սկսած խորասանից, և ամբողջ Պարսից երկիրը:

Սրան փոխարինում է Արփասլանը<sup>114</sup>՝ իր եղբորորդին, նրանից հետո՝ Սելիք շահ կոչվածը<sup>115</sup> և ապա՝ Մահմուտ սուլթանը, նրանից հետո՝ Բաքարուլսը: Մահմուտ սուլթանի որդին<sup>116</sup> խեց-սպանեց Բաքարուլսին և ինքը սուլթան դարձավ: Մահմուտից հետո (իշխում է) նրա որդին<sup>117</sup>: Ոմն Սանճուր սուլթան սպանում է նրան և առնում իշխանությունը<sup>118</sup>: Ապա (իշխում է) Տավութը՝ նրա որդին<sup>119</sup>, հետո՝ Տողրիլը<sup>120</sup>, որից հետո՝ Մախսուտը<sup>121</sup>, ապա մյուս Տողրիլը<sup>122</sup>, որից

հետո՝ Ալփասլանը, որն առավ Անի քաղաքը,<sup>123</sup> (գնաց) մինչև Վրաստան և (կատարածի համար) իրենց խալիփայից պատվի արժանացավ: Այս Ալփասլանը նորից փոխեց Տողրիլին<sup>124</sup>: Ապա (իշխում է) Շահի Արմենը,<sup>125</sup> հետո՝ Ելտկուզը,<sup>126</sup> որից հետո՝ սրա որդիները՝ Փահլավանն ու Խզիլ Ասլանը («կարմիր առյուծ»),<sup>127</sup> որոնք միասին տիրեցին երկրներին. այս հասնում է մինչև հայոց 626 թվականը: Այս ընթացքում չիմացանք (պատմության) որպիսությունը, բայց սույն (Վարդան) վարդապետն ասում է, թե 674թ. թաթարը եկավ և խորասանում փախցրեց խորագմ շահի որդիներին:<sup>128</sup> Իսկ թաթարի գալուստը և խորասանից Ջալալատին սուլթանին փախցնելը,<sup>129</sup> առաջ շարժվելը մեզ մոտ, հաղթելը և ամբողջ երկրին տիրելը, (երկիրը ծանր) վիճակի տակ (դնելով) ելնելը ու տիեզեքն առնելը, նրանց զանազան չարագործություններն ու գործերը, որ կատարեցին արևելքի և արևմուտքի, հյուսիսի և հարավի բոլոր ազգերի նկատմամբ.-այս ամենը մեկ առ մեկ ցույց են տվել Վանականը, Կիրակոսը,<sup>130</sup> սույն Վարդան վարդապետը և պատմագիրները, որոնք սրանց բռնակալական պատմությունը հասցնում են մինչև 515 թվականը: Յետո չգտանք սրանց իշխանության տարիների քանակը և կամ թե՛ ի՞նչ եղանակով վերացան, ո՞վ էր, որ մեր այս աշխարհից հալածեց ու չքացրեց նրանց, կամ ովքե՞ր էին, որ տիրեցին ու բռնակալեցին պարսից երկիրը. նշվում է՝ մինչև 835 թվականին Թամուրլանկի գալը,<sup>131</sup> որը ևս գազանաբար կերավ ու մանրեց, մնացորդները ոտնահար արեց՝ ըստ տեսածների, եւ ամբողջ տիեզերքը հարկի տակ դրեց՝ սկսած Սամարղանդից մինչև Սամարիա և Եգիպտոս. ամեն հասակի մարդկանց տասնութ ժամ սրի հանելով՝ քամեց, քայքայեց եկեղեցիները, ուր ոտքը հասավ: Նրա չարագործության հանգամանքները պատմում է Թովմա վարդապետ Աթորունին: (Նա) ասում է, որ (Թամուրլանկից) հետո՝ 855 թվականին, գալիս է չար Ղարա Յուսուֆը,<sup>132</sup> որը (գործում է) տեսակ-տեսակ չարիքներ, որից հետո՝ 870թ., (գալիս է) ոմն Շահռուֆ, որը կրկնաչարագույն էր, քան (Յուսուֆը), ապա (գալիս է Ջաղաթան, սրանից հետո՝ ազգով թուրք

Ջիան շահը, որը 888թ. թագավորավայել տիրեց ամբողջ պարսից երկրին: Հայոց 932 թվականին սրան փոխարինում է իր որդի Յաղուբ փաշան):

Այս Յաղուբ թագավորը, որ նստում էր արքայամիստ Ղավդեծում, իրեն, իր քրոջը փեսա դարձրեց շեյխ Հայտարին, որը Շեյխսոփուս որդին էր և նստում էր Արտավիլ քաղաքում: Այս շեյխը եղածների սկիզբն է և ազգը, (սակայն նրանց) որպիսության մասին ինչ-որ տեղ (տեղեկություններ) չգտանք, թե ո՞վ (էր), կամ որ ցեղից առաջանալով՝ բնակվեցին այստեղ: Այս շեյխ Հայտարն ունենում է մի որդի, որին անվանում են Իսմայել: Եվ քանի որ Յաղուբ թագավորը զավակ չունեւր, այդ պատճառով շեյխը և իր կինը մտածեցին ինչ-որ հնարներով սպանել Յաղուբին, որպեսզի իրենց և իրենց որդուն ժառանգ մնա թագավորությունը: Պատիվ (մատուցելու) պատրվակով նրան կանչեցին՝ մահաբեր կերակուր պատրաստելով նրա համար: Յաղուբը (կերակուրը) ճաշակելիս զգաց (վտանգը) և բռնությամբ նրանց էլ ստիպեց ուտել: Եվ այսպես մի ժամում մահացան թագավորը, իր քույրը եւ շեյխը: Երբ զորքը աղմուկ-աղաղակի մեջ էր, մանուկ Իսմայելին փախցրին Աղթամար կղզին (սա՛ ըստ Առաքել Ղավրիժեցու պատմության): Այսպիսով միմյանց հաջորդելով՝ մոտենում էին իշխանության գահին. ինչպես՝ Անխուր անունով մեկը բռնացավ, տիրեց և 948թ. իր աթոռը հաստատեց Ասպահանում: Նրանից հետո Ալվանդը կարճ ժամանակով (թագավորեց), որը տեւեց մինչև 950 թվականը: Արդ՝ որպես պատմության գլխավորը, խորշեցի ու խուստփեցի ըստ կարգի և ըստ ազգի (պատմության հաջորդականության) ողջություն մաղթել ու գրի առնել Պարսից թագավորության կարգն (ու սերնդափոխությունը). ինչպես որդին փոխարինեց հորը: Բայց հնազիր պատմություններից հավաքելով միայն այսքանը՝ երևելի և նշանավոր, գոռոզ և չար մարդկանց անունները, (այն) հասցրինք մինչև այստեղ՝ մեր սիրելի եղբայրների զբաղմունքի համար: Քրիստոսին՝ մեր աստծուն, փա՛ռք հավիտյանս. ամեն:

## ԳՆՈՒՑ Բ

### ՊԱՐՍԻՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԻ. «ԿԱՐՍՐԱԳՆՈՒՄՆԵՐ» ԿՈՉՎԱԾՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԽԱՌՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Արդ՝ ինչպես ասացինք Յաղուբ թագավորի սպանության, Հայտար շեյխի, Իսմայել մանուկին Աղթամար կղզի փախցնելու մասին, տղայի ճճելու տարիներից հետո Պարսկաստանում մեծ աղմուկ է բարձրանում: Այա զորահրամանատարներն ու զորքը՝ միաբանվելով Իսմայելին հանում են կղզուց և թագավոր կարգում իրենց վրա՝ ասելով, թե նա երկու կողմերի ժառանգն է, այսինքն՝ շեյխի և Յաղուբ թագավորի քրոջ (որդին) լինելով, և նրան է հասնում թագավորությունը, որի համար նրան հնազանդվում և երկրպագում էին: Եվ նա, ելնել-սկսելով 950 թվականից, նախ հալածում է վերևում ասված Ալվարդին, իրեն քաշում իշխանությունը, ապա քսանհինգ տարի դեպի աջ ու ձախ պատերազմելով թշնամիների հետ՝ ըստ կարողության ընդարձակում է իր սահմանները և վարելով իշխանությունը՝ մեռնում է 975թ.:

Նրանից հետո՝ նույն տարում, թագավորում է նրա որդին՝ շահ Թահմազը՝ մի քաջ և արի մարդ: Սա շատ տեղեր իր իշխանությանը ենթարկեց, ինչպես՝ Ատրպատականը և Վրաստանը բռնությամբ հնազանդեցրեց, խորասանի կողմերում նույնպես (սահմանները) ընդարձակեց, ինչպես ասում են՝ իշխանության բազմաթիվ կարգեր ևս շտկեց, հարկերը թեթևացրեց: Սա վախճանվում է 1024թ., և փոխարենը կարգում են Իսմայել անունով իր որդուն: Նա կամենում է զորահրամանատարների և զորքի միջից բռնի և անհնազանդ խորանանկ [մարդկանց] վերացնել [աշխարհից]: Իսկ աճապարելով նրանք նրանից ավելի շտապ են սպանում, ինչպես ասում են՝ ինչ-որ հնարներով մեռցնում [նրան]: Սրանից հետո խորասանից բերում են իր եղբորը, որ կոչվում է Խոտապանտ՝ անարի և թույլ տեսողու-

թյամբ մարդ: Սա ևս քիչ տարիներ դաժանությամբ և դառնությամբ վարելով իշխանությունը, մեռնում է: Ապա 1029թ. Մաշատում նստեցնում են սրա Աբաս որդուն՝ Մեծ, շահ կոչվածին, որը կարճ ժամանակում հնազանդեցրեց շրջակայքի իր թշնամիներին, իր ձեռքը վերցրեց հայրենի իշխանությանը (ենթարկվող) ամբողջ երկիրը՝ Խորասանից մինչև Երասխ գետը և Բաղդադը, բացի Ատրպատականից:

Որովհետև Կոստանդնուպոլսի իսմայելացի թագավորը՝ խրոխտ սուլթան Մուրատը՝ Խոնդար կոչեցյալը, սրան արգելք եղավ, որ գործ հանեց և հրաման (արձակեց) Ատրպատականի վերաբերյալ՝ գալ և առնել այն և եկան-վերցրին հենց Երևանը, Նախիջևանը, Դավրեժը, Գյանջան, (հասան) մինչև վրաց սահմանը, Տփլիսը, ամբողջ Վրաստանը, նաև Կուր գետի այն կողմը՝ Շաքին, Շիրվանը, Շամախին և Դերբենդը: Այսքան քաղաքներին և երկրին տիրում էին օսմանցիները:

Այն կողմերից պատերազմներն ավարտելուց հետո Շահաբաս թագավորը խաղաղությամբ նստել էր Ասպահան մայրաքաղաքում: Ապա քիչ տարիներ հետո երեսը դարձրել է Ատրպատականի վրա՝ այն առնելու համար: Եվ նա բազմաթիվ զորքերով եկել է Դավրեժի վրա, բախտի բերումով ու հաջողությամբ մեկ տարում գրավել Դավրեժը, Նախիջևանը և Երևանը: Ապա մեկ տարի հետո օսմանցիների լեռքից առել է Գյանջան, ամբողջ Դարաբադը, Շամախին, Դերբենդը, նրանց շրջակայքը, Տփլիսի քաղաքը եւ ամբողջ Վրաստանը: Եվ այսպիսի արարումներներից հետո օսմանցիների թագավորի հետ հաշտություն էլ է հաստատել՝ սահմաններ ու բաժիններ հատկացնելով յուրաքանչյուրին՝ երկու երկրների՝ պարսից և հոռոմոց միջև: Եվ սա, այսպիսի քաջությամբ ու արիությամբ ապրելով, վախճանվում է 1079թ.:

Սրանից հետո թագավոր են կարգում սրա թոռանը՝ Շահսեֆին, սույն թվականին, Ասպահանում: Սա ևս արիությամբ ու խաղաղ

կյանքով վարելով իր իշխանությունը, հայոց 1091թ. հեռանում է աշխարհից՝ թագավորությունը թողնելով իր որդուն՝ փոքր Շահաբասին: Սա առավել ևս հաստատեց իրենց իշխանական գահը և իր երկիրն ու ժողովրդին խաղաղացրեց բոլոր կողմերի թշնամիներից: Սրա օրոք կառուցվեցին բոլոր ավերակ գյուղերն ու քաղաքները, (չենացան) Հայաստանն ու Պարսկաստանը, որովհետև չափազանց քրիստոնյասեր ու աշխարհաշեն էր: Դրա պատճառով բոլոր տեղերում եկեղեցիներ, վանքեր ու մենաստաններ հաստատվեցին, մանավանդ սուրբ Աթոռն էջմիածնի, սուրբ Գանձասարը Աղվանքում՝ Աղվանքի սրբազան Փիլիպոս հայրապետի և Պետրոս Կաթողիկոսի օրոք: Սա եւս բարեբախտ լինելով աշխարհում, վախճանվում է 1100 թվականին: Թագավորական իշխանությունը նույն տարում առավ նրա որդին՝ Սուլեյման շահը: Սրա օրոք եւս աշխարհին խաղաղություն եղավ, ավերակների շինություն, երկրի մարդկության աճ, դատավորների արդարություն և իրավունք, հարկապահանջության չափավորություն, բոլոր գործերի և արարողությունների բարեկարգություն:

Սա ևս այսպես կառավարելով երկիրն ու իր հնազանդյալներին, վախճանվում է 1139թ.: Դրանից հետո թագավորում է նրա որդին՝ շահ սուլթան Գյուսեինը, 1140 թվականին՝ մեր ժամանակներում՝ լինելով մանկահասակ:

Արդ՝ [չարադրեցինք] այն, ինչ մինչև այս գրառման սահմանը եղել է նախկին գրքերի [պատմության] մեջ, մանավանդ Առաքել վարդապետի գրքերից ծաղկաքաղ անելով՝ հավաքեցինք, որին թող տերը ողորմի: Սրանից հետո պարտավոր ենք այս ներկա ժամանակում, որտեղ կանք, այստեղ ներկայացնել [եղածը], և Քրիստոսին փառք հավիտյանս. ամեն:

## Գլուխ 4 Պարսից թագավորության մորդովմունքի և խառնակության մասին

Իր թագավորության տասներորդ տարում Յյուսեին կոչված շահ սուլթանը հրաման տվեց հայոց ազգի և իր իշխանության տակ եղած ազգերի մարդահամար ու աշխարհագիր անել: Եվ նրա հրամանատարները՝ որպես արքունիքին հավատարիմ մարդիկ՝ ատենադպիրները և քարտուղարները, ելան, որպեսզի անսխալ և առանց թաքցնելու գրեն տասնհինգ տարեկանից բարձր մարդկանց բոլորի [անունները]: [Թագավորը] հրովարտակում սպառնում էր այսպես. «Եթե մեկը գտնի թագնված և պահված մեկին ու այն հայտնի թագավորին, [ապա] թագնվողի գլուխը և ունեցվածքը կլինեն նրա բաժինը, ով [դրա մասին] հայտնեց»: Յրամանը իսկույն կատարեցին. սաստիկ փնտրտուքով ու որոնումով զննելով՝ զանազան հնարներով ու սպառնալիքներով տեղեկանում էին [իրադրությանը]: Սեկի գյուղում գյուղի տանուտերին, քահանաներին, հյուրընկալողին, որին գգիր էին ասում, փակեցին առանձին տներում և միմյանցից զատ, ապա գյուղում եղած մարդկանց անունները ասել էին տալիս ու գրում, և եթե գտնում էին, որ ասածները միմյանցից ավել կամ պակաս են (նրանց բերանից թուղթ էլ էին վերցնում, այսինքն՝ մուչալկա «պայմանագիր», որ եթե ստեր գտնեն, այնքան տուգանքներ պիտի վճարեն), կախելով փայտից՝ մահակով ծծում էին ցուցված մարդկանց տուգանքի պատճառով: Դրա հետ առնում էին մեծ կաշառք, [ունեցվածքի] մեկ տասներորդը, զինվորներին հատկացված վարձի չափից ավելի և ապա գրածը կրկնում էին: Սրանից հետո գրի առան և վանքերը, մենաստանները, գյուղերի եկեղեցիները, դրա հետ նաև եպիսկոպոսներին, աբեղաներին, երեցներին հաշվարկեցին և ավարտելով սրանց [հաշվառումը]՝ սկսեցին գրել վաճառականներին, ճանապարհորդներին, սակավաթիվ առևտրական-

ներին ու բոլորին հաշվառման ենթարկելով՝ տարան- ներկայացրին արքայի ատյանը: Իսկ այնտեղ հարկեր դրեցին հաշվառվածների վրա՝ առաջվա սահմանված [հարկերի] վրա եռապատիկ հավելումով: Եվ եկեղեցական պաշտոնյաների վրա, որ առաջ բնավ չէր երևում, աշխարհիկ մարդկանցից տասնապատիկ առավել ծանր բեռներ դրեցին ու այն աշխարհագրման ընթացքը հազիվ մինչև երեք տարի ավարտեցին, որովհետև 1148թ. սկսեցին և 1151թ. հրամանը կատարեցին՝ ժողովրդի երեք տարվա գլխահարկը, որ նոր էին դրել, հավաքել, նաև եկեղեցականների ու կրոնավորների համար կարգվածը նրա հետ միանգամից առնել: Ապա Ատրպատականի մեծ վեզիրը, որ նստում էր Դավրեժ քաղաքում, որի անունը Միրզաթախիր էր, ելավ-եկավ Ղարաբաղի երկիրը և Գյանջա քաղաքը ու սկսեց գրվածից մեծ ավելորդությամբ [հարկեր] առնել:

Եվ զորքը ցրվեց երկրում, գյուղերում՝ կատարելով հաշվառում, ու քանի որ լուծը չափազանց ծանր էր, և [մարդիկ] չէին կարողանում տանել, դրա համար տանջում, կեղեքում էին նրանց և ծեծելով խլում ըստ իրենց չափի. մեծ գյուղերից՝ շատ, փոքրերից՝ քիչ, որովհետև մեծ գյուղը 150, 100 կամ 50 թումանից (թուման= 10000 դիմար. դիմար=տասնոց կամ տասը դրամանոց), իսկ շատ փոքրը 30 կամ 20 թումանից պակաս չէր [վճարում]: Վաճառականներից նույնպես վերցրին: Այսպես տարեցտարի շարունակ մարդահամար էին կատարում, և հարկահանները գալով հավաքում էին ճշտությամբ: Սրանից հետո այլ տեսակ հարկեր ևս դրեցին և այն ավելացրին՝ անվանելով շեղդինար, և սա եռապատկեցին: Դարձյալ հրաման եղավ ելնել և գրի առնել երկրի, գյուղերի ու ագարակների բոլոր սահմանները, հողը, ջուրը, այգին, հանդը, ծառը, տունկը և [այն] ամենը, ինչ պետք է մարդկանց. առհասարակ ամենը գրի առան՝ թե հայերի, թե այլազգիների, այլև վրանաբնակների ու խաշնարածների, ինչպես նաև թաթազամա կոչված ազգի բոլոր տեսակի չորքոտանի անասունների [տավար՝ հորթ, արջառ, եգ, կով, ոչխար, ծի և

այլն) նախիրն ու հոտերը, դասերն ու խմբերը: Եվ առաջինների վրա կրկին ավելացրին հարկերը:

Այս ամենը, որի մասին գրեցինք, նորահնար չարիք էր, որ դրեցին սահմանված առաջին հարկերի վրա, իսկ առաջինն էլ ծանրագույն բռն էր ժողովրդի վրա. այժմ փոխանակ թեթևացնելու այսքան ևս ավելացրին վրան: Եվ դարձյալ պարսից իշխանության սովորությունն է իրենց տերության բոլոր քաղաքներում և ամբողջ երկրի վրա կարգել պետեր, գորահրամանատարներ, ինչպես՝ խան, սուլթան, դուլբեկի, վեզիր, դարուղա և թվիլտար: Առաջ, որ մի անգամ այսպիսիներին իշխանություն էին տալիս, հեշտությամբ չէին փոփոխում և նրանցից առնում, բայց եթե մարդու մեծ հանցանքը կամ վնասը հայտնվեր, և կամ գրկվող լինելու ու ազահության համար գանգատվողները զնային արքայի դուռը և մարդու հանցանքը հայտնի դարձնեին, ապա մի կերպ այն մարդուց առնում էին այն իշխանությունը: Իսկ այժմ այս թագավորով այսպես չէ, այլ թագավորը և իր նախարարները, կաշառակեր լինելով, արագորեն փոփոխում էին, հանում և մի տարում իրար հետևից երկու և երեք տերեր ու իշխաններ էին ուղարկում մի քաղաք և գավառ: Եվ նրանք գալով, ինչպես իրենք էին կաշառքով ստացել իրենց իշխանությունը, այնպես էլ ժողովրդի դատն ու իրավունքը մի կողմ դնելով, կեղեքում, կողոպտում էին իրենց հնազանդյալներին: Այդպես էին անում նաև նրանց օրինապահ դպիրները, այսինքն՝ դատավորները, շխալուլամները, շեյխերը, որոնց դագիներ [«հավատի համար պայքարող (զինվոր)»] են ասում:

Դարձյալ այլ չարիքներ ևս ավելացրին. մի անգամ գյուղերի, ագարակների տերեր կային, նաև վարձկաններ (մշակներ), այսինքն՝ հատյալ դոնլուդ, գորահրամանատարներ և զորք. մեկը որքան դրամի չափ որ ուներ, նրա մեկ տասներորդը ևս որոշեցին ու թագավորական [հարկ] դարձրին, իսկ նրանք իրենց դրամներից չէին տալիս, այլ այն ևս ավելացրին ու հնազանդյալներից յուրաքանչյուրի վրա դրեցին: Եվ այդպես էլ շարունակում էին առնել: Նմանապես և

այլ չարիքներ հեղեղեցին՝ ուստրերին և դուստրերին ուժգին չարչրկելով, տղամարդկանց և կանանց բռնությամբ ուրացող դարձնելով, ծնողների մահից հետո մնացած զավակների ունեցվածքը, հարստությունը, զանձերը՝ հափշտակելով և ուրացողներին տալով: Որքան հարուստներ և մեծատուններ տեսանք մեր աչքով Ջուղայում և Երևանում, որոնք հասել էին վերջին աղքատության ու թշվառության: Եվ հարցնելով պատճառի մասին՝ տեղեկացանք, որ այդպես եղավ ուրացողների ու իրենց ունեցվածքի հափշտակության պատճառով: Այդպիսով բոլոր բարեկարգությունները վերացրին երկրից, որոնց մասին մանրամասնորեն չգրեցինք: Միանգամայն և իրենց օրենքը դրեցին, [սակայն] հակառակ գտնվեցին՝ փոփոխելով նրա դրած սահմանները, որոնք գլխահարկերի և դատաստանների համար էին դրված նրանց վրա: Դրա պատճառով և արդարադատ աստծու արդար դատաստանը հասավ նրանց վրա, այլև հայոց ազգի վրա: Նույնպես ապագայում նկարագրելու են տառապյալների [դաժան] կյանքը՝ նրանց կողմից անողորմ և անաստված [ձևով] կեղեքված ու կողոպտված լինելու պատճառով, որին փոքրիշատե ծանոթացանք: Իսկ նրանց անօրինության, օրինազանցության, համարձակության, անմտության, անմիաբանության մասին [նշենք], որ [այդ ամենը] աստծու, աստվածային զրքի և պատվիրանների դեմ է, որը ծանոթացրի ձեզ աստծու միջոցով, որ իրենց կործանման պատճառ եղավ, որից տեր Դիսուսը թող ազատի [մեզ], և նրան փառք հավիտյանս. ամեն:

**Գլուխ Դ  
Հակառակվողների և ընդդիմակայողների  
մասին, որոնք շատ տեղերում Պարսից  
թագավորության դեմ ելան**

Որովհետև ըստ սուրբ Դանիել մարգարեի կանխագուշակության և ըստ նրա տեսիլքի ընթացքին, ինչպես որ կարծում են բազմաթիվ մեծ իմաստուններ խոյի տասը եղջյուրների մասին, որ պարսից ազգից տասը թագավորների հառնելու նշան է, ինչպես սրանց հաշվարկն է, կամ թե ըստ նախախնամող աստծու կամքի, որ իր արդարությունը հատուցում է, երբ բաժակը իր ձեռքում է, ում կամենում է, խմեցնում է նրան և մարդկանց ու երկրի թագավորության տերն է, որին կամենում է, նրան էլ շնորհում է:

Ըստ [այս ըմբռնման] պետք է տեսնել, թե ինչ է եղել այժմ սույն սուլթան Գյուլեհին թագավորի ժամանակներում. մի ազգ՝ Խորասանի և Ղանտահարի կողմերում, որոնց աղվաններ են անվանում, և այս ազգի մասին ասում են, թե Կովկասի բնիկ լեռնականներից ու ալանաց երկրից են, որ ազգով աղվաններ են, որոնք այժմ ևս նախկին անունով են վերակոչվում, և հավատով քրիստոնյաներ են եղել: Եվ ապա, ժամանակներ անց, [եկավ] բռնակալ Լենկթեմուր կոչվածը, որն իր հաղթանակով տիրեց երկրի մեծ մասին, որի մասին վկայում են պատմությունները: Ասում են նաև, որ այս ազգին իրենց տեղից վտարանդի է դարձրել ու 25 տուն տարել՝ բնակեցրել այն երկրում: Եվ ժամանակներ հետո դարձրել են Մահմեդի կողմ(ներ)ին [ենթակամներ]: Ապա նրանց ուռճացել՝ բազմացել են, եղել յուրաքանչյուր մասի իշխաններ ու պետեր՝ ինքնագլուխ տիրելով մինչև Շահաբաս կոչված արքայի ժամանակները, որը Ղանտահարը առնելու և այն կողմերին տիրելու ժամանակ սրանք ընկան նրա իշխանության տակ, նրանց որդիներից ու թոռներից հետո, մինչև այս ժամանակները՝ մեր 1150 թվականը: Եվ ապա այն կողմերը սկսեցին աղմկել ու վրդովվել:

Այլ և [կար] մյուս ազգը ևս, որ պլուճ են անվանում, նաև Սովուխ-Պուլաղու երկիրը, որ թուրքման են կոչում, և սրանց գլխավորը, որին Սուլեյման պապա էին ասում, որն իր մասին ասում էր, [թե] սերել է առաջին թագավորների ազգից, որոնք՝ Ջահանշահ և Յաղուբ անվանյալները, նստում էին շահաստան դավրեժում: Նա չրջվեց նաև դեպի Աստրապատի երկիրը: Նրանց գլխավորին Ատինաղուրտ էին կոչում, այլև [կային] Կովկասի լեռնականները՝ [եկաց ծյունարանակ ազգերը՝ լազգիները՝ ըստ գրավոր [վկայությունների]՝ հոներ կոչվածները, [որ] ի սկզբանե [եղել են] Ատրպատական երկրի, հայոց ազգի և մեր հավատի բուն թշնամիները: Սրանք միասնաբար և վերևում նշված բոլորը ըմբոստանալով թիկունք դարձրին և ընդդիմացան պարսից թագավորի հրամաններին ու սկսեցին յուրաքանչյուր երկրից շրջակայքը և մերձակայքը կողոպտել, [մարդկանց] գերել ու սրի ճարակ դարձնել: Սա [անում էին] ոչ թե մի տարում, այլ երկար ժամանակներում. սրանք քիչ տարիներ էին ապստամբում, [սակայն] դրանք հաճախ էին իրար հետևից հաջորդում միմյանց: Եվ թեպետ զորք հավաքելով՝ թագավորը սպարապետների ու զորահրամանատարների միջոցով ուղարկեց նրանց վրա՝ բաշխելով շատ զանձեր, սակայն ոչինչ չօգնեց, այլ պարտվեցին, թեև շատերի ջանքով և ուժով դադարեցրին խռովությունը ոչ այնքան հաղթանակով, քան հաճելով նրանց միտքը ըստ իրեն կամքի: Բայց Ղանտահարի և կովկասցիների կողմերի կռիվը շատ ժամանակներ տևեց, որն իր տեղում կպատմենք, եթե տեղը կամենա: Եվ նրան փառք հավիտյանս. ամեն:



**Գլուխ Ե**  
**[Այն մասին], թե հոների ազգը ինչ արեց**  
**ամբողջ Աղվանից երկրում**

Ամենքին հայտնի է այս, որ տուն կամ որևէ այլ շինություն՝ մեծ թե փոքր, երբ հնանալով պիտի փլվի, նախ պատերը և հիմքերը խախտելով ճաքում են, ապա իջնում է առաստաղը, որից հետո տանիքը ներքև թափվելով, փլվում է: Այսպես եղավ և Պարսից թագավորության հետ, որովհետև Կովկասի լեռնաբնակները՝ լազկիները, որ [բնակվում էին] լեռան այս կողմում՝ Ղախ, ճար, Թալա տեղերում և այլ անուններով հորջոջված գյուղերում, որոնց գլխավորի անունը Ալի սուլթանն էր, որ նախևառաջ նստում էր շահի հրամանով, և սա ու այլ շատերը, ինքնագլուխ միաբանվելով, երես թեքեցին և ապստամբեցին թագավորի դեմ 1161 թվականին: Սրանից առաջ Ինիսելու երկիրը, այլև Շաքվա, Պասնջաղ, Մումպարաք, Չարդաթալու և այլ շատ գյուղորայք ասպատակել, գերեվարել էին, ավարի մատնել: Այժմ գալով Քանտաք անունով գյուղորայքը՝ իսպառ տարան: Եվ այսպես զրգռված՝ տարեցտարի ասպատակեցին դեպի Կուր գետի այն կողմը՝ Շաքվա երկիրը և Ղապալուն, Գասանի նահանգ՝ մինչև Շամախի քաղաքի մերձակայքը: Իսկ [Կուրի] այս կողմից՝ Ղազախի նահանգից շատերը, Աղստևի [կողմերը], Ամիրջան Շատինուլից՝ Ջակամները, նաև Գյանջաբասանի չորս գետ՝ Շամխոր, Գյանջաբասան, Ոսկանապատի ձոր և Քուրաքբասան, այլև Բարդալի գյուղերից շատերը և դաշտային գյուղորայքը միանգամից ոչնչացնելով, գերի և ավար առնելով՝ ամայի դարձրին: [Ողջ] մնացածները փախուստի դիմեցին Արցախի լեռներն ու քարանձավները, և ամեն մեկը, պատշաճ ամուր տեղ հեռացած, իր ապրուստն էր հոգում: Բայց 1170 թ. նույն ինքը՝ Ալի սուլթանը, իր շուրջը զորք հավաքեց նույն լազկիների ազգից՝ ութ հազարից ոչ պակաս, եկավ Գյանջա քաղաքի վրա, մինչև [իսկ] մտավ պողոտան (այսինքն՝ Քու-

ջան «քյուչան»), որ Սու թոքուլան [«Ջրվեժ»] անունով գյուղի կողմն է՝ քաղաքացիներին թույլ տալով [հեռանալ]: Եվ երբ ներս մտան, ապա վերկացրին քաղաքացիներին և այս ու այն կողմից փակեցին նրանց գնալու ճանապարհները ու կոտորեցին նրանցից մինչև հազար քսան հոգի՝ մեկը ավել կամ պակաս: Եվ ոչինչ չկարողացան անել. հետ դառնալով՝ ամոթով գնացին իրենց տեղերը:

Եվ այսքան իրադարձությունները, որոնց մասին այստեղ գրեցինք (մեզմից), կատարվել են 8-9 տարում՝ սկսած 1160 թվականից: Եվ որքան հրաման տրվեց թագավորից պարսից զորքին գնալ նրանց վրա, այսինքն՝ Շամախի, Գյանջա քաղաքներում և նրանց շրջապատում բնակվածների [վրա], խաները, որոնք նստում էին այնտեղ, որքան ջանացին, չկարողացան դիմակայել, մանավանդ որ պարսվելով ամոթով կեղծ խոնարհվեցին նրանց առջև, օրինակ՝ Շամախու հասան Ալի խանը տասնհինգ հազար զորքով գնաց մինչև նրանց սահմանները, և նրանք առավոտյան պահին հանկարծորեն հասան նրանց վրա և զորքի մեծ մասը կոտորելով՝ սպանեցին նաև խանին, իսկ մնացածները փախուստի դիմեցին: Այլ [օրինակ] ևս՝ Գյանջայի Օղուրլու խանը՝ Շամախին ասպատակողը, նրանց դեմ ելավ, [սակայն] հետ դառնալով՝ փախուստի դիմեց և մտավ Գյանջա: Մի այլ [օրինակ] էլ՝ Շաքվա ոմն իշխող՝ Քիչի խան անունով, կարճ ժամանակ ընդդիմացավ նրան. ևս սպանեցին: Իսկ այս ամենի վրա [ավելացնենք], որ այս անամոթ ազգը առավել ևս համարձակ դարձավ. ձեռք բարձրացրին Կախեթի երկրի և վրաց ազգի վրա և նախքան այս քանիցս ուժգնորեն բախվել էին մինչև հետ. երկու կողմերն էլ ոչ սակավ արյուն են հեղել: Կախեթի Իմանդուլի խանին երիցս փախցրել են պատերազմից և ավարի ենթարկել նրա ամբողջ կահկարասին: Եվ այսպես տարեց-տարի առաջ շարժվելով՝ ավերեցին նրա ամբողջ երկիրը, մինչև իրենց հայրենի թագավորության տեղերը և եպիսկոպոսարանը հեռու՝ [մի կողմ] թողնելով՝ ելան Թուշի լեռների ամրոցները: Սրանք այսպես և այս-

քան հանդգնելու այլ պատճառ ևս ունեն, որի մասին այժմ կգրեն:

Որովհետև Շիրվանի երկրում՝ Ղապալու նահանգում՝ մահմեդական ազգի մի իշխան կա, որին Մելիք են անվանում՝ Ղուրթղաշեն կոչված գյուղում, Ղարասու անվանյալ տեղում: Եվ երևում է, որ սրանք ունեցել են ոմն Մելիք, որին Մելիք Մհամմուտ էին ասում՝ հանձարեղ և բախտով հաջողակ, [սակայն] Յուղայից չափազանց ազահ և անհագ, քան տգրուկը: Սա Շամախու խանից Մախթայի միջոցով իր ձեռքը վերցրեց Ղապալայի ամբողջ երկիրը, որը հարուստ էր, շեն և մարդաշատ թե՛ հայերով, որոնցից շատերը Ղարաբաղից անցել էին այդ երկիրը՝ թվով ավելի, քան տեղացիները, և թե այլազգիներով, որոնք բնիկ երկրից են, որոնցից այս Մելիքը զանազան հնարներով հավաքեց ու կուտակեց անսահման շատ ոսկու և արծաթի գանձեր՝ տիրելով ամենի վրա: Բոլորը վշտացան դրանից և տրտնջում- դժգոհում էին նրանից. ինչպես՝ հայ մարդիկ, հավաքվելով Պողեր խանի դուռը, [իրենց դժգոհությունը] հասցրին նաև արքային: Բարսեղ անունով ոմն քահանա, որ բնիկ Ղարաբաղի խաչենի երկրից էր, մելիքների ազգից, այնտեղ էր: Սրանք, որ Սուկութլու գյուղը նորոգել և բնակվում էին, ազգովի ժողովրդի հետ գնացել էին [խանի մոտ], [իսկ բարսեղից] առավել գյուղերում [ոչ մեկը] չկար: Սրան վերցրին- ուղարկեցին Ասպահան՝ արքայի դուռը, որպեսզի իրենց վրա կարգի հայոց ազգի մելիքության իշխանությունը՝ այնտեղ իբր լինելով մելիքների ազգից: [Բարսեղը], իր կամքով գնալով, արքայից հրամանը վերցրեց եկավ, բայց ոտիսը իր բռան մեջ էր. չկարողացավ ընդդիմագրավել, այլ կաշառքով կուրացրեց Շամախու բռնավորի աչքը, և երեցի գործը ոչինչ դարձրին: Շամախու մեծամեծները նրա հետ ոխով լցվեցին և ապստամբելով խանի դեմ՝ գնացին թագավորի մոտ և խանին զրկեցին իշխանությունից: Թագավորի մոտ դժգոհեցին նաև Մելիքից, որ շատ գանձեր է ժողովել ու կամենում է ապստամբել իր դեմ: Եվ [թագավորը] հրաման տվեց, որ ամբողջ անշարժ և շարժում ունեցվածքը, ինչ որ կա, գրի առնել

և վերցնել որպես թագավորական գանձ, իրեն էլ յուրայինների հետ բանտ նետել. այդ անմիջապես կատարեցին: Եվ արքայական դահիճները գալով Մելիքի տունն ու ունեցվածքը գրի առան և ի գաւթ [գրավ-] դրեցին, իսկ իրեն եղբոր հետ, որի անունը Ահմադ էր, կապանքներով տարան Շամախի քաղաքը և մի քանի ամիս բանտ նետեցին, [ապա] դարձյալ արձակելով այնտեղից՝ կրկին կարգեցին իրենց իշխանական գործին: Բայց սրանց ունեցվածքը, որ առան արքունիքում, ասում են, ոսկու և արծաթի արժեքը որպես թե կազմում էր յոթանասուն հազար թուման՝ այլ կահկարասուց, չորքուտանիներից, կավվածքներից գատ, որոնք թիվ չունեին: Որովհետև ասում էին, որ սա ուներ 500 ջրաղաց, 500 տինկ, որով բրինձն էին առանձնացնում, 500 քում և մաջինակ, որով մետաքս էին գործում, շատ գետեր և առուներ, որ արխ էին ասում, որոնց վրա ընդեղեն և արտեր էին ցանում, աճեցնում, այլ ունեցվածքներն էլ մտքով ես տեսնում:

Դարձյալ այս ամենի վրա սակավ տարիներ անցնելուց հետո Շամախու Յյուսեին անունով ոմն խան շահի հրամանով բռնեց այս երկու եղբայրներին և գլխատեց:

Ապա [իր] ձեռքը գցեց նրա [Մելիքի] որդիներին, որ փեյթար, Իբրահիմ և Ղասում էին ասում, խիստ չարչարանքով և խոշտանգումներով հանել տվեց ունեցվածքի մնացորդները, որի մասին ասում էին՝ քսանհինգ հազար թուման, այդքան էլ այժմ առան և բաց թողեցին նրանց: Ապա Փեյթար անվանյալը գնաց շահի մոտ և մելիքություն ստանալով՝ եկավ իր տեղը ու ղեկավարում էր ըստ հայրենի սովորության: Չորս տարուց հետո Յյուսեին անունով մյուս խանը Փեյթարին իր տանը գլխատել տվեց, ապա տունը, կանանց, որդիներին, ամբողջ ունեցվածքը իբրև գերեվարություն բերեցին Շամախի: Դրանից հետո զննելով և որոնելով նրա ամբողջ ունեցվածքը, բոլորը առան և արքունի [ունեցվածք] դարձրին: Ասացին, որ սրա ունեցվածքի հաշիվը եղել է ավելի քան քսան հազար թուման: Բայց սրա եղբայրները՝ Իբրահիմը և Ղասումը, փախան- գնացին վերոհի-

շյալ Ալի սուլթանի մոտ և այնտեղից անցան լեռան մյուս կողմը՝ այն լազգիների ազգի մեծամեծների մոտ: Ինչպես որ ասում են՝ մահմեդականները երկու կրոն են ունեցել. ոմանք շիաներ են կոչվում, որ պարսիկները և ղզլբաշներն են, ոմանք էլ սունիներ՝ որ օսմանցիներն են, այս լեռնականները, Ղանտահարի աղվան ազգը, օգրեկները, բուխարացիները, արաբները և շատ ուրիշներ, որ կան տիեզերքում այս կրոններով: Եվ սրանք դրա համար գնացին լազգիների մոտ, որովհետև նրանց հետ միակրոն էին: Եվ ասում են, թե ուտաբոբիկ և գլխաբաց շրջում էին նրանց դռներին իրենց նախատիքների համար, որ կրում էին շիաների կողմից, որովհետև այսպես է տեղի սովորությունը: Եվ այսպես նրանց շրջելը գրգռեց շիաներին, որոնք չարացան, քան կատաղի գազանը, և իրենց համար շատ ամոթ համարեցին նրանց այնպես լինելը: Եվ ծայն տալով միմյանց՝ միաբանեցին, խրախուսելով հավաքվեցին մի վայրում բյուրավորներն ու հազարավորները, քանզի միշտ լսում էին այս կողմում եղած լազգիների ասպատակության մասին, որ սկզբում հիշեցինք: Նրանք ևս մտածում էին զալ և խառնվել սրանց: Ինչպես և անցյալ տարում՝ նրանց գլխավորը՝ Սուրխայ անունով, եկավ մինչև Վրաստան, անցնելով Կախեթի և Տփլիսի ներքևից՝ ասպատակեց գավառները, որ Սոմխեթ և Դունմախ են ասում: Իսկ այժմ վերևում ասված պատճառով 1171թ. օգոստոսի տասին այս լազգիների ազգը, առհասարակ գրոհ տալով միասին, իրենց բոլոր գլխավորները, որոնք են՝ վերևում ասված նույն Սուրխայը, Շամխալը, Իսմին, Յաճի Դավութը և Ալի սուլթանը, իրենց ամբողջ զորությամբ եկան Շամախի քաղաքի վրա և 8 օրում սաստիկ կռվեցին, բայց չկարողացան առնել: Բայց հետևից լուր հասավ նրանց, թե իրենց հետևից [եկող] ոմանց կողմից նրանց երկիրը շփոթվել-աղմկահարվել է, որի համար մի գիշերում հանկարծակի նորից վերադարձան իրենց տեղերը: Ապա Շամախու քաղաքացիները սկսեցին քաղաքի կողմերը ամրացնել խորախոր պատնեշներով ու պարիսպներով: Ձորքը հասավ այս ու

այն կողմերը (այսինքն՝ Գյանջայի, Ղարաբաղի և Մուղանի): Բայց շահի հրամանով եկավ քաղաքի նոր խանը, որի անունն էր Յյուսեին խան ազուլեցի: Եվ այն տարում քաղաքը պահեցին մինչև մյուս տարվա նույն ժամանակը և նույն ամիսը:

Դարձյալ եկան վերոհիշյալ լեռնականները (առաջիններից հետո)՝ մեծ ամբոխներով, և ուժգնությամբ պատերազմեցին տասներկու օր ու գրավեցին Շամախի քաղաքը հայոց 1170 թվականի օգոստոս ամսին՝ սուրբ Աստվածածնի պահոցին՝ չորեքշաբթի օրը: Եվ [քաղաքի] առնելն այսպես եղավ, որովհետև ինչպես վերևում ասացինք, մահմեդականները երկու կրոն ունեին, այսինքն՝ շիաներ և սունիներ. այս քաղաքում բնակիչներն էլ կիսված էին, բայց շատերը սունիներ էին, որի պատճառով Սարու-Թորթաղ կոչված կողմում բնակիչները գիշերը բացեցին իրենց կողմը և թշնամիների գործերից ներս թողեցին ու լուսաբացին իրենք ևս խառնվեցին նրանց հետ՝ քաղաքը տալով նրանց ծեռքը: Եվ լազգիները, ներս մտնելով, սուր գործածեցին ղզլբաշ մահմեդականների վրա. և ի՞նչ ասեմ աղետների ու աղյան հեղումների մասին, որ գետի պես հոսում էին շուկաներում: Քաղաքի գլխավորներից և մեծամեծներից ութ հարյուր մարդ փախել, մտել էին իրենց մզկիթները, որ քաղաքի մեջ էին: Եվ նրանց անասունների պես մորթեցին ու միանգամից վերացրին վայնասունները: Պարսից զորքից և նրանց գլխավորներից շատերը փախան- գնացին, ուր կամեցան, [իսկ] սրանց ունեցվածքը, տները, ընտանիքները, զավակները գերեվարվեցին և ավարի մատնվեցին: Յյուսեին խանին բռնելով՝ պահեցին մի քանի օր, ապա տրվեցին Իբրահիմ աղայի եղբոր՝ վերելում ասված Մելիք Փեյ-քարի ծեռքը, որը նրան սպանեց իր հոր և եղբոր փոխարեն: Իսկ հայազգի քրիստոնյաները՝ թե քաղաքի և թե այլ գյուղի բնակիչները, ոչ այնքան վնաս կրեցին կոտորվելով: Նրանց մեջ եղած քիչ մարդկանց խնայեցին Քրիստոսի ողորմությամբ, բայց ունեցվածքի ավար քիչ չեղավ, իսկ նրանց զավակների և որդիների գերեվարու-

թյուն չեղավ: Որովհետև արժե իմանալ նաև այս Շամախի քաղաքի ճոխության ու փարթամության մասին, [ուստի նշենք], որ մեծ Շահաբախից, որը օսմանցիներից սա առավ 1055 թվականին, մինչև 1170 թվականը սրանից ոչ մի շյուղ չէր խոտորվել: Եվ քանի որ Կասպիական ծովի պանտար կար և բոլոր կողմերից վաճառականների բնակության, առևտրի, հնդիկներից, հռոմներից, ջուդայեցիներից, ռուսներից և բոլոր երկրներից շահավետության (շահեկանության, օգտավետության) տեղեր, [ուստի քաղաքը] լի էր ամեն հարստությամբ ու գանձերով: Դրա համար այն ազահ և անգութ ազգը, մանավանդ իշաբարո [մարդիկ], առիասարակ կողոպտելով, մերկացրին՝ ինչպես անաստված ավազակների ձեռքն ընկած մի մարդ, և ժողովելով ամբողջ տեսակ- տեսակ ունեցվածքը, ոսկիներն ու արծաթները, [մարդկանց] բերելով քաղաքից դուրս՝ կոտորեցին առանձին- առանձին և [կողոպտուղ] բաժանելով իրենց մեջ՝ բարձեցին, տարան իրենց տեղերը: Եվ այնքան հիմար էին այն պիղծ մարդիկ. [զոհե] մի ոսկի տային մի հացի և մի սեխի: Ահա այսպես եղավ ամենափարթամ մայրաքաղաք Շամախու գրավումը:

Այս քաղաքն առնելուց հետո Գյանջայի և Երևանի գլխավորները ազդարարեցին ու բողոքեցին արքային և իրենց զորքերով եկան հասան Աղվանքի Պարտաւ քաղաքը՝ Կուր գետի մոտ: Երևանի խանը՝ իր բոլոր կողմնակալներով, նույնպես և Գյանջայի խանը՝ իր բոլոր մեծամեծներով, և ուրիշները այստեղ՝ մեծ զորքերի մոտ, [բերեցին] երեսուն հազարի բազմություն: Բայց արքայից սրանց օգնություն չեղավ, չհասավ, քանի որ սաստիկ տարակուսանքի մեջ էր և զբաղված էր Ղանտահարի պատերազմների պատճառով, միայն [բանավոր] խոսքով և գրավոր հրամայեց սրանց՝ անել, ինչ որ կարողանան: Իսկ այն մարդակեր գազանները՝ որպես վարժված որսորդներ, քաջերը, իրենց չարիքների մեջ մարգվածները, ահարկուղենք [ունեցողները]... Նրանց մերձակայքը, միայն նրանց անունն ու ծայնը լսելով, սարսուռ էր ու դողում: Ըստ որում՝ նրանք այժմ ևս

հանդարտ ու անվրդով, առանց աղաղակի հավաքվել էին մեծ գետի այն կողմում և մի գիշեր լուռությամբ անցել էին այս կողմը: Իսկ թուլամորթ և կանացի պարսից ազգը, ըստ իրենց սովորության, գիշերը՝ մինչև առավոտը, խնջույքներով է հագնում, առավոտյան էլ խոր քնով ընկնում: Ապա լույսը բացվելիս և արեգակը ծագելիս ելան պատերազմի, և մինչ սրանք դանդաղկոտությամբ պատրաստվեցին, նրանք հաղթելով իրենց առաջը նետեցին [սրանց] և կոտորելով հասցրին մինչև Արցախի լեռնաստորոտները՝ Դրվական գետի եզերքը և խաչենածորը: Եվ այսպես պարսիկները, գլուխները կախ, ամմտացան իրենց մտորումներում: Խազիրները, հավաքելով նրանց ունեցվածքն ու հարստությունը, խնդությամբ գնացին իրենց տեղերը: Սա կատարվեց 1170 թվականի աշնանը:

Եվ երբ ձմեռային սաստիկ սառած գետը սկսեց հոսել, և զարմանային քաղցրաբույր շունչը մերձացավ, որ մեզ դառը երևաց, մարտ ամսին՝ տիրոջ մեծ պասեքին մոտ, դարձյալ շիկացան- բորբոքվեցին իրենց մտորումներում, կրկին և եռապատիկ [ավելի] հավաքվեցին, խմբվեցին և միացան բյուրավոր ու հազարավոր մորեխների պես, Ելան երկաթի Դուռը և հասան Շամախի: Այնտեղից եկան, բանակեցին այնտեղ, ուր Երասխ և Կուր գետերը խառնվում են միմյանց հետ՝ Մուղանի բերրի դաշտի հանդեպ: Պարսից մի զորահրամանատար, որին Չարխաճի էին ասում, մեծ զորքով նույնպես բանակել էր Բարկուշատում՝ նույն Երասխի վրա: Նա, ըստ սրանց լուրերի, ինքնահաված եղավ որպես չար մարդ և չքացավ իր տեղից: Իսկ քաջամարտիկ և արնախում հոները եկան գետն ի վեր՝ մինչև Բարկուշատի սահմանները՝ Դիգակի երկիրը, և շրջապատեցին նրան լեռների և դաշտերի մոտ, դասավորվեցին կովի իրենց եղանակով և որպես բազմահունտ հնձվորներ, հարձակվեցին նրանց վրա: Եվ քանի որ երկիրը լի էր քրիստոնյաներով ու շատ մահմեդականներով, [վերջիններս] նրանց վրա թափվեցին մեծ շաբաթվա օրը և երեք օրում այն ամենալի երկիրը դատարկ ու թափուր դարձրին

մարդկանցից և անասուններից՝ կոտորելով ու գերի վերցնելով: Այն-տեղից անցան Վարանդի երկիրը և նույնը գործեցին այնտեղ: Քայց նրանց Աելիքը՝ Պաղիր անունով, շուտով իր անունից ընծաներով մարդիկ ուղարկեց նրանց ընդառաջ և գերիների կեսն ու իր երկիրը ազատեց: Եվ այնտեղից եկան՝ հասան Խաչենի երկիրը՝ անախ և համարձակ դեմքերով, որովհետև ոչ ոք դեմ չկանգնեց նրանց ոչ սիրով, ոչ բռնությամբ, այլ առհասարակ դեմքի փոխարեն իրենց թիկունքը դարձրին դեպի նրանց, որի պատճառով [թշնամիները] հեշտությամբ մտան այնտեղ և ինչ կամեցան, այն կատարեցին, որը ի վիճակի չեմ պատմելու:

Որովհետև մի օրում Կարկառ գետից մինչև Դրովական գետը և Չարաբերդի երկիրը՝ լեռներում և դաշտերում միանգամից ասպատակ սփռեցին: Նախ՝ գյուղերի փայտաչեն տներն ու բնակարանները վառեցին, ապա հարձակվեցին գերիների վրա, լեռների գագաթներից իջեցրին, վեմերի անցքերից ու խիտ և մացառուտ անտառների խորքից դուրս հանեցին: Եվ նրանց հետ ժողովելով նրանց կահկարասիները՝ նրանց խառնեցին նաև ոչխարների, արջառների և բոլոր չորքուտանի անասունների հոտերը, դասերն ու խմբերը, միասին խառնած, քշեցին գառիվայր՝ Խաչեն գետի [եզերքով], գերիների խումբը, անասունները խառնել էին որպես հորդ հեղեղ և ինչպես մեծ բանակ՝ իրենց գնալու ժամանակ, որը հենց մեր աչքով նկատեցինք, որովհետև փախուստի դիմելով՝ հասանք լեռան կատարը, որը Գանձասարի սուրբ Աթոռի վերևում է, և նրանց ոտքը մեզ մոտ չհասավ: Այնտեղից նայելով՝ մենք տեսնում էինք եղածներն ու կատարվածները, սա եղավ 1171թ. ապրիլի 20-ին՝ աշխարհամատրի կիրակի(ի) օրը: Այստեղից կարելի է տեսնել հետ մնացողների աղետը (վիշտը), կոտորվողների սուգը, գերյալների ողբը, մայրերի կսկիճը, գերված զավակների կոծը, որը մնացածների ողբալը, ունեցվածքի ավարառությունը, լացողների ծայրը՝ խառնված մեջք(ներ)ը ջարդված տղամարդկանց վայնասունին. արդարև լեռների տեսքն

ու բնույթը, կարծր վեմերի փոխված, իրենց սգակից էին անում իրենց հետ:

Իսկ թշնամիների գորքը, տանելով ավարն ու գերվածների խումբը, խառնեցին իրենց բանակին և չվելով Ականակերտից՝ բանակեցին Դրդի գետի վրա (ափին), որ այժմ Թարթառ ենք կոչում ըստ պարսկական անվանման (լեզվի)՝ կամուրջի վրա, որ Ղառի-քորփի են ասում: [Նրանք] այնտեղ երկար չմնացին, այլ և չկարողացան ինչ-որ չափով վնասել Չարաբերդի երկրին և Բարդային՝ որպես մերը: Որովհետև նրանք առաջ մղվելով իրենց լեռների ամուր տեղերում ամրացել էին, մանավանդ որ որոշ երիտասարդներ ևս ընդդիմանում էին և թշնամիներից շատերին կոտորում, որի համար ավարն ու գերյալների խումբը մեծ Կուր գետով դեպի իրենց կողմերն անցկացրին և իրենք շտապեցին հասնել Գանձակ քաղաքի վրա:

Այս վայրում սրանցից վտանգի է ենթարկվել և նեղվել մեծ պարուն Քալպալի բեկը՝ Չարաբերդի և Ղայնաղի տերը, որ Ղարկահուլի սուլթանի թոռն էր: Քանի որ փախուստի էր դիմել Ծար երկիրը և անճարակ լինելով՝ եկավ սրանց մոտ: Եվ մի քանի օրից հետո, իր որդուն պատանդ տալով, ինքը գաղտնի դարձյալ եկավ իր տեղը: Իսկ նրանք գնացին՝ նստեցին Գյանջա քաղաքի վրա՝ տասներկու օր ավելի կամ պակաս, և ոչինչ չկարողացան անել, քանի որ քաղաքացիները ի ներքուստ ընդդիմանում էին, մանավանդ քաղաքի մեծատուններն ու ունևորները, նախապես իրազեկ լինելով սրանց գալստյան մասին, Տփխիս քաղաքից գնացին վրաց Վախթանգ թագավորի մոտ՝ իրենց օգնության գալու համար: Եվ նա խոստացել էր գալ: Եվ երբ սրանց սուրհանդակներն ու պատգամավորները մեկը մյուսի հետևից գնում էին նրա հետևից, նրանք եկան հենց քառասուն հազարով լազգիների վրա: Երբ նա հասավ Շամխորի երկիրը, նրանք այստեղից սկսեցին ջրի պես հոսել դեպի Կուր գետը: Եվ այսպես մեկը մյուսի հետևից գնալով՝ երեք օրում ի չիք եղան, կորանգնացին իրենց տեղերը և վերացան մեջտեղից: Իսկ վրաց Վախ-

թանգ թագավորը եկավ մեծ ամբոխով՝ քառասուն հազարից ավելի, և բանակեց Գանձակ քաղաքի հարավային կողմում՝ Քրիստոսի՝ աստծու օգնությամբ, որին փառք հավիտյանս. ամեն:

## **Գլուխ Զ** **Վրաց թագավոր Վախթանգի Գյանջա** **[կատարած] երկրորդ գալստյան մասին**

Ինչպես պատմեցինք Վախթանգ թագավորի առաջին այցելության մասին՝ Գանձակ քաղաքին օգնություն ցույց տալու համար՝ լազգերի ազգի կողմից ավարառություն [կատարելու պատճառով], նա առանց պատերազմի փախուստի մատնեց լազգերին և ինքը մեկ ամիս նստեց քաղաքի մոտ: Իսկ քաղաքացիները լուրեր էին հասցնում նրան՝ ասելով. «Լազգերի գալուստը մեր և մեր երկրի դեմ չէր լինի, եթե մերձակայքից և մեր շուրջը [գտնվող] ազգերի կողմից նրանց հետ համակամություն և միաբանություն չլիներ, որովհետև միակրոն, համահավատ և Սուրհներ են: Արդ՝ եթե դու մեծ շահին բարեկամ և սիրելի ես և մեր նկատմամբ կամեցող, դու պարտավոր ես նրանց գերել, ավարի մատնել և կողոպտել»: Սրանց այսպես ասելու մի պատճառ էլ կա. նրա [Վախթանգի]՝ իրենց օգնություն ցույց տալու նպատակով գալու համար խոշոր դրամ էին խոստացել նրան, և իրենք նրանց որսալ չկարողանալու ժամանակ նրան [Վախթանգին] մատնեցին նրա [շահի] ձեռքը: Եվ քանի որ գարնանային օրեր էին, մայիս ամսին՝ 1171 թվականին, առհասարակ վրանաբնակ ազգերը, որոնց թարաքյամա էին կոչում՝ խաշնարածներ, բարձրացել էին լեռները, վրաններն ու խոտավետ տեղերը՝ ըստ իրենց նախկին սովորության, մանավանդ որ նրանք լազգու ահից փախստական էին և այժմ էլ՝ գյանջեցիների թելադրանքից, որոնց գլխավորն էր Ջավադ անունով խանը, Վախթանգը իր զորքերին հրամայեց ելնել ասպատակության նրանց վրա, որոնց մասին նրանք ասացին:

Եվ կովկասցիներից ավելի անողորմ՝ վրաց միլեկան ազգը իսկույն խումբ-խումբ ելավ-սփռվեց լեռներում, ծորակներում և Ջակամի, Շամխորի, Գյանջաբասանի, Ոսկանապատի, Քուրաքչայի, Բարդայի երկրների ընդարձակ վայրերում մինչև Գյուլստան գյուղը և Դրդի գետը: Եվ թեպետ սպանություն և գերեվարություն ոչ այնքան կատարեցին, սակայն նրանց աչքը ինչ որ տեսավ՝ չորքտամի անասուն, մինչև հավ, կատու, շուն, իսկ անշունչների մասին ասելու բան չէ, որովհետև տամում էին անգամ փայտեղենը, եղեգնից հյուսված իրերը և խեցեղենը: Եվ եթե բանն այսպես է, ի՞նչ գրեմ պետքական ու պատվական ունեցվածքի ու գույքի, ոսկեղենի և արծաթեղենի և այլ տեսակ-տեսակ կահկարասիների մասին: Ասելու [բան է] նաև, որ բազմաթիվ ավարից, այսինքն՝ պղնձի, երկաթի, հագուստեղենի [թալանից] բեռնատարները չէին բավարարում, այլ իրենց հետ եղած սայլերով էին կրում իրենց բանակը, որ մոտ էր Գյանջային, և Չոլակ անվանյալ վայրը:

Եվ այս ոչ թե միայն սկզբում ասված մահմեդականների նկատմամբ կատարեցին, ոչ, այլ նրանց հետ խառնված նաև հայոց բոլոր գավառների նկատմամբ. վերևում նշված երկրից միանգամից ավարի ենթարկեցին շարժուն և անշարժ [ունեցվածքը]: Երբեմն պատահում էր, որ վրաց ինչ-որ գունդ դիմում էր քրիստոնյայի գյուղ, և քրիստոնյաները քահանաներով ու ամբողջ ժողովրդով նրանց ընդառաջ էր գնում խաչերով, շուրջառներով, զանգակներով ու մոմեղեններով՝ որպես քրիստոնյայի: Իսկ վրացիները հարձակվելով կողոպտում էին զգեստները, եկեղեցիներ, գրքերը, բոլոր գարդերը, տղամարդկանց ու կանանց և գյուղի ողջ ունեցվածքը ամբողջապես թալանելով և ավարի մատնելով՝ հեռանում էին: Եվ այսպես Գանձակի կողմերի բոլոր գավառները և եկեղեցիները ավերակ ու թափուր դարձրին ամբողջ ունեցվածքից ու տարան-լցրին իրենց բանակները: Իսկ հոտերի, նախիրների, արջառների թիվը ո՞վ կարող է ասել, քանի որ նրանք կարգ և սովորություն ունեին ամբողջ ավարի մեկ

տասներորդը տալ իրենց գլխավորին, ասում են՝ այժմ ոչխարներից նրա բաժինը քսանհինգ հազար է, տավարից՝ ինը հազար, իսկ մնացածը մտքով կքննես... Նրա գալուստը մեզ օգտակար եղավ, որ լազգիների անամոթ ազգից ազահ, անկուշտ և անողորմ վրաց ազգը ճռաքաղ արեց [ոչնչացնել]:

Եվ պետք է իմանալ, որ Վախթանգ թագավորն ինքը բարեսեր, աստվածապաշտ, քրիստոնյասեր և անհիշաչար մարդ էր, որ և շատ անգամ զորքին պատվիրում էր և սպառնում այնպես չվարվել քրիստոնյաների հետ, ինչպես [վարվում են] սպանության և գերության նպատակով: Իսկ նրանք, ըստ վրաց բիրտ ու դաժան բարքի, չէին ունկնդրում և չէին լսում իրենց գլխավորի հրամանին: Եվ սրանք, կատարելով այս, գնացին իրենց տները, և մեր երկիրը մնաց անտեբուունջ ու առանց գլխավորի, մարդիկ սկսեցին իրենց կամքի ու մտքի հաճույքները կատարել: Ուստի ես տեսնում եմ այս և նկատում, որ գործի ավարտին խաղաղության նշան չկա: Ես Վախթանգի բանակի մեջ էի և նրանց հետ ուղղություն վերցրի գնալու վրաց երկիրը, և գնացիք ճանապարհ ընկնելով դեպի Գյանջա: 1171 թվականին՝ մայիս ամսի 28-ին, մտանք Տփղիս քաղաքը՝ այնտեղ մնալով չորս ամիս: Եվ երբ աշունը եկավ, սեպտեմբեր ամսին Վախթանգը կրկին սկսում էր գնալ Գյանջա այդ պատճառով: Որովհետև երբ պարսից թագավորությունը միանգամից թուլանում էր և կործանման ընթացքում (որի որպիսության մասին հետո կպատմեմ), նրա թշնամիները առավել ևս գլուխ բարձրացրին, մանավանդ մեծամեծ կայսրերը և ինքնակալները, ասեմ՝ Մոսկվայի ռուսաց Պետրոս թագավորը և իռանոց կոստանդնուպոլսեցիներին տիրող իսմայելացին. յուրաքանչյուրն իր կողմից զորք շարժեց պարսից երկրի վրա: Որովհետև ռուսը կամենում էր օգնել պարսից թագավորին, իսկ իռանեացին (օսմանցին) ջանում էր իրեն վերցնել՝ ասելով. «Որովհետև ուրիշները կամենում են տիրել այն կողմերին, ես [էլ դրանք] պետք է առնեմ, քանի որ Ատրպատականի երկիրը առաջվանից մերն է ե-

ղել»: Սրա պատճառով երկու կողմերից սկսեցին պատգամավորություն ուղարկել վրաց Վախթանգ թագավորին: Մեկն ասում էր. «Իմ կողմն եղիր և ինձ հնազանդվիր», մյուսը՝ թե. «Իմ հավատակիցն ես, պարտավոր ես ինձ լսել և ինձ մոտ գալ, քանի որ Պետրոս թագավորը Վախթանգի մոտ դաշինքի պայման [է ունեցել] և ժամադիր եղել: Որովհետև այս աշնանը՝ հոկտեմբերին, հենց ինքը հասել է Շամախի քաղաքը, և նրան այնտեղ պետք է պատրաստութեամբ ընդունել: Այդ ժամանակ պարսից թագավորը, որ պատրաստվել էր իր գահից ու բարձրությունից իջնել, շտապ մի հրովարտակ հասցրեց Վախթանգին, թե. «Քեզ տվեցի Գյանջայի և ողջ Ատրպատականի կողմերի իշխանությունը և քեզ կարգեցի այդ կողմերի բոլոր իշխողների գլուխն ու սպարապետը, որի համար արագորեն զորք գումարելով՝ կգաս Գյանջա և իսկելով կզգուշանաս այդ կողմերի մեր թշնամիներից»: Վախթանգը, այս հրամանը նրանից ընդունելով, մտախոհ եղավ իր սրտում այսպես, թե. «Ահա երկու ինքնակալներիցս ստիպված եմ, որ մեկի հրամանը պետք է կատարեմ: Արդ՝ մեզնից իռանեացին, այլահավատ և օտար լինելով, կամենում է բռնությամբ տիրել մեր երկրին: Իսկ այս կողմը մեր միակ բուն տերն է, այսինքն՝ պարսից թագավորը՝ մյուսը մեր հավատակիցը և քրիստոնյա կայսրն է՝ մանավանդ մեծ զորությամբ: Արդ՝ շարժվեմ-գնամ նրանց հրամանով, և նրանցից ում հրամայվածը հաջողվի [ընդունվի], այն կկատարեմ»: Եվ իսկույն հրաման արձակեց զորք գումարել, շուտափույթ հավաքեց վրաց և հայոց ազգերի զորքերի բազմությունը և չթողեց մեկին, որ իր հետ չվերցնե: Նրանց հետ և ինձ վերցրեց բերելու համար: Մեր այնտեղ գնալը, մինչև վերադարձը մեզ [մեծ] սիրով էր ընդունում, մեր ռոճիկն էլ իր կողմից էր հրամայված: Եվ մեծ ամբոխով ելնելով Տփլիսից, որոնց թիվը անսահման շատ էր, և չկարողացա զրի առնել, եկանք-հասանք ջարդված կամուրջը, որ Անդրբորվի են ասում, [դա] սուրբ խաչի տոնի օրերին էր: Եվ ապա այստեղ այս օրը, առաջ կանչելով ինձ, հրամայեց իրենից առաջ

գնալ մեր երկիրը՝ Ղարաբաղ: Այնտեղ հավաքված էին հայկազուն զորքերը մելիքների միջոցով, երիտասարդների չորս գլխավորներ են եղել, որոնց անուններն են՝ Ավան, Շրվան, Շահնի և Սարուխան: Սրանք հարյուրապետներ և յուզբաշիններ էին կոչվում և Ղարաբաղի մելիքների հետ, Վախթանգն առաջինը մեկնելուց և պարսից իշխանության խախտվելուց հետո Աղվանքի ամբողջ քաջասիրտ, արիական և զորեղ զինվորներն ու երիտասարդները, միաբանվելով միմյանց հետ, ըստ իրենց [ցանկության] կազմել էին բազմաթիվ զորքեր՝ ավելի քան տասներկու հազար, և ամրացել Արցախի ամուր վայրերում: Եվ այսպես բազում արիություններ ցույց տվեցին մեր երկրում, որոնց պատմությունները առաջիկայում ավելի հաճախակի կգտնես:

Այժմ սրան լսելով նրանց մասին՝ արագ կերպով մեզ ուղարկեց իր մոտ բերելու նրանց՝ կազմ ու պատրաստ զորքերով: Եվ հրամանի համաձայն գալով՝ մենք կարգի բերեցինք նրանց ըստ զորքի իշխանների պահանջի, որովհետև անշարժ էին զինվորական ծառայություններին: Եվ այսպես ամբողջացնելով ամենը՝ մոտ տասը հազար ընտիր և սպառազեն մարդ, որոնց հետ նաև մեր քահանաների և պաշտոնյաների խմբերը վերցնելով մեծ ճոխությամբ ու խնջույքներով և [դա] համարելով նոր նորոգված հայոց իշխանություն՝ երեք օրում գնացինք-իջանք Գյանջա քաղաքի մերձակայքում՝ Չոլակ անունով վայրը: Քանի որ Վախթանգ թագավորը հանգրվանել էր քաղաքի այն կողմում՝ ջրերի ափն, որ Ղոչղարի գետ և Ղարա-արխ են ասում: Եվ երեք օրից հետո հրամայեց գնալ իր մոտ. և մենք ելանք-գնացինք: Երբ մոտեցանք նրա բանակին, հենց ինքը հրաման տվեց իր զորքերին, որ ընդառաջ գնան մերոնց, որպես թե ողջույնով ընդունում են նրանց: Եվ երբ այսպես մեծ շուքով երկու կողմերի զորքերը հանդիպեցին միմյանց, և պատերազմի օրինակով բանակը կարգեցին ճակատ առ ճակատ, մեր դիմացի քաջամարտիկ զինվորները, առաջ շարժվելով արագընթաց երիվարներով, ու զրահներով

զինված՝ ճախր առնելով պարուն էին ճակատի դիմաց, և հրացանների ձայնից սարսում ու թնդում էր այն վայրը, ու նրա փոշեխառն ծուխը՝ որպես կայծակնափայլ ամպ, նսեմացնում էր արեգակի ճառագայթները, մինչև որ միմյանց հազիվ էինք տեսնում: Եվ այսպիսի աշխուժությամբ հասանք-իջանք նրանց բանակի մոտ: Տեսնելով մերոնց այսպիսի առաջխաղացումը՝ Վախթանգը ցնծաց իր հոգում և մարմնում: Եվ նույն ժամին [մարդ] ուղարկեց, մեզ կանչեց իր մոտ և տղաներին ու մելիքներին [զորքի] գլուխ կարգելով՝ հորդորիչ խոսքով հուսադրեց և զորացրեց՝ ասելով. «Այսուհետև զորացեք և քաջ եղեք՝ որպես հզորության որդիներ, և այստեղից ու ոչ մեկից չվախենաք, որովհետև ահա հասել է քրիստոնյաների փրկության ժամանակը»: Եվ խոսքը ուղղելով մեզ՝ շատ շնորհակալ եղավ մեզնից, առնավոտյան բոլոր գլխավորներին մեծարեց և այսպես նրա մոտ մնացինք շուրջ քսանհինգ օր:

Սեր նկատմամբ այսպես սեր դրսևորելու պատճառն այս է. առաջին՝ բնական սեր ուներ հայոց ազգի նկատմամբ և այնքան չէր հավատում վրաց իր ազգին, որ միշտ նենգավոր է ու խորամանկ: Դրա համար կամենում էր այս զորքը, մանավանդ հայոց ազգը իր սեփականը դարձնել՝ որպես տիխիսեցիներ: Երկրորդ՝ ռուսաց մեծ կայսր Պետրոսի գալուստը որոշված և ստուգված էր, ու կամենում էր հայ և վրաց զորքերով ճոխ ու շքեղ [ծևով] ընդառաջ ելնել նրան: Բայց նրա գալստյան համբավի մեծ ակնկալությունից և սպասավորել [ցանկանալուց] հետո մեր մեղքը նրանից արագընթաց եղավ, որովհետև [նա] եկավ-հասավ Դուռն Երկաթի, այսինքն՝ Ղարբանդ, և տեղի բնակիչները ինքնակամ ու հոժարությամբ ամբողջ նրա ձեռքը տվեցին: Բայց չգիտեմ՝ ինչ պատահումը եղավ. ոմանք ասացին, որ հիվանդությունից և այլ պատահարներից շատ վնասներ եղան զորքին. ծիերի կորուստը երկրի եղանակի՝ նրանց անընտել լինելու պատճառով եղավ, այսինքն՝ ջապախանից (ճեպհանե), և զորքի ռոճիկների [համար], ուրիշները ինչ-որ այլ պատճառներ ասացին:



Ինչևիցե, այնտեղից նրա վերադարձը եղավ. մեծ զորք թողնելով այնտեղ՝ ինքը գնաց իր երկիրը՝ պայմանավորված [[իննելով] մյուս տարին գալ ու վերադառնալ: Վախթանգը, լսելով այս, նույնպես սկսեց վերադառնալ իր տեղը, որովհետև նույն պահին պարսից թագավորի դռնից ևս լուր հասավ, թե շահը և իր զորքը ներսից փակեցին Ասպահան քաղաքը, և [իրենք] մոտ են առնելուն: Բայց և իր հետևից սուրհանդակներ ևս հասան, թե. «Ահա քո հին թշնամիներից կանենուն են ելնել այս քաղաքի քո տան վրա, պարտավոր ես շուտափույթ հասնել այստեղ»: Դրա համար շտապ վերկենալով՝ հետ դարձավ և կարճ ժամանակում պատերազմելով Խազախի երկրի հետ՝ իրենց նախկին ինչ-որ ոխի պատճառով, գնաց իր տեղը՝ Տփլիս քաղաքը: Իսկ մենք մնալով սկզբում ասված հուլիսին՝ դարձանք (յուրաքանչյուրս) մեր տեղերը և ամրացանք լեռներում, ուր և դժվարին էր:

Բայց Վախթանգի որպիսությունների մասին դարձյալ մենք մի փոքր պատմություն ունենք առնելու, որովհետև նրա վերադառնալուց հետո Գյանջայի, Կախեթի, Երևանի, Բորչալուի, Ղազախի բռնավոր [իշխողները] տակավին իրենց տեղերում էին: Սրանք բոլորը թշնամիներ են եղել նրա հետ, մանավանդ Կախեթի ուրացյալ Միամմադուլի խանը, որին առաջ Կոստանդ էին ասում՝ Թամրազի թոռներից, և Գյանջայի Օղուրլու անունով խանը, որոնք ազգով և ի բնե Վախթանգի ազգի հետ թշնամիներ էին, այժմ միաբանվելով ընդհանրապես ապստամբության, Վախթանգի մասին գրեցին Թահմազ անվանյալ նոր շահին, քանի որ շահ սուլթան Զյուսեփի որդիներից մեկին՝ Թահմազ անունով, Ասպահանից փախցրին և բերեցին Ղազուխն ու շահ կարգեցին: Սրան գրեցին Վախթանգի մասին, թե խորհել է ապստամբել քո դեմ, հայոց և վրաց ազգ(եր)ը միաբանում են իր հետ, և դեսպաններ է արձակել ռուսաց թագավորի մոտ, որպեսզի գա, տիրի քո աշխարհին: Արդ՝ ինչ հաճելի է քո աչքերին, կիրամայես կատարել: Իսկ այն նոր բուսած անխոհեմը հրովարտակ

գրեց, թե. «Կախեթի երկիրը, Քարթալան, որ Տփլիսն է՝ վրաց ամբողջ թունամներով [փողերով], տվեցի Միամմադուլի խանին, իսկ Գյանջայի և Երևանի գլխավորներին ու զորքերին, ուրիշներին ևս, վերևում գրվածներն էլ տվեցի նրան օգնական, ահա պահանջում եմ Վախթանգին, կամ նրա գլուխը կուղարկեք ինձ մոտ»: Եվ ապա բոլոր կողմերից զորք հավաքելով նրա դեմ՝ նույն ինքը Միամմադուլի խանը գիշերը գաղտնի մտավ բերդը՝ չիմանալով Վախթանգին: Առավոտյան հանկարծակի Վախթանգի տան վրա ձգեց թոք [«թնդանոթ»]՝ ասելով. «Շահի հրամանն է, ելիր այստեղից և գնա»: Իսկ նա [Վախթանգը] հագիվ թե կարող էր անջատվել պարսիկներից, որ առաջվանից [նախապես] երթումով կանչեցին իրենց մոտ, երեք տարի պահեցին Պարսկաստանի խորքում՝ արքայաձայրերում և դարձյալ պարսից զորքի իշխանությունը տալով՝ հրամայեցին գնալ իր տեղը: Սրանից հետո Վախթանգը եկավ և թեպետ դեմքով այլ կերպ էր, սակայն ներքնաշխարհով [մի այլ տեսակ էր]. սրտի զղջումը երևում էր բոլորի աչքում: Դրա համար նրան հույժ պտելի էին պարսիկները, ինչպես նաև նրան թշնամիներ: Այժմ նրա դեմ պատերազմ սկսելիս նա հավաքեց իր զորքերին, մանավանդ քաղաքացիներին, հայկազուն քաջամարտիկ զորականներին, որոնք հոգիները և որդիներին, ունեցվածքը և իրենց դրել էին [վստահել էին] նրա վրա հրժար սրտով և պատերազմ սկսեցին դեկտեմբեր ամսվա սկզբներից մինչև սուրբ Չատկի տոնը՝ Վախթանգը՝ վրացի և հայ զորքերով, Միամմադուլին՝ պարսիկներով:

Էլ ի՞նչ գրեմ այն երկրի ավերածության, գերության և սպանության մասին. գործի ավարտի [հարցում] առաջինն այն եղավ, որ պարսից զորքերին հաղթեցին կոտորելով և փախստական դարձնելով: Իսկ նույն ինքն Միամմադուլուն զորքից գատ գտնելով՝ հալածել էին [նրան] մոտ հասնելու ժամանակ: Նա երիվարի սանձը ուղղել էր Կուր գետին՝ Տփլիս քաղաքի ներքևից: Եվ այնպես երիվարն իրեն զցեց գետը, լողալով անցավ այն կողմը. գնաց իր երկիրը՝ Կա-

խեթ: Բայց [խանը] չիրաժարվեց և չդադարեց չարությունից, որովհետև կրակի պես վառված էր չար նախանձով և երկրորդ՝ Յուդան [հանդերձանքը] հազցրել էր իր հորը՝ սատանային: Որովհետև գնալով իսկույն իր հետ միաբանել տվեց լազկյաց ազգին և ամբողջ կովկասյան լեռնաբնակիչներին, որովհետև անհուսալի դարձավ պարսից կողմերից, և նրանց հետ ուխտ կնքեց այսպես. «Եթե սատարեք ինձ, օգնեք, ձեր օգնությամբ և գործությամբ առնեմ Տիխիս քաղաքը, ձեզ կտամ, ինչ գտնվի նրանում՝ ոսկի, արծաթ, կերպասեղենը, կտավը, բրդեղենը, պղինձը, երկաթը, անագը, միաժամանակ և գերիներին, եթե [քաղաքում] գտնեք: Եվ այս ամենի վրա, ըստ ձեր մարդաբավի՝ յուրաքանչյուր մարդու [համար] երեք թուման ևս ինձնից կտրվի, միայն թե իմ մեծ վրեժխնդրությամբ վրեժն առնեմ»:

Չարիքների մեջ վարժվածները սաղայելի աշխարհակործան մոլեգին զինվորական զնդերը, նրանից լսելով այս, որ իրենց գորապետը այսպիսի ավետիս [բարի լուր] տվեց, իրենց սրտերում չափազանց ուրախացան և խոստացան կատարել նրա կամքը: Եվ շուտափույթ մի վայրում հավաքեցին լեռնական բարբարոսների ազգերի հույժ վայրենաբարո բազմություն՝ հանդերձ իրենց գլխավորներով, որոնց Ալի սուլթան և Իսմի էին ասում, և ուրիշներ: Եվ վիճակահանությամբ զորքը երեք մասի բաժանելով՝ ելան ամենափարթամ Տիխիս քաղաքի վրա, որին բազում ժամանակներից ցանկանում էին: Եվ հանկարծակի եկան ու պաշարեցին քաղաքը: Որովհետև Վախթանգի զորքը ցրվել էր, և ինքը ամհոգ [վիճակում էր], որոշ օրեր դիմակայելով՝ տեսավ, որ ինչ-որ տեղից օգնություն չհասավ: Իսկ վրաց գլխավորներից և մեծամեծներից [ոմանք] հեռացան, դրանցից են՝ Ղարաղուլխանի Գեորգի եռաթև խաչը, Ղափլանեցիները և քաղաքից ուրիշները: Վախթանգը, տեսնելով այս, որ համառելը օգուտ չի բերում իրեն և քաղաքին, ինքնին ելավ քաղաքից դուրս՝ մի եզրը: Եվ հրաման տվեց քաղաքի գլխավորին նրան ընդառաջ ելնել և հոժարությամբ զորքը ներս թողնել, որ թերևս իսպառ չավերեն

նրանց, և [նրանք] փրկվեն գերությունից ու մահից: [Սա բարյացակամ գտնվեց] քաղաքի նկատմամբ, քանի որ իր սեփական հայրենիքն էր: Եվ ինքը, գնալով վերին կողմերը, ամրացավ Վրաստանի խորքում՝ այնտեղից հաճախակի պատգամավորներ ու դեսպաններ ուղարկելով ռուսաց թագավորի մոտ, որպեսզի զորք հասցնի իրեն՝ իր թիկունքը, բայց [զորք] չժամանեց:

Իսկ երբ Մհամմադուլլին լազգիների բազմությամբ մտավ քաղաքը իսկույն սկսեցին քաղաքը որոնել տոն և դռնից դուռ, այլև բոլոր եկեղեցիները և նրանց վերնատունն ու ներքնահարկերը: Երկար ժամանակներից այստեղ անդրդվելի էր թշնամիներից և պատերազմում խաղաղացված ամենափարթամ և վայելուչ Տիխիս քաղաքը: Եվ ինչպես ամենքին հայտնի է, [քաղաքում] բազմավաստակ վաճառական մարդիկ են, փափկասուն և գեղեցկատես կանայք, նրանց տղաներն ու աղջիկները, կենցաղի քաղաքավարական [կերպով] շատերից [բարձր] ու անմեամները: [Քաղաքը հարուստ է] գեղեցիկ պաճուճանքներով զարդարված ապրանքներով, ճոխացված կահկարասիներով և հայոց իշխանության ժամանակներից՝ տների ու նրանց սեղանների սպասք և զարդարանքներ. շատերը՝ պղնձի փոխարեն ոսկուց և արծաթից սարքված, իսկ հանդերձանքի, զգեստների ականակուռ զարդերի, դիպակների՝ մարգարտաշատ մետաքսյա ոսկեթել հանդերձի պայծառությունը պետք է դիտել, որչափ [մարդու] միտքը բավարարում է: Իսկ եկեղեցիների շքեղության և պայծառության մասին ի՞նչ կարող եմ ասել, որովհետև չափազանց շքեղացված էին ոսկեղեն և արծաթեղեն [զարդերով], մետաքսյա հանդերձանքով, ամեն տեսակ կահկարասիներով, խեցեղեն սպասքով: Այս բոլոր գրվածները այն վայրի, անգութ, ազահուրյան, իմաստով անհագ, զազանաբարո, տգրկանման ազգերը [իրենց] ձեռքը վերցրին և կողոպտելով խոշոր ավար ձգեցին իրենց, մանուկներին և տղաներին, կանանց և աղջիկներին գերեցին՝ [նրանց] աչքերի հաճույքն առնելով: Իսկ խայտառակությունների չափի մա-

սին ո՞վ կարող է գրել: Բայց սպանություն և այլ ավելի գերեվարու-  
թյուն ոչ այնքան կատարեցին, որովհետև խանը չթողեց: Սակայն  
նրանք նրան չլսեցին, որովհետև խոստացած դրամն էին պահան-  
ջում: Դրա համար [[խանը] ծանր հարկեր գցեց քաղաքացիների  
վրա, [այն էլ] մեծ թվերով՝ մոտ քառասուն հազար թուման: Եվ վերց-  
նելով այն՝ տվեց նրանց ու արձակեց՝ իրենց տեղերը գնալու հա-  
մար:



Կենտրոնում Արցախի թեմի առաջատար վիճակում գտնվող Ս. Սարգիսյանը Է. Մարտիրոսյանի հետ:

**An Outline of Aghvan history written by  
Aghvan Catholicos  
Sir Yesayi Hasan Jalalians  
Printed in the printing-house  
of St. Hakobians Apostol Cathedra.  
Yerusalem 1868-RYZE**

**By order of S.S. George All Armenians  
Highness Catholicos  
S.S. Yesayi (Sacred) Bishop and St. Yerusalem  
patriarch and S.S (Sacred) archbishop at the  
times of Konstantinopol patriarch**

## Introduction

The name of Catholicos Yesai would be found in the books of Aghvan catholicoses lately but we introduced to it only by means of this writing. As it is known Hasan Jalalians was from the very ancient and princely dynasty, whose life and important affairs had splendid place in our national history. He sat on the Gandzasar Cathedra (the head of which was called Aghvan Catholicos) in the first quarter of the eighteenth century, but have not any important and certain information (facts) about his life and biography. But we must say truly, that compare with his ancestors we think that according to national clergy and good affairs he was enough educated, especially he loved his people, was attentive and careful, arose national spirit of courage, in the memory of ancestors and the military against the enemies of their church and nation. These facts easily mentioned in the previous works of this historian and would be investigated, because he used even provincial and foreign words in his famous words and explanations. But the importance which we give to this man's work is in the last century's historical theories which had been done in Persia, Georgia and Aghvan country, and in those relations which are connected with national history, which lasted till 1723 A.C. The first time this manuscript was printed in Shushi in 1839, by order and expenses of Archbishop, Knight of Metropolice, the leader of Karabakh and other sides Baghdasar Hasan Jalalians.

## Preface

In the past some people, especially those who were vigorous, clever, brave and also sacred, promoting the history of events of each century in the previous times and writing them, left memory and warnings to the posterity. We listened to them and now represent some names here because of two reasons. First of all my words are directed to present history, where we are and the sense of my words and the composition are taken from their books, we must be grateful to them, taking alone the names of the grateless people. The second, in spite of the fact, that some of them were Jews and gentle, some were Christians of other nationalities, for example Greeks, Assyrians and Latins, the others from our Armenians, but without God's powerful and saint spirit it would be difficult for them to leave for us such works and legends, and how there is the holiday of the anniversary of Pentecostes. I hope that I'll be presented as those in the past by the most powerful judge for finishing my work.

And now as I have promised I represent the names of the first list. They are: first of all Apricanos, Hesav, and Hekhesipos and Hovsephos (Jews), Nonnos priest, Yevsebios, Zovsimos, Pavstos Byuzand, Zenob Greek, Teodoritos, Hovhannes Tchepely, Teodoros, Hovhannes (Asia) the Cleverest Kora, Hakovb Rurhaetsy, Dionecios Sarkavag, Ignatios (archbishop from Antliokhia), Slyua Yerets, Hovhannes Kesnits, Dioncios the son of Salip and Michaeld Patriarch of Assiria.

And among us, in our nation: brave Agatangeghos, Movses Khorenatsy, Eghishe saint vardapet (master) and Ghazar Parpetsy, Tovma Vardapet Artsruny, Shapouh Bagratuny, Hovhannes Catholicos Armenian, Movses Aghvanits historian Kaghankatvatsy, Ukhtanes bishop Urhayu, Stepanos vardapet Asoghnik, Aristakes vardapet Lastivertsy, Matkos Urhayi, Samvel kahana from Ani, Vanakan vardapet Tavoushi, his students Kirakos and Vardan. And the last Arakel Vardapet Davrijestsy, who has nearly 65 years history, beginnig from 1050 year up to 1115 year. And if we have any other histories or there are some other histories in foreign works, so we leave it for other historians.

And some of them who were more skilful, began their being from Adam and in certainway pasings through the centuries and times, finishing till the end of their lives.

And some of the famous (notable) centuries, brave kings and splendid people put the start of their word, write the history of real great and small events, despots, about Christian religion and church, separatits, difficult times, and also about peaceful and pious kings and earls, about world buildings and church reforms, enemy's victories. In their histories they expounded their admiration about different events. Each of them expounded the history up to his time as an advice, help and warning for successors in order to help the kind people and to deport the evil men.

And now my dear brothers as they lived in the times of Christianity and kind kings (pious kings) and earls or in the times of foreign harness, who were against our religion, but they wish peace and prosperity to the world and increase of people for their own interests, their calamities, bitter nesses, sorrows, woes, pangs, complaints are also in their works. And how much must we lament, cry and groan about our life, in fact because of it we lost not only our kings and earls, but

also were under foreign harness.

They were against our church and saint religion, but they didn't fight evidently.

And though they robbed us, but they also protect us from the foreign and external enemies and robbers. Our God liquidate them, and if it was for our immeasurable and countless guilties, then we deserved it, and if it was for their interests, who had been robbers, vandals, briberious, defilers and etc. So he investigated unreal works and named real the unreal events; he only must know, that can reward them.

Choose your variant, if you want. But we had the Cods order: „Strike shepherd and the flock will dissipate“. So it was and with us, we lost our own shepherds very early, and now we separated from, foreign and other religious owners and became as the shipwrecked men, who was in water of the high waves and couldn't save. Because I know that, as in the old times , so in the new period the righteous Armenians write so much about lament not only of old times, but of the future years. That's why I couldn't keep silence, that's why I have compared my abilities and found, that I'm much more weak, uneducated, than the priests, than the church's children and leaders, than my known investigators and my present friends, especially if they connected with our enemies. But on the other side I looked at brave and educated figures, who kept silence and didn't care of people, and I couldn't bear and applied to the powerful God, who made deaf hear and dumb speak, to St. Maiden, to St. Karapet, who brought light to us, to our Father' The Great Gregory, to all the Saints and St Brothers.

I threw me into this difficult work, not for my abilities, but for your brotherly love. That's why I asked to give up the Lord Cod's pupils. especially help with prayers and didn't pay attention to it.

Being your compatriots I must say that in most divine books humanism is more respectful, than superlatives. And I must say for it asked to agree with my book, because of I wrote it in the darkness for our future readers, for our Father, son and saint Holy thank goodness and for the audience's use.

*Agvan Catholicos sir  
Yesajl Hasan Jalalants.*

### **A short history of Aghvan country Chapter A**

During the reign of the Persian nation the Maohometan religion was the main and even in the conguered regions, which started from the Caucasian mountain and the Kaspian sea (from so called Iron Door) up to Mazandaran, and from there through the borders of Hozpeky Khorasan and Ghantahar castle and then spreaded to the Indian sea and Bantar town and from there to Shiraz and through it reached Hamadan and the Van sea, and then through the borders of Maraz to khoy and Salmast, and throgh Nakhigevan to the Eraskh river, and then through Sahat, Kaghzvan and Koghb passed to the Akhurian river (which called Arpachay). And from there through the region Ghayghuly passed to the borders of Georgia up to Tpkhis and Kakhet with all its regions and districts.

And then again reached the Caucasian mountains, up to the same castle Hunrakerp (Darband), to the place named Tarkhu where stopped the highlanders' leader Shamkhal. So here in these places in eastern lands in mess with European southern and northern parts ruled the Persians having their royal throne and the most famous royal residence and capital was Shosh (Aspahan) and there kings reigned and ruled all the obedient nations and spreaded their author-

\* Только печати без подписей.

1726 г. июля 19-Письмо католикоса Есаи к  
Ивану Карапету о прибытии турецкого  
паши в Шемаху для установления границы  
между Россией и Турцией

Ի տէր Եսայի\* կաթողիկոս տրինութեամբ և սիրով ծանիր պարոն  
Իւան Կարապետ: Քեզ շատ նայեցի, ոչ երկիր և ոչ մէկ գիր ողարկե-  
ցիր:

Չիմա մէլիք Թամրազն մէկ դիր ինձ երեզ, որ տեղիս աւիալն իր  
հարցուցել:

Թէ իմանաս, փաշան այն եկօղ տեսպանն առաւ, գնաց Շամախի,  
որ երկուց թագաւորաց հրամանաւ տեղն սնօր պիտի հաստատեն,  
տեսնունք որտե՞ղ կուսահմանեն, հալա մաշուր չի, վերջն աստուած  
գիտէ, թէ զինչ լինելոց է:

Ապա՝ այս եկօղս հենց պահեցին ներսն դուրսն, որ մէկ մարդ  
չկարաց մօտանալ կամ տեսնել կամ մէկ խօսք տալ, առնուլ, ամեն  
մէկ մարդին վերայ ե 2 (5-6) մարդ կենար:

Դարձեալ թէ մեր որպիսութիւն հարցանես, փաշան լաւ տեսանք,  
մեկիքներին սուպաշի թային արին շատ մարդով: Պիտի հրամանքդ  
մեր տղոցդ խրատես փարաղաթ կենան, գեղարանց հետ բան չու-  
նին, թէ որ չէ՝ սոքա էլ կոխի կանեն. իւրեանք գիտեն:

Եւ դու ողջ լեր:

ՌՃԴԵ (1726) թվիս յուլիսի ԺԹ (19) գրեցաւ:

АВПР, ф. 100, 1739 г., д. 2, л. 29. Подлинник.

А. Г. Абрамян, указ. соч. док. № 75.

\* На левом поле печать католикоса Есаи.

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նրա տապանաքարին արձանագրված է. «ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԵՍԱԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՂՈՒՄՆԻՑ, ՈՐ Է ԱԶԳԷՆ ԶԱԼԱԼ ՂՕԼԻՆ: ՈՅԴԷ(1728): ԹՈՒԻՆ:»(Տե՛ս Մակար եպս. Բարխուտարեանց, Արցախ: Բ., 1895, էջ 176, Գանձասարայ եւ Հաւոցատկոյ արձանագրութիւնք, ժողովեաց եւ ի լոյս ածելոյ պատրաստեաց Յովսէփ Օրբէլի: Պետրոգրադ, 1919, էջ 30, Դիվան հայ վիճագրութեան. պրակ V . Արցախ: Կազմ. Ս. Գ. Բարխուդարյան: Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982, էջ 64, Ուլուքաբյան Բ. Ա., Գանձասար: Եր., 1981, էջ 144 ): Տես նաեւ՝ Եսայի կաթողիկոս Հասան-Ջալալեանց, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի: Երուսաղէմ, 1868, էջ Ե, Եսայի կաթողիկոս Հասան-Ջալալեանց, Համառօտ Պատմութիւն Աղվանից երկրի/ թարգմ., առաջաբանը եւ ծանոթ. Բ. Ուլուքաբյանի: Եր., 1997, էջ 5-6, Ուլուքաբյան Բ. Ա., Հայոց Արեւելից կողմանց եկեղեցիւն եւ մշակույթը: Եր., 1998, էջ 213, 342-344, Բաբայան Լ. Հ., Դրվագներ Հայաստանի 14-18-րդ դարերի պատմագրութեան: Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984, էջ 238 եւ այլն:

2. Տե՛ս Պարսամյան Վ., Ղարաբաղի ազատագրական շարժումների պատմությունը Եսայի Հասան-Ջալալեանի լուսաբանությամբ: «Բանբեր Երեւանի համալսարանի»(այսուհետեւ՝ «ԲԵՂ»), 1985, հմ. 2, էջ 140, 145, նույնը տե՛ս Պարսամյան Վ. Ա., Պատմագիտական աշխատություններ: Երկրորդ մաս: Եր., 1988, էջ 146:

3. Տե՛ս Առաքելյան Ա. Գ., Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն. 14-19-րդ դդ. առաջին կեսը: Հատոր երկրորդ: Եր., 1964, էջ 86:

4. Տե՛ս Ուլուքաբյան Բ. Ա., Հայոց Արեւելից կողմանց եկեղեցիւն եւ մշակույթը, էջ 208:

5. Տե՛ս Ուլուքաբյան Բ. Ա., Գանձասար: Եր., 1981, էջ 162:

6. Տե՛ս Ռաֆֆի, Երկերի ժողովածու. տասներորդ հատոր: Եր., 1959, էջ 176, հմմտ.՝ Раффи, Меликства Хансы. 1600-1827. Е., 1991, с. 24.

7. Տե՛ս Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов, т. II, ч. II, под ред. Ашота Иоаннисяна. Е., 1967, с. 338, прим. 52.

8. Գանձասարում մատենադարանի առկայության մասին ավանդույթ կա, ըստ որի թշնամիների հարձակումների պատճառով Ամարաում նստող Պետրոս Գ կաթողիկոսը հարկադրված աթոռը տեղափոխում է ավելի ապահով վայր Գանձասարի վանքը, փոխադրելով միաժամանակ վանքի արժեքավոր հայկական ունեցվածքը՝ մատենադարանը, եկեղեցական անոթներն ու սպասքը(տե՛ս Իշխանեան Եղիշե, Լեռնային Ղարաբաղ. 1919-1920: Եր., 1999, էջ 336): Նա վկայում է նաեւ, որ 1907 թ. Գանձասարի նորոգման ժամանակ վարպետ Խոսրով Չալյանը դուրս ցցված քարը պատից հանելով՝ թաքստոց է գտել, որտեղ անոթներ եւ սպասք է եղել: «Ղա վանքի թաքստոցներից մեկն էր,- շարունակել է Ե. Իշխանյանը,- սակայն, ըստ ավանդության, փոխադրված մատենադարանն էլ տեղավորված էր թաքստոցներից մեկում, որը հայտնաբերված չէ»(նույն տեղում, էջ 337):

9. Տե՛ս Եսայի Աղուանից կաթողիկոս Հասան-Ջալալեանց, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի: Երուսաղէմ, 1868 (այսուհետեւ՝ Եսայի Հասան-Ջալալեանց), էջ Ը-Թ:

10. Լեո, Երկերի ժողովածու. երրորդ հատոր, գիրք երկրորդ: Եր., 1973, էջ 446.

11. Սիմեոն կաթողիկոս Երեւանցի, Ջամբո. Գիրք որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի եւ պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս եւ իրոյց շրջակայից վանօրեփցն: Վաղարշապատ, 1873(այսուհետեւ միայն՝ Սիմեոն Երեւանցի ), էջ 81, հմմտ.՝ Симеон Ереванци, Джамбр. Пер. С. С. Малхасянца, под ред. и с предисл. П. Т. Арутюняна. М., 1958, с. 151.

12. Սիմեոն Երեւանցի, էջ 81-82:

13. Տե՛ս Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов, т. II, ч. I, под ред. Ашота Иоаннисяна. Е., 1964, с. 232-234, док. N 96.

14. Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2 ք, վավ. 141(մեջքերունն ըստ՝ Դանիելյան Է. Լ., նշվ. աշխ., էջ 216):

15. Հովհաննիսյան Աշ., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության. գիրք երկրորդ: Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1959, էջ 293:

16. Նույն տեղում:

17. Թովհենան Յակոբ Յ., Յուզակ ձեռագրաց Խաչիկ վարդապետի Դաղեան. ժողովուած 1878-1898, մասն Բ: Վաղարշապատ, 1900, էջ 19:

18. Չոբանյան Պ., Եսայի Հասան-Ջալայան: Տե՛ս Քրիստոնյա Հայաստան. հանրագիտարան: Եր., 2002, էջ 316 :

19. Բարխուտարեանց Մակար եպիսկոպոս, Պատմութիւն Աղուանից, հատոր Բ: Թիֆլիս, 1907, էջ 69-70:

20. Սիմեոն Երեւանցի, էջ 82 (տես նաեւ՝ Ուլուբաբյան Բ. Ա., Հայոց Արեւելից կողմանց եկեղեցին եւ մշակույթը, էջ 209):

21. Հովհաննիսյան Աշ., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության. գիրք երկրորդ, էջ 293:

22. Դանիելյան Է. Լ., նշվ. աշխ., էջ 217:

23. Տե՛ս Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов, т. II, ч. I, с. 237-248, док. N N 98,99, 100( Կ. Եգյանը փաստաթղթերը սխալմամբ թվագրել է մայիսի 27-ով տե՛ս Эзов Г. А., Сношения Петра Великого с армянским народом, с. 154-166), սակայն վերոհիշյալ ժողովածուում այն ուղղված է ըստ հայերեն բնագրի(տես Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов, т. II, ч. I, с. 246).

24. Ուլուբաբյան Բ. Ա., Հայոց Արեւելից կողմանց եկեղեցին եւ մշակույթը, էջ 213:

25. Տե՛ս Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов, т. II, ч. I, с. XX II.

26. Ուլուբաբյան Բ. Ա., Հայոց Արեւելից կողմանց եկեղեցին եւ

մշակույթը, էջ 213:

27. Բարխուտարեանց Մակար եպիսկ., Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ: Եր., 1999, էջ 136(Աշ. Հովհաննիսյանը «փոքր ինչ եղծված է» համարել Ս. Բարխուդարյանի հրատարակությունը եւ հիմք ընդունելով Մատենադարանի վավերագրերից մեկը, անսաբփից հետո ավելացրել է. «հանդիպեցա յի գեօղս Դարաղուրթլու»: Տե՛ս Հովհաննիսյան Աշ., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության. գիրք երկրորդ, էջ 620):

28. Эзов Г. А., Сношения Петра Великого с армянским народом, NN 180, 181.

29. Հովհաննիսյան Աշ., նույն տեղում, էջ 621:

30. Հովհաննիսյան Աշ., Հայ-ռուս օրինետացիայի ծագման խնդիրը: Էջմիածին, 1921, հավելված N 14:

31. Հովհաննիսյան Աշ., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության. գիրք երկրորդ, էջ 622

32. Լեո, Հայկական տպագրություն. երկրորդ հատոր. Մեր կյանքը, գրականությունը անցյալում: Երկերի ժողովածու. 10 հատորով: Հ. 5: Եր., 1986, էջ 486

33. Հայ ժողովրդի պատմություն: Հայ ժողովուրդը ֆեոդալիզմի վայրէջքի ժամանակաշրջանում. 14-18-րդ դդ. հտ. 4-րդ: Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972, էջ 144

34. Հայ ժողովրդի պատմություն, էջ 147

35. Եսայի Հասան-Ջալեանց, էջ 48

36. Տե՛ս Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов, т. II, ч. II, с. 204.

37. Դանիելյան Է. Լ., նշվ. աշխ., էջ 238-239.

38. Այվազյան Ա., Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում: Եր., 2003, էջ 35-36

39. Տե՛ս Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов, т. II, ч. II, с. 206.

40. Эзов Г. А., Сношения Петра Великого с армянским народом, с. 386-388, N 252, ըստ Դանիելյան Է. Լ., նշվ. աշխ., էջ 241:



41. Լեօ, Յովսէփ Կաթողիկոս Արղութեան: Թիֆլիս, 1902, էջ 142:
42. Դանիելյան Է. Լ., նշվ. աշխ., նույն տեղում:
43. Իվան Կարապետի նամակներից մեկում հստակ արտացոլված է մելիքների եւ կաթողիկոսի դիրքորոշումը, որով բացառվում էր գաղթելու գաղափարն իսկ: Նամակից պարզվում է, որ նման միտք չի եղել նաեւ Ռուսաց թագավորին հասցեագրված նամակներում: Անտոն քահանան, պարզապէս «եսայի կաթողիկոսի գիրն Շամբախիցըրուեց. ինքն մէկ գիր գրեց, դարաւ առ թագաւորն»(Տե՛ս Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов, т. II, ч. II, , док. 318, с. 254)
44. Ուլուբաբյան Բ. Ա., Հայոց Արեւելից կողմանց եկեղեցին եւ մշակույթը, էջ 222:
45. Эзов Г. А., Сношения Петра Великого с армянским народом, с. 432-433, N 286.
46. Տե՛ս Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов, т. II, ч., док. N 3, с. 327-328.
47. Դանիելյան Է. Լ., նշվ. աշխ., էջ 251:
48. Տե՛ս Այվազյան Ա., «Ղափանցւոց պատմութեան» ժամանակագրության հավաստիությունը եւ կառուցվածքը: «Պատմա-բանասիրական հանդես», 1992, N 1, էջ 98- 99:
49. Տե՛ս Րաֆֆի, Երկերի ժողովածու. տասներորդ հատոր, էջ 193, հմմտ. Раффи, Меликства Хамсы, с. 39.
50. Օրմանեան Մաղաքիա արքեպիսկոպոս, Ազգապատում. Հայ Ուղղափառ Եկեղեցւոյ անցքերը սկզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, Ա-Ղ հատոր: Վերահրատարակութիւն ի Հայաստան քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700 ամեակին: Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 3308-3309
51. Լեո, Երկերի ժողովածու. երրորդ հատոր, գիրք երկրորդ: Եր., 1973, էջ 172-173:
52. Տե՛ս Արզումանյան Զ., Եսայի Հասան Զալալյանի քաղաքական գործունեության գնահատման հարցի շուրջ: «Լրաբեր հասա-

- րակական գիտությունների»(ԼՀԱ), 1979, N 5, էջ 52-53
53. Նույն տեղում, էջ 53:
54. Տե՛ս Արրահամյան Ա. Գ., Սի էջ Անդրկովկասի ժողովուրդների եւ հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից(Ուսումնասիրություն եւ վավերագրեր): Եր., ՀՍՍՌ հրատ., 1953, էջ 256, վավ. 75:
55. Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, էջ 158-159:
56. Արզումանյան Զ., Եսայի Հասան Զալալյանի քաղաքական գործունեության գնահատման հարցի շուրջ, էջ 53, ծանոթ. 9:
57. Նույն տեղում:
58. Նույն տեղում, էջ 54:
59. Տե՛ս Պարզեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյան, Ս. Ա. Հարությունյան, Արցախի թեմը եւ Ադրբեջան-Ղարաբաղ հակամարտությունը: «Հայկական բանակ», N 1-2: Եր., 2001, էջ 86:
60. Տե՛ս Կարապետ եպիսկոպոս, Նիւթեր հայ մելիքութեան մասին, Բ պրակ. Դօփեանց եւ Մելիք Շահնազարեանց: Ա. Էջմիածին, 1914, էջ 44, Ուլուբաբյան Բ. Ա., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում: Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, էջ 12, Չորանյան Պ., Եսայի Հասան Զալալյան: «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան: Եր., 2002, էջ 317:
61. Սարգիս արքեպիսկոպոս Զալալեանց, ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա: Տիֆլիս, 1848, էջ 200:
62. Յովհաննես եպս. Շահխաթունեանց, Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ զաւառացն Արարատայ, հատոր Բ: Էջմիածին, 1842, էջ 356-358:
63. Յակոբ Յ. Թօփճեան, Ցուցակ ձեռագրաց խաչիկ վարդապետի Դաղեան. ժողոված 1878-1898, մասն Ա: Վաղարշապատ, 1898, էջ 89:
64. Տե՛ս Կարապետ եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 44: Կարապետ եպիսկոպոսը վկայել է, որ այդ ձեռագիրը «ներկայումս գտնուում է Խաչիկ վարդապետի մօտ. այդ ձեռագրից օգտուել են ինչպես Զալալեան(ճանապարհորդութիւն. Ս. Ա. եր. 200), այնպես եւ Շահխա-

թունեան(Ստորագրութիւն. Գ. Բ, եր 556-558), եւ ուրիշները(Արցախ. եր. 206)» (անդ):

65. Տե՛ս Ուլուքարյան Բ. Ա., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, էջ 12-13, 153-155:

66. Եսայի Դասան-Ջալեանց, էջ ԺԴ:

67. Պարսմյան Վ., Ղարաբաղի ազատագրական շարժումների պատմությունը Եսայի Դասան-Ջալալյանի լուսարանությամբ, էջ 139-140, նույնի Պատմագիտական աշխատություններ, էջ 146-147:

68. Նույն տեղում, համապատասխանաբար՝ էջ 144-145, էջ 155

69. Բաֆֆի, Երկերի ժողովածու. տասերորդ հատոր: Եր., 1959, էջ 186, ծան. 1.

70. Բաբայան Լ.Գ., Դրվագներ Հայաստանի 14-18-րդ դարերի պատմագրության, էջ 292:

71. Есан Хасан-Джалалин, Краткая история страны Алванской. Баку, 1989 Այս գրքույկը չի հաջողվեց գտնել Երջանկահիշատակ Բ. Ուլուքարյանի անձնական արխիվում, ուր պիտի որ պահվեր ԱՄՆ-ից դժվարությամբ հայթայթված օրինակը: Սակայն, «Կաճառ» գիտական կենտրոնի աաշխատակիցներին հաջողվեց դրա էլեկտրոնային տարբերակը հանել համացանցից: Առաջին տպավորությունն այն էր, որ հտորհրդային իշխանության օրոք տպագրվածից համացանցում զետեղվածը տարբերվում է նենգափոխումների սանձարձակության ակնհայտ դրսևւորմամբ, կեղծիքների ու բնագրի կամայական աղճատման առատությամբ: Այս եւ հարակից հարցերի մասին ավելի հանգամանալից՝ ստորեւ:

72. Եսայի կաթողիկոս Դասան-Ջալալյանց, Համառոտ Պատմութիւն Աղվանից երկրի: Թարգմ., առաջաբանը եւ ծանոթագրութ. Բ. Ուլուքարյանի: Եր., 1997:

73. К освещению проблем истории и культуры Кавказской Албании и Восточных провинций Армении. Сборник. Том I. Е., Изд.-во Ереванского университета, 1991.

74. Սույն ներածությունը տեղ չի գտել Բ. Ուլուքարյանի հրատարակության մեջ:

75. Եսայի Դասան-Ջալալյանի ժամանակ դեռևս մետրոպոլիտություն չի եղել, այն ստեղծվել է 1815թ-ին: Ինչպես հայտնի է Աղվանից կաթողիկոսությունը կազմավորվել է VI դ. երկրորդ կեսին: Ընդգրկվել է բուն Աղվանքի և մեծ Հայքի Ուտիք ու Արցախ նահանգների թեմերը, ընդունել Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու զահերեցությունը: XIV դարից կաթողիկոսությունը տեղափոխվել է Գանձասարի վանք, որից հետո կոչվել է Գանձասարի կաթողիկոսություն: Այն տնօրինել է բուն Աղվանքի (Կապաղակ, Շաքի, Բաղախատ), Աղվանից մարզպանության հյուսիսային հատվածի (Չող, Ցիր) և մեծ Հայքի «Արևելից Կողմանց» (Պարտավ, Ամարաս, Ուտիք, Գարդման, Հաշու, Մեծկենք, Գանձասար, Բաղասական) թեմերը: Քաղաքական հանգամանքների բերումով թեմերի թիվը մշտապես փոփոխվել է՝ մե՛րթ ավելացել, մե՛րթ նվազել: Տարբեր ժամանակներում Գանձասարի կաթողիկոսությանն են ենթարկվել նաև Հաբանդի, Շամախու, Շիրվանի, Բաքվի, Դերբենդի և այլ եպիսկոպոսական թեմեր:

1815 թվականին, ցարական կառավարությունը Ամենայն հայոց կաթողիկոսության միջնորդությամբ լուծարել է Աղվանից կաթողիկոսությունը՝ փոխարենը հաստատելով մետրոպոլիտություն: Լուծարված կաթողիկոսությունը ենթակա նահանգներում կազմել են նվիրապետական տեսակետից էջմիածնի կաթողիկոսությանը ենթակա երկու առաջնորդական թեմեր և մեկ հաջորդական վիճակ: Այս իրավիճակը վերջնականապես ամրապնդվել է 1836 թվականին, «Պոլոժենիե»-ում, (տես Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան: Եր. 2002, այսուհետև՝ «ՔՀ») էջ 42-43:

76. Հրատարակիչները թերևս նկատի են ունեցել այն, որ Բաղդասար մետրոպոլիտը Սուրբ Ամենայի առաջին աստիճանի թագազարդ շքանշանի ասպետ էր (տե՛ս Տեր-Հովհաննիսեանց, Գրիգոր,

Բաղդասար մետրապոլիտ Հասան-Ջալալեանցի համառօտ կենսագրութիւն: «Փորձ», 1880, № 5, էջ 158, 160-161):

77. Եսայի Հասան-Ջալալեանցի «Առաջաբանը» տեղ չի գտել ոչ Բ. Ուլուբաբյանի և ոչ էլ ռուսերեն թարգմանության մեջ: Մինչդեռ, այնտեղ կան հիրավի ուշագրավ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են հետագա ուսումնասիրությունների համար: Այսպես, օրինակ, իր կողմից օգտագործված օտար հեղինակների թվարկումը, որոնց մեջ հանդիպում ենք նաև վաղ միջնադարի պատմիչներ, մեզ կարող է լրացուցիչ կովան տալ Եսայի կաթողիկոսի պատմության ավելի լայն ընդգրկման մասին, քան է մեզ հասած տարբերակը: Այնուհետև, «զայս միայն յիշեցաք զորի գիրս մեր գտաք» հիշատակումը (Եսայի Հասան-Ջալալեանց, Պատմութիւն համառօտ..., Յերուսաղեմ, 1868թ.) գալիս է հաստատելու, որ Գանձասարում յուր ժամանակին պատկառելի մատենադարան է եղել (համենայն դեպս՝ պահվել են այն հեղինակների ձեռագիր երկերը, որոնք թվարկված են Եսայի Կաթողիկոսի կողմից):

78. Հովսեփոս Երրայեցի (Հովսեփոս Փլավիոս) մ. թ. ա. I և մ. թ. I դարերի հռոմեական պատմագրության նշանավոր ներկայացուցիչներից մեկը հրեա պատմիչ Հովսեփոս փլավիոսն էր, որին կոչել են նաև Հովսեփոս Երրայեցի: Նա ծնվել է Երուսաղեմում 37թ. քահանայի ընտանիքում: Նա ապրել է մինչև II դարի առաջին տասնամյակները: Նրա ստեղծագործություններից, պահպանվել են «Հրեական պատերազմի մասին», «Հրեական հնախոսություն», «Կյանքը», և «Ընդդեմ Ապիոնի», որոնք գրված են հունարենով: Հրեա պատմիչի տեղեկությունները Հայաստանի կամ հայերի մասին շատ էլ հարուստ ու ընդարձակ չեն: Նրա տեղեկությունների մի մասը այլ հեղինակների պարզ կրկնություններ են: Սակայն կան փաստեր, որոնք Հովսեփոսի մոտ շարադրված են գրեթե անկողմնակալ ձևով և որոշակի հետաքրքրություն են ներկայացնում հայագիտության համար:

Տե՛ս Հովսեփոս Փլավիոս և Ղիոն Կասսիոս: Թարգմ. Ս. Կրկյաչարյանի: Եր. 1976, Մելիք-Բախշյան Ստ. Տ., Հայոց պատմության աղբյուրագիտության: Երրորդ հրատ. Եր., 1996, էջ 37-40:

Հովսեփոս փլավիոսից օգտվել է նաև Մովսես Խորենացին: Դժվար է ասել, թե Գանձասարում Հովսեփոսի որ աշխատանքն է եղել:

79. Եվսեբիոս Կեսարացի, Եվսեբիոս Պամփիլես (մոտ 260, Պաղեստին-մոտ 340), քրիստոնյա պատմագիր, աստվածաբան, Պաղեստինյան Կեսարիայի եպիսկոպոս (313-314-ից): Եվսեբիոս Կեսարացու պատմագրական երկերից են «Քրոնիկոնը», նշանավոր «Եկեղեցական պատմությունը», Հիերոնիմոսի լատիներեն թարգմանությամբ մեզ հասած քառամաս «Աստվածաշնչային հնություններ» երկրի երկու մասերը՝ «Տոպիկա» և «Օնոմաստիկոն»: «Քրոնիկոնը», որն ընդգրկում է աշխարհի ժամանակագրությունը մինչև 325թ., ամբողջությամբ պահպանվել է միայն հայերեն թարգմանությամբ: «Եկեղեցական պատմությունը» հիմնական աղբյուր է քրիստոնեության առաջին երեք դարերի (դեպքերի շարադրանքը հասնում է մինչև 324թ.) պատմության ուսումնասիրության համար: Հայ քրիստոնյաների և հոգևորականների մասին ամենահին տեղեկությունները պահպանվել է հենց այս երկում:

Եվսեբիոս Կեսարացու պատմագրական երկերից և հատկապես «Քրոնիկոնից» օգտվել են հայ պատմիչներ Ազաթանգեղոսը, Մովսես Խորենացին, Թովմա Արծրունին, Ասողիկը և շատ ուրիշներ: Տե՛ս «ԲՀ» էջ 319-320: Կարելի է ենթադրել, որ այդ երկերը եղել են նաև Եսայի Հասան-Ջալալյանի տրամադրության տակ:

80. Այս անունը շփոթեցրել է բանասերներին, որոնց մի մասը, այդ թվում Եսայի Հասան-Ջալալյանը հեղինակին այլազգի է համարել: Ինչպես համոզիչ փաստերով ցույց է տվել ակադեմիկոս Ստ. Մալխասյանցը, «Պատմություն Հայոց» երկի հեղինակը հայ է եղել, բայց հանդես է եկել Փավստոս Բուզանդ ծածկանունով, որը «ժա-

մանակի մեծ պատմագիր» է եղել, որին էլ պատմության անձանոթ հայ հեղինակը վերագրել է իր աշխատանքը, որպեսզի իր գրվածքի վարկը բարձրանա և վստահություն մերշնչի: Ըստ Ստ. Մալխասյանցի, Բուզանդ մականունը բաղկացած է «բու» և «զանդ» հնդեվրոպական արմատներից և նշանակում է եղելությունների, զոռյցների մեկնիչ: Հետևաբար, ակադեմիկոսի կարծիքով՝ մատենագրի «Պատմութիւն Հայոց-ի իսկական ու համապատասխան անունը եղել է «Բյուզանդական պատմութիւնք», այսինքն՝ պատմությունների ժողովածու Բուզանդի (տե՛ս Փավստոս Բուզանդ, Պատմություն հայոց: Թալգման, ներածութ. և ծանոթագր. ակադեմիկոս Ստ. Մալխասյանի: Եր., 1968, էջ 44, էջ 309 ծան.1):

81. Սոկրատ և Թեոդորիտ Կյուրացի- բյուզանդայի պատմիչներ, ըստ Միքայել Ասորի պատմիչի, իրենց պատմությունները գրել են մինչև Եփեսոսի ժողովը, այսինքն՝ մինչև 431թ.

Տե՛ս Ասորական աղբյուրներ Ա: Թարգմ. բնագրից, առաջաբան և ծանութ. Հ. Գ. Մելքոնյանի: Եր. ՀԱԱՀ ԳԱ հրատ., 1976, էջ 349:

82. Դիոնիսիոս Արիոպագացի, Դիոնիսիոս Արիոպագացի, Արեոպագայի սուրբ Դիոնիսիոս (I դ.), ընդհանրական եկեղեցու սուրբ հայրերից, ովքեր Հայ առաքելական եկեղեցում հայտնի են «երկուտասան վարդապետք» անունով, Աթենքի եպիսկոպոս: Նրա անունով մեզ են հասել մի շարք աշխատություններ, որոնք ընդհանուր անունով կոչվում են արիոպագիտիկաներ («Կորպուս Արիոպագիտի կում»):

Արիոպագիտիկաները նախ թարգմանվել են ասորերեն, ապա՝ հայերեն և հետո միայն լատիներեն, ընդ որում հայերեն թարգմանությունը զուգակցվում է Մաքսիմոս Խոստովանողի մեկնությունների թարգմանությամբ:

Դիոնիսիոս Արիոպագացու երկերը մեծ ազդեցություն են թողել միջնադարի աստվածաբանական մտածողության վրա: Այդ ազդեցությունից, անմասն չի մնացել նաև հայ աստվածաբանական, դա-

վանաբանական, փիլիսոփայական միտքը: Արիոպագիտիկաների հետ ակնհայտ ընդհանրություններ կան Դավիթ Անհաղթի, Ներսես Շնորհալու, Գրիգոր Տաթևացու, Վանական Վարդապետի երկերում: Դիոնիսիոսի գործերից բազմաթիվ հատվածներ տեղ են գտել հայ դավանաբանական աշխատություններում և ժողովածուներում: Միջնադարի վանական դպրոցներում և վարդապետարաններում կիրառվել են Ստեփանես Սյունեցու, Համամ Արևելցու, Եսայի Նշեցու, Վահրամ Բաբունու և այլոց գրած Դիոնիսիոս Արիոպագացու երկերի (ածմունքները և մեկնությունները: Տե՛ս «ԶՀ», էջ 274-275):

83. Միքայել Ասորի-Անտիոքի պատրիարքն էր (1166-1199) ծնվել է Մելիտենիում 1126թ. և վախճանվել է 1199թ.: Կիլիկիայի հայ հոգևորականությունը և, մասնավորապես, Ներսես Շնորհալին (1166-1173) բարեկամական հարաբերություններ են ունեցել Ասորի այս պատրիարքի հետ, որը 1198թ. ներկա է գտնվել Լևոն Բ-ի օժման ու թագադրության հանդեսին:

Միքայել Ասորին գրել է ընդարձակ ժամանակագրություն Ադամից սկսած մինչև 1194/5թթ., որի ասորերեն բնագիրը և արաբական բառացի թարգմանությունը ծանոթ էր հայերեն հին թարգմանությամբ, որը պահպանվել է կրկին խմբագրությամբ՝ ընդարձակ ու մի փոքր համառոտված: Դրանք հրատարակվել են համապատասխանաբար 1870թ. և 1871թ. Երուսաղեմում: Ձեռագրերի հիշատակարաններից երևում է, որ ժամանակագրությունը հայերեն է թարգմանվել և Կոստանդին Ա. կաթողիկոսի հանձնարարությամբ 1245/6թ.: Թարգմանիչն է Իշոխ կամ Հեսու անունով ասորի քահանան, իսկ սրան աշխատակցել է և թարգմանությունը, ըստ երևույթին, խմբագրել է Վարդան Վարդապետը: Տես Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության հատոր III: Եր., ՀՍՍՌԳԱ հրատ., 1952, էջ 380:

Շիրակին, Տայքին ու Վրաստանին: «Պատմությունը» գրել է Անանիա Նարեկացու պատվերով և ուղղակի ցուցումներով: Այն գր-

վել է 982-984թթ. ընթացքում: Բնագիրը մեզ է հասել 1663- ի ընդօրինակությամբ (Մատենադարան, ծեռ. դ. 1774), մյուս չորս ձեռագրերը գրչագրված են դրանից և պահվում են Երևանի, Սանկտ Պետերբուրգի, Վենետիկի և Փարիզի ձեռագրատներում: (Տես Զ.Յ., էջ 1032-1034) Եսայի Դասան-Ջալալյանի հաղորդումից, օրինակներից մեկը պահվել է նաև Գանձասարի մատենադարանում:

84. Ուխտանես եպիսկոպոսը հայտնի է Ուռհայեցի, Սեբաստացի անուններով, եղել է Սեբաստիայի հայոց թեմակալ առաջնորդ (մոտ 970-985): Դավանաբար (985-ից հետո) վարել է նաև Ուռհայի (Եղեւսիա) հայոց վիճակավորի պաշտոնը: Ուխտանես Ուռհայեցու «Պատմութիւն Դայոց» երկից երևում է, որ նա շրջագայել է ողջ Դասստանում, մասնավորապես քաջատեղյակ է Վասպուրականին, փոքր Դայքին:

85. Սամուել Անեցին հայ նշանավոր պատմիչ-ժամանակագիրներից է: Ենթադրում են, որ նա ծնված պետք է լիներ Անիում կամ նրա մոտակայքի բնակավայրերից մեկում: Դրա համար էլ այն ժամանակվա սովորությամբ՝ ինքն էլ կոչվել է Անեցի: Նա ապրել է մոտավորապես 1100-1190 թվականներին: Սամուել Անեցու պատմագիտական միակ աշխատությունը հայտնի է «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց» վերնագրով: Այն շարադրված է ժամանակագրության ձևով, որ սկսում է Ադամից և բերում հասցնում է մինչև 1180թ.: Գրքի պատմիրատուն եղել է հայոց կաթողիկոս Գրիգոր Տղան (1173-1193): Ըստ երևույթին այս աշխատությունը հնում բավական ճանաչված և ընդունելի գործ է եղել, որ այլևայլ հեղինակներ նույն սկզբունքով շարունակել են ու հասցրել մինչև 1665 թ.: Սամուել Անեցու ժամանակագրությունը հիմնականում ընդգրկելով հայ ժողովրդի պատմությունը, արժեքավոր նյութեր է պարունակում նաև Կիլիկիայի և հարևան երկրների ու ժողովուրդների մասին (տես՝ Մելիք-Բախշյան Ստ., Դայոց պատմության աղբյուրագիտություն: Եր., 1996, էջ 171-172):

86. Վարդան վարդապետը (նաև՝ Արևելցի, Գանձակեցի, Կիլիկեցի, Աղվանից ըստ Գ.Բ. Թոսունյանի 1198թ.-ին: Տես Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն: Եր., ԵՅ հրատ., 2001, էջ 5) Վարդան, Վարդան Մեծ, Վարդան Պատմիչ) ծնվել է մոտ 1200թ., Գանձակում, մահացել 1271թ. Խոր Վիրապում: XIII դ. հայ մատենագիր, մեկնիչ, աստվածաբան, փիլիսոփա, թարգմանիչ, մանկավարժ: Թողել է մատենագիտական հարուստ ժառանգություն՝ մատնողական, մեկնողական, քերականագիտական բնույթի երկարություններ, բազմաթիվ ճառեր, ներբողներ, խրատներ, թղթեր: Նրա «Լուծմունք ի Ս. Գրոց» ժողովածուն գրված է ներում և թագավորի պատվերով: Դանրագիտարանային բնույթի ծավալուն այդ երկը հայտնի է «ժղլանք» անանունով: Վարդան Արևելցու պատմագիտական գլխավոր երկասիրությունը «Դավաքումն պատմութեան» գիրքն է, որը համընդհանուր պատմություն շարադրելու նոր փորձ էր հայ պատմության մեջ: 1862թ. Վենետիկի հրատարակությունը վերնագրված է. «Դավաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի լուսարանեա», իսկ 1861թ. Մոսկվայի հրատարակությունը որպես, «Պատմութիւն տիեզերական»: Նա հունարենից, լատիներենից և ասորերենից թարգմանել է բազմաթիվ գործեր: Ասորի Իշող քահանայի աշխատակցությանը 1248-ին թարգմանել է ասորի ժամանակագիր Միքայել Ասորու (1126-99) «ժամանակագրությունը» և «Յաղագս քահանութեան» գործը (Զ.Յ., էջ 966-968):

87. Երկաթի դուռը Բ. Ուլուբաբյանը նույնացնում է ճորա Պահակի (Կապան դուռն ճորա, դուռն Զոնաց, դուռն Աղվանից), որը տեղադրում են Դերբենդ քաղաքի մոտ դուռն ճորա, այսինքն՝ դուռ դեպի ճորա կամ մազթաց երկիրը): Տես Եսայի կաթողիկոս Դասան Ջալալյանց, համառոտ պատմություն Աղվանից երկրի:

88. Մազանդարանը և Աստարապատը իրական մարզեր են Կասպից ծովի հարավային ու հարավ-արևելյան ափերին:

89. Դայերը Զոզպեկ էին անվանում Ուզբեկստանին:

90. Գտնվում էր Աֆղանստանում, ներկայումս էլ՝ կա համանուն քաղաք:

91. Բանտար (Բանդար, Բենդարաբադ)՝ հավանաբար Բենդեր-Աբբաս նավահանգիստն է Պարսից ծոցում:

92. Շիրազը իրանական Ֆարս նահանգի կենտրոնն էր:

93. Խոյ կամ Չեր, որը գավառ էր Մեծ Հայքի Պարսկահայք նահանգում, Կասպուտան (Ուրմիա) լճից հյուսիս-արևմուտք: Արևելքից և արևմուտքից սահմանակցում էր Վասպուրականին, հյուսիսից՝ Ջարավանդ, հարավից՝ Ջարեհավան գավառներին: Համապատասխանում է հետագայի Խոյ գավառին: Չեր անունն ստացել է համանուն կենտրոն-քաղաքից: Արշակունիների օրոք Չերը, հարևան Ջարավանդ գավառի հետ, կազմում էր մեկ միասնական վարչամիավոր (Ագաթանգեղոսը հիշել է «Շահապ Ջարավանդ և Չեր գավառի»): Հայաստանի մարզպանական շրջանում Չերը, որպես պարսից արքունի տիրույթ, տրվել է Խորխոռունիներին: Միջին դարերում Չեր և Ջարավանդ գավառները հիմնականում հիշվել են միասին՝ Ռոտկաց անունով: 870-ական թվականներին Չերը մտել է Վասպուրականի իշխանության մեջ: Ըստ Կոստանդին Ծիրանածնի, 885-ից հետո գավառը մտել է Աշոտ Ա Բագրատունու տիրույթների մեջ:

Գավառը մեծամասամբ հայաբնակ էր: Սեֆյան Պարսկաստանի կազմում Չերի տարածքում կազմավորվեց առանձին խանություն՝ Խոյ կենտրոնով: 1827-ին ռուսական զորքը կարծ ժամանակով գրավել է Խոյի գավառի մեծ մասը:

Մինչև 1827թ. նրա բնակչությունը հիմնականում հայեր էին: 1828-1829 թթ. հայերի մեծ մասը գաղթել է Արարատյան դաշտ: Խոյում և գավառի վեց հայաբնակ գյուղերում ապրող հայերի զգալի մասը բնաջնջվել է 1918-ին թուրքական ներխուժման հետևանքով: Առաջին համաշխարհային պատերազմից հետո Խոյում մնացել էր մոտ 500 տուն հայ բնակիչ, որոնք ապրում էին քաղաքի պարիսպներից դուրս: Տե՛ս ՀԱՀ հտ. 6: Եր., 1980, էջ 374-375

Խոյ (Չեր) քաղաք կա Իրանի հյուսիս-արևմուտքում:

94. Սալմաստ-Սաղամաս, քաղաք էր Մեծ Հայքի Պարսկահայք նահանգի Ջարեհավան գավառում, համանուն գետի ձախ ավիին, Կասպուտան (Ուրմիա) լճից 18-20 կմ արևմուտք: IV դ. հիշատակվել է Լոր Շիրական բղջխության կազմում: Մեծ Հայքի բաժանումից (387) հետո այն գավթել է Սասանյան Պարսկաստանը, VIII դ. սկզբին արաբական նվաճողներից ազատագրվել և միավորվել է Վասպուրականի թագավորությանը: Արծրանիները վերանորոգել են պարիսպները, ամրացրել շրջանածև աշտարակներով (այժմ՝ ավերակ) և դարձրել իրենց ռազմակայանը՝ արևելյան սահմանում: Թուրք-թաթարական տիրապետության անկումից հետո Սալմաստն անցել է Սեֆյան Իրանին: XIX դ. սկզբներին ուներ 1200 տուն բնակիչ (մեծամասամբ՝ հայեր): Զբաղվում էին գանազան արհեստներով, այգեգործությամբ, զինեգործությամբ և այլն: Քաղաքում կար երեք եկեղեցի (Ս. Հովհաննես, Ս. Թովմաս, Ս. Գևորգ)՝ կից վարժարաններով: Թուրքմենչայի պայմանագրով 1828-30-ին Սալմաստի հայերի գերակշռող մասը ստիպված գաղթել է և բնակություն հաստատել Ռուսաստանին միվորված Արևելյան Հայաստանում: Մնացածները հիմնականում արտագաղթել են առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ: Վերջին շրջանում Սալմաստը Իրանի համանուն սահալի (գավառի) կենտրոնն էր: Սալմաստից ոչ հեռու պահպանվել են հին Ջարեհավան քաղաքի ավերակները: Տե՛ս ՀԱՀ, հտ. 10: Եր., 1984, էջ 119:

95. Սահաթը ներկայիս Սերգենն է Հյուսիսային Իրանում: Նախորդ երկու և այս տեղանունները Զ. Բունյաթովը ծանոթագրում է «քաղաք Հարավային Ադրբեջանում», մոռանալով նշել, որ այն ոչ մի կապ չունի ներկայիս՝ գողացված անունով հայտնի Ադրբեջանի հետ:

96. Ղայղուլի նահանգ՝ միջնադարում նման երկրամաս կար Արևմտյան Վրաստանում:

97. Բ. Ուլուբաբյանի կարծիքով սխալ է Հունարակերտի և Պեր-

բենդի նույնացումը: Միջնադարյան հայկական աղբյուրները Հունարակերտը միանշանակ տեղադրում են Կուրի և նրա վտակ խրամի միացումից ստացվող անկյունում: Այն կոչվել է նաև Հունան, Սահմանային կետ է եղել հայաստանի, Վիրքի և Աղվանքի համար: Ռուսերեն թարգմանության մեջ ենթադրաբար նույնացվել է Դաղստանի Խուզախի հետ, ինչը ևս սխալ է (տես «ՀԴ», էջ 39, ծան. 10):

98. Թարխուն հավանաբար Դաղստանի Տարկու քաղաքն է:

99. Ղզըլբաշ՝ բառացի նշանակում է «կարմրագլուխ», քանզի այդպես կոչվողները կրում էին կարմիր գույնով գլխակապեր (չալմաներ): Իսլամի շիա դավանության պատկանող թուրքմեն ժագում ունեցող ղզըլբաշ ցեղերի շեյխերը ասպարեզ իջան Արդաբիլում և հանդիսացան Սեֆյան արքայատոհմի նախնիները: XVI դ. սկզբին շահ Իսմայիլ Սեֆևիդ պարտության մատնելով Ավ-Կոյունլու ցեղի գահակալին, սրով ու թրով իր բռնատիրությունը տարածեց նաև ամբողջ Իրանի վրա: Սեֆյանների լուծը նույնպես ավերիչ եղավ Հայաստանի և հայերի համար:

Ղզըլբաշը հետագայում պարսիկ զինվորների անվանումն էր, տարբերակիչը:

100. Ասպահանը մերկայիս Ապահանն է Իրանում:

101. Մովսես Քերթոզը նկատի ուներ Հայոց պատմահայր կամ Քերթոզահայր Մովսես Խորենացուն:

102. Արշակ-մեծ - «Արշակը» պարթևական անուն է, որը կրել է պարթև Արշակունիների հիմնադիր թագավորը՝ ապարն կամ պարն ցեղի առաջնորդը: Մ. թ. ա. 250թ. Արշակը ապստամբել է Սելևկյանների դեմ և 247թ. իրեն հռչակել թագավոր: Այնուհետև պարթևական ամեն մի թագավորի անվան մոտ այս անունը գործածվել է իբրև պարտադիր դինաստիական անուն-տիտղոս (տես Ստրաբոն, Աշխարհագրություն, XV, 1,36): Որոշ ուսումնասիրություններում Արշակունիների հիմնադիր թագավոր է համարվում Տրդատ I-ը (247-211), որին նույնացնում են Արշակ I Մեծի հետ: Տե՛ս Հայ ժողովրդի

պատմության քրեստոմատիա: Հատար. 1:

Եր. ԵՀՀ, 1981, էջ 103-104, ծան. 1 էջ 858 (250-247):

103. Ալեքսանդր Մակեդոնացու դայակորդիներ ասելով Եսային նկատի է ունեցել Սելևկոս զորավարին և նրա հաջորդներին՝ Սելևկյաններին: Ինչպես հայտնի է, հունամակեդոնական նվաճումների հետևանքով ստեղծված հսկայածավալ տերությունը Ալեքսանդր Մակեդոնացու զորավարների կողմից բաժանվեց Անտիոք-նյանների (Մակեդոնիայում և Հունաստանում), Պտղոմյանների (Եգիպտոսում) և Սելևկյանների (փոքր Ասիայում, Մարաստանում ու Իրանում) թագավորությունները: Հայաստանի հարևանությամբ գտնվելով, Սելևկյանների պետությունը գոյատևեց 228 տարի (մ. թ. ա. 312-84 թթ.), որի հետ երվանդունիների արքայական ավելի քան հարյուր տարի ունեցել է բարդ քաղաքական հարաբերություններ: Արտաշեսյանների օրոք՝ մ. թ. ա. II-I դարերում Սելևկյաններն ապրում էին թուլացման ու անկման շրջան:

104. Բ. Ուլուբաբյանը սխալմամբ Քաջ Արշակին է վերագրում Վաղարշակ եղբորը Հայաստանում թագավոր կարգելը, մինչդեռ, ինչպես Խորենացու մոտ է՝ Արշակ Քաջի թոռ՝ Արշակ Մեծի մասին պետք է խոսք գնա (տես «ՀԴ» էջ 39, ծան. 14) հմմտ.՝ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն: Եր., 1961, գիրք երկրորդ, Գ., էջ 149):

105. Արտաշիր Ա Պապականը (224/6-240/1) տապալելով, Արշակունյաց արքայատոհմը, հիմնադրեց Սասանյանների արքայատոհմը: Արտավան V Արշակունին (209-227), ըստ Ագաթանգեղոսի, սպանվեց Արտաշիրի ձեռքով: Հալածակա՛ն մյուս Արշակունիները ապաստան գտան Հայաստանում:

106. Մահմեդը կամ (կամ Մուհամմեդը) իսլամի հիմնադիրն է (մահացել է 632թ.):

107. Խոսքը Հազկերտ Գ-ի (632-651) մասին է, որը Պարսկաստանում Սասանյան արքայատոհմի վերջին գահակալն էր:

108. Մահմադը կառավարել է 988-1030թթ.

109. Հռեն, ըստ երևույթին, ժամանակակից Հերաթն է Աֆղանստանում:

110. Մասխուտի (Մասուտ) օրոք (1031-1041թթ.) Սելջուկներից շառավիղված պարսկական ճյուղի՝ Նկյանների տիրապետությունը տարածվել է Քահարից մինչև Սամարղանդ և Սպահան:

111. Վարդան Արևելցու «Տիեզերական պատմություն» 2001թ. հրատարակությունում այդ անունները հետևյալ կերպ են, Աբուսալիմ (մոսկովյան 1861թ. հրատարակությունում՝ Աբուսալիս), Ղափուք, Չաղրբեկ, Աբուտալիփ, Տուղրիլ-բեկ (տե՛ս Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն: Աշխարհաբար թարգմ. ներածությունը և աստղանիշ. ծանոթ.՝ Գ.Բ. Թոսունյանի: Եր., ԵՂ հար., 2001, էջ 138): Եսայի Հասան-Ջալալյանի մոտ Չաղրաբեկը պետք է վրիպակ համարել: Վարդան Արևելցու երկի Վենետիկյան 1861 թ. հրատարակիչը ծանոթացրել է, որ թվարկվածները Սելջուկի որդի Միքայելի զավակներն էին և թերում է նրանցից երկուսի անունների տարրն-թերցումը՝ Դողրով և Չաղր, այն է՝ ճյաֆար (տե՛ս Վարդան Արևելցի, էջ 138, ծան. 1): Եսայու երկի ռուսերեն ծանոթագրության մեջ հինգ անվան փոխարեն երկուսն է՝ Աբու Սուլեյման Չաղրբեկ Ղափուք և Աբու Թալիբ Տողրուլ-բեկ:

112. Տողրուլ-բեկը կառավարել է 1040-1063թթ.: Արիստակես Լաստիվերցին հենց այս Տողրիլի մասին է պատմել, որ փոքրոգաբար կտրել տվեց Թաթուլ Վանանդեցու աջ բազուկը, որով մահացու վիրավորել էր մի ամիրայի որդու: 1058թ. Տողրիլը Բաղդադի խալիֆայից ստացավ սուլթանի կոչում:

113. Խոսքն, ըստ երևույթին, ալ-Քաիմ խալիֆի (1031-1075թթ.) մասին է:

114. Ալփ-Արսլանը (Ալփասլանը) կառավարել է 1063-1072թթ.

115. Սելիք շահը կառավարել է 1072-1092թթ.

116. Նասր ադ-Դին Մահմադը (1092-1093թթ.) Սելիք-շահի որդին էր:

117. Սելիք շահի մյուս որդին՝ Բարկիարաքը կառավարել է 1093-1104թթ.:

118. Հայրասպան սուլթանի անունն էր Սելիք-շահ II (1104-1105թթ.): Այնուհետև սուլթան դարձավ Մուհամմադ Տափարը (1105-1117թթ.):

119. Ռուսերեն հրատարակչության ծանոթագրությունում գտնում են, որ խոսքը ոչ թե Մահմադի (ինչպես Եսային է նշել), այլ Մահմադատ Տափարի և նրա որդի Սուգիս ադ-Դին Աբու-Լ-Կասիմ Մահմադի (որը 1117-1131թթ. կառավարել է Իրաքի սուլթանությունը) մասին է:

120. Տուղրիլ II-ը Մուհամմադ Տափարի որդին էր (կառավարել է 1132-1135թթ.):

121. Մասխադը Մուհամմադ Տափարի որդին էր (կառավարել է 1135-1152թթ.):

122. Խոսքը Իրաքի սուլթանության վերջին սուլթան Արսլանշահի որդու Տուղրիլ III-ի (կառավարել է 1177-1194թթ.) մասին է: Նրանից առաջ սուլթաններ են եղել Սելիք-շահ III (1152-1153թթ.), Մահմադ իբն Մահմուդը (1153-1159թթ.), Մուհամմադ Տափարի որդի Սուլեյման-շահը (1159-1161), Թուղրիլ II-ի որդի Արսլան-շահը (1161-1177թթ.):

123. Եթե այստեղ խոսքը Ալփասլանի և նրա կողմից 1064թ. Անին գրավելու մասին է, ապա ժամանակագրական անճշտություն է առաջանում: Ենթադրել կարելի է, որ Տուղրիլների մասին տեղեկությունները կրկնված են:

124. Ըստ ռուսերեն թարգմանության ծանոթագրության խոսքը Տուղրիլ II-ի մասին է: Սուկայն, եթե Ալփասլանը կառավարել է 1063-1072թթ. ինչպես կարող էր նրան փոխարինել Տուղրիլ II-ը, որը կառավարել է 1132-1135թթ-ին:

125. Սուլթանյան Շահ Արմենները հաստատվել էին Խլաթում



(1100-1207թթ.): Ըստ ռուսերեն թարգմանության ծանոթագրության այդ ժամանակ իշխում էր Սեյֆ ադ-Դին Բեկ-Թիմուր իբն Սուլքման II (1128-1183թթ.):

126. Ելտկուզ (Իլդիզիզ) աթաբեկը (1136-1174թթ.) Ատրպատականի ամիրան էր, որը գրավել էր Դվինը և պաշարել Անին: Ելտկուզյանները տիրապետել են 1148-1225թթ-ին:

127. Փահլավանը կառավարել է 1175-1186թթ., Կզիլ Արսլանը՝ 1186-1191թթ.:

128. Ըստ երևույթին խոսքը Խարեզմի շահ Ալա ադ-Դին Մուհամմեդի (1200-1225թթ.) մասին է:

129. Ջալալ ադ-Դինը Խարեզմի շահ Ալա ադ-Դին Մուհամմեդի որդին էր, որը հարվածելով մոնղոլական ուժերից, 1225թ. սկսել է նվաճել Իրանի հյուսիսային շրջանները և Ատրպատականը, ապա արշավանքներ ձեռնարկել դեպի Վրաստան և Հայաստան: Յոթ տարի շարունակված նրա արշավանքները չափազանց ծանր հետևանքներ ունեցան Հայաստանի և հայ ժողովրդի համար: Ջալալ ադ Դինի վերջնական ջախջախումը և սպանությունը Ամիրի չեռնեթում (1231-32 թթ. ձմեռ) փրկություն էր հարստահարված ու ապատակություններից հյուժված ժողովրդի համար (տես Հայ ժողովրդի պատմություն 2, III: Եր. ՀԱԱՀ ԳԱ հրատ., 1976, էջ 602-605):

130. Վանական Վարդապետը և Կիրակոսը, ռուսերեն թարգմանության ծանոթագրություններում հորջորջվել են «ալթանական» պատմիչներ, առաջինը՝ «Վանական՝ Թովուզից», իսկ երկրորդը՝ Կիրակոսը «Աղրբեջան մոնղոլական արշավանքի ականատես»: Թե ինչպե՞ս է Հովհաննես Վանականը «ալթանացի» դարձել և Կիրակոսի ժամանակ ի՞նչ Աղրբեջանի մասին է խոսքը, դա հայտնի է միայն գիաբունյաթովներին: Ընդհանրապես, այդ տխրահռչակ «վայ պատմաբանները» ճարավորեն են օգտագործում Իրանի Ատրպատականը «Աղրբեջան» ներկա իմաստով, չարաշահելով այն ընթերցողների անտեղյակությունը «տեղանունների» շուրջ աղրբեջանական ձեռնածություններին: Փաստ է, որ «Աղրբեջան» անունը մինչև

1918թ. բացարձակապես կապ չունի ներկայիս Աղրբեջանական Հանրապետության և նրա բնակչության հետ և բացառապես վերաբերում է Իրանի համանուն երկրամասին (նահանգին):

131. Թովմա Արծրունին ապրել է 9-րդ դարի երկրորդ կեսին 10-րդ դարի առաջին կեսին, ուստի չէր կարող պատմել Թամուրլանկի ժամանակի (XIV դ.) անցքերի մասին: Պետք է լինի Թովմա Մեծուխեցի (1378-1446), որն իրականում գրել է «Պատմութիւն Լանկ Թեմուրայ եւ յաջորդաց իւրոց», երկը և ներկայացրել 1380-1440թթ. Լենկ Թեմուրի ու նրա հաջորդների չարագործությունները ու դրանց հետևանքները:

132. Դարա Յուսուֆը սևխորաքորների (Կարա Կոյունլուների) պետության հիմնադիրը (1410-1420):

133. 2004 թվ. հուլիսին, Վարդապետի օրը, Գանձասարի վանքում և Վանք գյուղում, Հասան Ջալալյան տոհմի ժառանգները տոնակատարություն կազմակերպեցին՝ ի նշանավորումն Հայկ Նահապետի ժառանգ Առանի փառավոր ժառանգորդ, Առանշահիկ արքայական տոհմի Հասան-Ջալալյան ճյուղի սկզբնավորման (1214 թվ., Վախթանգ II-ի մահից հետո Խոխամաբերդի իշխանությունը ժառանգեց որդին՝ Հասան Ջալալը, որի անունով էլ սկզբնավորվեց Հասան-Ջալալյան ճյուղը, տոհմը) 790 ամյակի և Գանձասարի սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու օծման 764-րդ տարեդարձի: Պատարագիչն էր Արցախի թեմի առաջնորդ տեր Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը: Սրբազանը օրհնեց Հասան-Ջալալյան տոհմի դրոշը:

Հասան-Ջալալյան տոհմի ժառանգները, Արցախի թեմի առաջնորդին նվիրեցին տոհմի դրոշը, որը պահվում է Գանձասարի սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցում:

Պատմական աղբյուրների ուսումնասիրությունների արդյունքում՝ Հասան-Ջալալյան տան դրոշը Թիբանի է, վրան պատկերված ոսկեգույն խաչ:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան (կաթողիկոս Եսայի Գառն-Ջալալյանցի) Ժամանակը և նրա պատմական երկը	3
2. Պատմություն համառոտ Աղուանից երկրի:	31
Ներածություն:	33
Յառաջաբանություն:	34
3. Համառոտ պատմություն Աղուանից երկրի:	39
Գլուխ Ա.	
4. Գլուխ Բ. Յաղագս սկզբան թագաւորութեան Պարսից, և որք կարմրագլուխք կոչին. և խանգարման իշխանութեան նոցին:	42
5. Գլուխ Գ. Յաղագս վրդովման և խանգարման թագաւորութեանն Պարսից:	45
6. Գլուխ Դ. Վասն հակառակաց և ընդդիմակայից՝ որք ի տեղիս յուրեան ընդդեմ թագաւորութեանն Պարսից:	49
7. Գլուխ Ե. Ո՛ր ինչ գործեցին ազգն Հոնաց ընդ անենայն երկիրս Աղուանից:	51
8. Գլուխ Զ. Վասն երկրորդ գալստեան թագաւորին Վրաց Վախտանկին ի Գանջայ:	61
9. Աղվանից երկրի Համառոտ Պատմություն	71
10. Ներածություն	73
11. Առաջաբանություն	74
12. Գլուխ Ա. Աղվանից երկրի համառոտ պատմություն	79

13. Գլուխ Բ. Պարսից թագավորության սկզբի «Կարմրագլուխներ» կոչվածների և նրանց իշխանության խառնակության մասին:	83
14. Գլուխ Գ. Պարսից թագավորության վրդովմունքի և խառնակության մասին:	86
15. Գլուխ Դ. Հակառակվողների և ընդդիմակայողների մասին, որոնք շատ տեղերում Պարսից թագավորության դեմ ելան:	90
16. Գլուխ Ե. [Այն մասին], թե հոների ազգը ինչ արեց անբողջ Աղվանից երկրում:	92
17. Գլուխ Զ. Վրաց թագավոր Վախթանգի Կյանջա [կատարած] երկրորդ գալստյան մասին:	102
18. An Outline of Aghvan history	113
<b>ՆԱՍԱԿՆԵՐ</b>	
19. 1702г. декабря 7-Письмо католикоза Есая к армиям, проживающим в России.	144
20. 1710г. сентября 20-Письмо Оря к Петру 1 о своих покаянных пожатках.	146
21. 1716г. август 10-Послание папавасарского католикоза Есая к Петру 1.	150
22. 1716г. августа 10*-Перевод послания папавасарского католикоза Есая к Петру 1.	151
23. 1718г. сентября 24-Пережд письмо папавасар- ского католикоза Есая к Милану ватристу	154
24. 1718г. сентября 25-Письмо папавасарского католикоза Есая к Петру 1	156
25. 1718г. сентября 25-Перевод письма папавасарского католикоза Есая к Петру 1	157

26. 1721г. апреля 1-Письмо гандзасарского католикоса Есаи к Петру 1	159
27. 1721г. апреля 5-Письмо гандзасарского католикоса Есаи к Минасу вардапету.	162
28. 1723г. ноября 5-Послание католикоса Есаи и Карабахских меликов к Петру 1-ой оказании военной помощи.	165
29. 1723г. ноября 1-Содержание послания католикоса Есаи к Карабахских меликов к Петру 1 -ой оказании военной помощи	167
30. 1724г. февраля 5- Содержание письмо католикоса Есаи и Карабахских меликов к Петру 1-ой оказании им помощи	169
31. 1724г. Марта 1-Письмо карабахских военачальников к Петру 1 о прибытии Ивана Каранета в Карабах и о необходимости ускорить помощь	170
32. 1724г. марта 5- Письмо католикоса Есаи к Ивану Каралету о раздорах между сыгнахскими старшинами.	171
33. 1724г. сентябрь-октябрь-Перевод письма католикоса Нерсеса к Католикосу Есаи.	172
34. 1724г. октября 18-Послание карабахских католикосов и меликов Петру 1 с просьбой прислать им в помощь войска.	173
35. 1724г. октября 18-Перевод послания карабахских католикосов и меликов Петру 1 с просьбой прислать им в помощь войска.	175
36. 1724г. (осень)-из письма католикоса Есаи к Вахтангу VI и Шахнаваз хану.	177

37. Транскрипция по док. № 304.	179
38. 1725г. марта 10 Послание католикосов Есаи, Нерсеса и карабахских меликов Петру 1 с просьбой о помощи.	180
39. 1725г. марта 10 Послание католикосов Есаи и карабахских военачальников Вахтангу и Шахнаваз хану о предпринятии Турецких войск и об ожидаемой армянами помощи	182
40. 1725г. июля 25 Послание карабахских католикосов и карабахских меликов Есаи к Петру 1 об оказании им военной помощи.	184
41. 1725г. июля 25 Перевод письма католикоса Есаи к Минасу вардапету.	188
42. 1725г. Письмо католикосов Есаи к Ивану Каралету о слухах относительно разгрома Турецких войск под Тауризом.	190
43. 1725г. Ультиматум Омара пашы Карабахским военачальников.	191
44. 1726г. марта 25-Письмо католикоса Есаи дербентскому коменданту.	191
45. 1726г. марта 25-Письмо католикоса Есаи к М.М. Голлицу о положении в Армении.	193
46. 1726г. марта 25-Письмо католикоса Есаи к Минасу вардапету.	194
47. 1726г. мая 28-Письмо католикоса Есаи, карабахских меликов и Ивана Каранета к канцлеру Г.И. Головкину о присылке войск в Шамаху.	196
48. 1726г. июля 19-Письмо католикосов Есаи к Ивану Каралету о прибытии турецкого пашы в Шемаху для установления границы между Россией и Турцией.	197
49. Օմերթարրութիւններ	198

**ԱՂՈՒԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ**  
**Տ. ԵՍԱՅԻ ՀԱՄԱՆ - ՋԱԼԱԵԱՆՑ**

**ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՌՕՏ**  
**ԱՂՈՒԱՆԻՑ ԵՐԿՐԻ**

*Գիրքը տպագրվում է Արցախի Թեմի Գանձասարի  
Տեր-Չոպիաննես քահանա Չոպիաննիսյանի  
հովանավորությամբ:*

**Չամակարգչային  
շարվածքը՝**

**Ա. Ս. Չոպեփյանի  
Ս. Չ. Մկրտումյանի  
Ա. Վ. Չամբարձումյանի**


**Էջադրումը՝**

**Ա. Ս. Չոպեփյանի**

**Սրբագրիչ՝**

**Վ. Տ. Չայրապետյան**

Չանձնված է շարվածքի 02.02.2007թ.: Ստորագրված է  
տպագրության 01.04.2007թ.: Թուղթ՝ օֆսեթ, 60x84/16: Տպագրա-  
կան 14 մամուլ: Տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակ՝ 500:



Տեր Հովհաննես (Հրանտ Ջալալի Հովհաննիսյան):

Ծնվել է 1963թ. Արցախի Մարտակերտի շրջանի Վանք գյուղում: 1990թ. ավարտել է Էջմիածնի հոգևոր ճեմարանը, իսկ 1992թ. փետրվարի 23-ին լուսահոգի վեհափառ ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն առաջինի օրհնու-

թյամբ ձեռնադրվել քահանա: Այնուհետև, Արցախի թեմի առաջնորդ Պարզև Արքեպիսկոպոս Մարտիրոսյանի օրհնությամբ նշանակվել է Գանձասար վանքի վանահայր և հոգևոր հովիվ:

Ամուսնացած է, ունի չորս որդի:

ՄԵՐ ԷԿԵԼԵՍԻՆԻ ՎՐՅ ԷԿՄԻ ՄԻԺԷ ԶԵՆ ՀՈՂՈՒԿ  
 ԺԱՐԱՆԿՆ Մ՝ ՀԼՅԸ՝ ՄԵԿԸ ԿՈՐԾԱՆԵԼԻՎ, ՄՅՈՒՂ՝  
 ՎԵՐՇԻՆԵԼԻՎ:

Դ. ՆԺԴԷՀ